ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(79-րդ տարի) Թիվ-5 (1699) Մայիս 2025

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Հաղթանակները հպարտ ու արժանապատիվ մարդկանց ժառանգությունն են (էջ 1-3)

2- Պատմաքաղաքական

Անի Մելքոնյան
Մայիսյան հաղթանակների ուրացման արշավը Հայաստանի իշխանությունների կողմից (էջ 4-7)

Վանիկ Վիրաբյան
Առաջին հանրապետությունից Խորհրդային հանրապետության անցման ընտրանքի շուրջ (էջ 8-16)

Լիանա Պետրոսյան
Մայիսյան հաղթանակները որպես պատմական և քաղաքական հակամարտության դաշտ՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև (էջ 17-19)

3- Աշխարհաքաղաքական

Նարե Գևորգյան
ԻԻՀ քաղաքական դիրքորոշումը Բենյամին Նեթանյահուի՝ Բաքու նախատեսված այցի վերաբերյալ (էջ 20-21)

4- Ժառանգություն

Նիկոլ Աղբալյան
Մայիս 28 (էջ 22-24)

5- Դեմքեր և դեպքեր

Վարդան Պետրոսյան
Նիկոլ Աղբալյան. ազգային գործիչը (ծննդյան 150-ամյակի առթիվ) (էջ 25-31)

Արմեն Մանուկյան
Նիկոլ Աղբալյանի հրապարակագրությունը 1917 թ. (էջ 32-35)

Ա. Շ.
Սեյրան Խաթլամաջյան (էջ 36)

Հայկազուն Ալվրցյան
Հայապահպանության բերդ մը Հայրենիքին մեջ (էջ 37)

Սեյրան Խաթլամաջյան
Համազգայինների, հայ ազատական մտավորականների դաշնակցության, հայապաշտպանության, ազգապաշտպանության բարեպաշտ ուխտը (էջ 38-39)

Մովսես Ծիրանի
Սեյրան Խաթլամաճեան. Իրաւ մարդն ու իրաւ արուեստագէտը (էջ 40-42)

6- Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Ուժեղ մարդու, ուժեղ հայի ֆենոմենը (էջ 43-45)

7- Դաշնակցական բեմ

Պարգև Ավագեան
Մեղադրուած ենք անցեալապաշտութեամբ (էջ 46-47)

8- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Ե՞ս, թէ՞ չես... դաշնակցական (էջ 48)

Հաղթանակները հպարտ ու արժանապատիվ մարդկանց ժառանգությունն են

Մայիսը ավանդաբար տոնական է եղել մեզ համար, հպարտություն են ներշնչել այս ամսին նվաճած պատմական հաղթանակները, շոշափելիորեն զգացել ենք, որ մեր միասնականությամբ ունակ ենք հրաշքներ գործելու: Այսօր մայիսը և մայիսյան հիշարժան օրերը անցկացնում ենք գլխիկոր, նվաստացած, սեփական կողմնորոշիչներն ու հենարանները կորցրածի շփոթմունքով: Սեփական իշխանության թշնամական լռության պայմաններում մի քանի կազմակերպություններ և անհատներ հիշեցին եռատոնի մասին, և վստահություն հայտնեցին, որ ոչինչ ավարտված չէ, վերադարձ լինելու է, և Շուշիի ազատագրումը կրկնվելու է:

Հայաստանի վարչապետը թոկը վիզը գցած կենդանու պես մեկնեց Մոսկվա և ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը նշող առաջնորդների կողքից քարշ եկավ օտարի, արհամարհվածի, ավելորդի հոգեբանությամբ: Այն պարագայում, երբ հայ ղեկավարը հաղթողների այդ շքերթում իրեն պետք է պահեր ամենահպարտ կեցվածքով, քանի որ ցեղասպանություն ու պատերազմներ տեսած իր ժողովուրդը, թվաքանակի համեմատ, ամենամեծ մասնակցություն, ամենաշատ հերոսներ և զոհեր տված ժողովուրդներից մեկն էր համաշխարհային այդ պատերազմում: Թե՛ այն օրերին, և թե՛ դրանից հետո հայ ժողովուրդը բնազդով գիտակցել է, որ գերմանական ֆաշիզմը թուրքական ֆաշիզմի շարունակությունն է, որ իրենից հեռու թվացող այդ պատերազմում եթե դարձյալ հաղթեր ռասիզմը, հայության վերջին կղզյակն էլ կարող էր խորտակվել դարչնագունած պանթուրքիզմի նոր հորձանքի հարվածից:

Թուրքիան, կրկնելով Առաջին համաշխարհային պատերազմում որդեգրած իր կողմնորոշումը, Երկրորդ աշխարհամարտի ճիշտ նախօրյակին Բարեկամության և չհարձակվելու մասին պայմանագիր կնքեց Նացիստական Գերմանիայի հետ: Մշտական շփումների ընթացքում թուրքերը հավաստիացնում էին նացիստներին, որ նրանք կարող են հաշվարկ անել ապագայի բարեկամ երեք թյուրքական պետությունների աջակցության վրա: Թուրքիայի կողքին երկրորդ այդպիսի պետությունը լինելու էր Անկախ Ադրբեջանը, իսկ երրորդը, ըստ նրանց, կձևավորվեր Ռուսաստանի թուրքացեղ ժողովուրդներից: 1941-42 թվականներին իրատեսական թվացող այս քննարկումներին մասնակցում էին նաև ադրբեջանցիները, մասնավորապես Ադրբեջանի առաջին հանրապետության հիմնադիր Մամեդ Էմին Ռասուլզադեն: Գերմանացիները մշտապես պահանջում էին, որ թուրքերը ներգրավվեն ռազմական գործողությունների մեջ, սակայն վերջիններս, իրենց հատուկ շրջահայացությամբ, ձգձգում էին ժամանակը, թերևս հիշելով նաև Առաջին համաշխարհային պատերազմի

ժամանակ կատարած իրենց ճակատագրական սխալի մասին, ինչը դարձավ Օսմանյան կայսրության խորտակման պատճառ: 1944 թվականին, հատկապես Ստալինգրադի խորտակիչ պարտությունից, Դաշնակիցների կողմից երկրորդ ճակատի բացումից և խորհրդային զորքերի հաղթական մուտքից հետո Եվրոպա, Թուրքիան խզեց գերմանացիների հետ կնքած պայմանագիրը: Բնականաբար, հայ ժողովրդի համար ոչ մի կասկած չկար, թե ֆաշիստական Թուրքիան կոնկրետ, որ ճակատում և ում դեմ էր պատերազմելու: Այդ իսկ պատճառով հայ ժողովուրդն այդ պատերազմին մասնակցեց, ինչպես կմասնակցեր հայրենական պատերազմի՝ ավելի քան 600 000 հայորդիներով, որոնց կեսից ավելին զոհվեցին: Մասնակցեց հերոսաբար, ոչ միայն խորհրդային, այլև դաշնակից պետությունների զորքերի ու դիմադրական շարժումների կազմում, իր սեփական զորամիավումներով հաղթական ուղի անցավ՝ հերոսության հավաքական ու անհատական փայլուն էջեր գրելով: Հայ ժողովուրդը ֆաշիզմի դեմ այս պատերազմում եղավ միասնական՝ իր հայաստանյան և սփյուռքյան թևերով:

Մենք մեր հայրերից սովորեցինք հարգել և հպարտանալ նրանց հայրերի հերոսությամբ, 4 տարի տղամարդկանցից զրկված «Թիկունքի» տոկունությամբ: Հայաստանի գրեթե ամեն բնակավայր ունեցավ հիշատակի հուշարձան, որի վրա արձանագրվեցին տվյալ վայրից նահատակվածների անունները, ստեղծվեցին այս հաղթանակի գործում հայության հերոսական մասնակցությանը նվիրված գրքեր, ֆիլմեր, երգեր, կերպարվեստի ստեղծագործություններ: Հետստալինյան ձնհալի շրջանում այս հաղթանակի զգացողությունը կարևոր հոգեբանական գործոն դարձավ մեջքը շտկող հայ ժողովրդի համար և մաս կազմեց նրա հոգեկերտվածքին:

Հայ ժողովրդի ղեկավարը 80-ամյակի միջազգային տոնակատարությանը մասնակցեց ոչ որպես

հաղթողների ներկայացուցիչ և չցանկացավ զորաշքերթին հայկական ռազմական ստորաբաժանումները մասնակից դարձնելով շեշտել իր ներկայացրած երկրի ավանդն ու դավանած արժեքները: Նույն այդ ղեկավարի ցուցումով, զուգահեռաբար, Հայաստանում պետական քարոզչամիջոցներն ու իշխանության մանկլավիկներն իրականացրին Երկրորդ աշխարհամարտի հաղթողների գնահատականների վերաքննություն, տասնամյակներ անց Հայաստանը, ի դեմս իր ղեկավարների, ըստ էության, կանգնեց ֆաշիզմի ու նրա կողմնակիցների կողքին: Հերթական անգամ Հայաստանը ներկայացնող ղեկավարը հայտնվեց պատմության հակառակ կողմում, արհամարհեց սեփական ժողովրդի պատմական հերոսական անցյալը՝ սրբացած նահատակների հիշատակը, և փորձեց այդ արժեքները վարկաբեկել հանրության աչքում: Ավելին, իրեն ապահովագրելու համար մինչ Մոսկվա մեկնելը վազեց Էստոնիա, որտեղ իր հարգանքն արտահայտեց կոմունիզմի զոհերի հիշատակին (այդ զոհերի թվում նրանք են ովքեր երկրորդ աշխարհամարտի ժամանակ համագործակցեցին նացիստների հետ, իսկ Խորհրդային Միության փլուզումից հետո հերոսացվեցին): Այնինչ, թերևս ճիշտ պահն էր, օրինակ, այդ օրերին Հայաստանում բողոքի գործողություններ կազմակերպել այն բանի համար, որ Ադրբեջանն Արցախում զանգվածաբար պղծում և ավերում է Երկրորդ համաշխարհային պատերազմի նահատակների, հերոսների և մարշալների հիշատակին կանգնեցված հուշարձանները: Այնինչ գերմանական ֆաշիզմի դեմ տարված պայքարի ու հաղթանակի պատմությունն աղավաղելուց, նսեմացնելուց հետո նույն ղեկավարն արդեն բոլորովին այլ տրամադրությամբ օրեր անց հայտնվեց Ալբանիայում և շնիկի պես պոչը խաղացնելով սկսեց պտույտներ տալ, և քծնել դեռ երեկ Արցախի ցեղասպանությունն իրականացրած և այսօր Հայաստանի օկուպացիային ձգտող թուրքադրբեջանական եղբայրության առաջ: Քաղաքական բևեռների միջև գեղջկական խուսանավումներով զբաղված ղեկավարը, այլևս ամեն կողմից գտնվելով ճնշման տակ, ճգնում է բավարարել բոլորի ակնկալիքները և հայտնվել է քաղաքական խամաճիկի դերում:

Մի կողմից, նա ունակ չէ չկատարելու արևմտյան տերերի քաղաքական թելադրանքները, մյուս կողմից, հասկանում է, որ Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացումը տնտեսական, էներգետիկ ու նաև քաղաքական առումներով կործանարար կլինի Հայաստանի համար: Երրորդ և չորրորդ կողմերից նրան պատին է սեղմում թուրքադրբեջանական տանդեմը, այլևս չընդունելով խոստումները կատարելու ժամանակի ձգձգումը՝ հասկանալով, որ բարոյապես և քաղաքականապես սպառված իշխանությունը նվազ հնարավորություն ունի վերընտրվելու և դրանից հետո պարտավորությունները կատարելու համար: Արևմուտքը չի աջակցում նման իշխանությանը թուրքադրբեջանական ճնշմանը դիմակայելու համար, հյուսիսը այլևս չի վստահում կեղծ հավաստիացումներին և մեծացնելով ճնշումը պահանջում է կողմնորոշվել, թշնամին կրակոցներով սպառնում է նոր պատերազմով, իսկ երկրի ներսում ակնառու է համաժողովրդական հակակրանքն ու ակտիվացող դժգոհությունը: Իշխանությունն ինքնապահպանման համար կառչած է գալիք ընտրություններում հաղթելու գաղափարից, բայց տեսնում է, որ դա իր համար անհնարին է դարձել անգամ ամենակոպիտ ու վաղուց մոռացված ընտրակեղծիքների պարագայում: Ամեն դեպքում, թե՛ այլևս անհեթեթության և ծաղրանքի վերածված խաղաղության պայմանագիրը և թե՛ Եվրոպական խաբուսիկ հեռանկարը պահպանելով որպես վերջին խաղաթղթեր՝ երկրի համապարփակ ճգնաժամի պայմաններում, իշխանությունը մտել է նախընտրական ինքնանպատակ իրարանցման մեջ: Երկրի համար ճակատագրական ժամանակներում իշխանության պահպանման այս ճիգի մասին ավելի մանրամասն կխոսենք հաջորդիվ: Թերևս այս թեման չպետք է արծարծվեր «Դրօշակի» մայիսյան համարում, եթե, դժբախտաբար հայկական իրականությունը չլիներ այնպիսին, որպիսին այն դարձել է այսօրվա իշխանության ամբողջական մեղքով ու պատասխանատվությամբ: Կասկած չկա, որ նույն նսեմացնող, իրականությունը կեղծող ու խեղաթյուրող մթնոլորտն է մեզ սպասվում նաև առաջիկայում՝ Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության և պետականության վերականգնման մեծ տոնի օրերին:

Փաստն այն է, որ ներկայիս իշխանական խմբակն անհաղորդ է իրեն ծնած ժողովրդի անցած պատմական ուղուն, նրա մաքառումներին, հերոսական և ողբերգական էջերին: Կար ժամանակ երբ դժվար էր ըմբռնելը, թե այդ ինչպես ծնունդով հայ մարդիկ բոլշևիկի հագուստը հագած եկան այս ժողովրդին ղեկավարելու որպես թշնամու դրածոներ: Այսօր, սակայն, մեր աչքով տեսանք, թե ինչպես օտարի ձեռքի տակ ձևավորված անձինք կարող են սեփական ժողովրդի հանդեպ վերածվել օտարի կամակատարի և

Հայաստանի նկատմամբ նրանց հավակնություններն իրականացնողի:

Իրավունք չունի որևէ ժողովրդի առաջնորդելու այնպիսի ղեկավարություն, որը չի կրում նրա արժեքներն ու իդեալները, չի վստահում նրա ուժին և պատրաստ չէ նրա հետ մաքառելու, այլ կարող է միայն հանձնվել և հանձնել, պարտությամբ և անվերջանալի զիջումներով մուրալ հակառակորդի ողորմածությունը: Այդպիսի իրավունք չունի մի ուժ, որի քաղաքական դավանանքին և հոգեկերտվածքին խորթ ու անընդունելի է պայքարի, ինքնազոհաբերության գաղափարը, որը կառչած է օտարի փեշերից և ունակ չէ գոյացնելու համազգային համերաշխություն:

Պատմական շրջադարձի պահերին ի հայտ եկող առաջնորդների ուժի աղբյուրը բխում է սեփական ժողովրդի ընդերքից, և նա պատմական օրինաչափությամբ ասպարեզ է իջնում ժողովրդին նրա երազած ուղով տանելու և ոչ թե շեղելու վերջինիս պատմական ընթացքը՝ համապատասխան սեփական և արտաքին ըմբռնումների:

Հայ ժողովուրդն իր աստեղային ժամերն է ապրել 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, երբ ազգի դարավոր երազանքներն օրվա սերունդները որդեգրեցին որպես քաղաքական պատվեր և այրեցին իրենց այդ պատմական առաքելության ճանապարհին: Այսօրվա բախտախնդիրների մեղքով ներկա ժամանակը դարձել է նույնքան պատմական, նույնքան ճակատագրական և պահանջում է այդ բեռան տակ մտնելու պատրաստ, հանձնառու տեսակ:

Առջևում մայիսի 28-ի տոնն է: Մայիսի 28-ը պատկանում է նրանց, ովքեր հավատում են, և պատրաստ են գնալու ազգային վերածնության դժվարին ճանապարհով: Նայեք այսօրվա արթնացող հայությանը և կտեսնեք, որ նա փակում է դռները հայրենիքի տեսակներին, արժեքային ու հոգևոր ըմբռնումներին խորթ, բարոյապես սպառված, ոչնչապաշտ, կամակատար ու սողացող տեսակի առջև: Մայիսի 28-ը հպարտ ու արժանապատիվ մարդկանց ժառանգությունն է, մնացածը կրողն են բոլշևիզմի կամ կոսմոպոլիտիզմի պիղծ, քսու և ապականված մտածողության: Այո, մենք ականատես ենք, թե ինչպես է դանդաղ ուռճանում հայ ժողովրդի ըմբոստանալու համաժողովրդական ներուժը՝ ինչը որ տեղի ունեցավ 107 տարի առաջ, ճիշտ այս օրերին: Քաղաքական մուրացկաններն աշխարհի հզորների և անգամ սեփական ժողովրդի դահիճների ոտքերն ընկած աջակցություն են աղերսում հայ ժողովրդից իրենց պաշտպանելու համար և իշխանության դիմաց գրավ են դնում Հայաստանի ճակատագիրը՝ այնպես, ինչպես տեղի ունեցավ այն նույն տարիներին: Բայց ինչպես այն ճակատագրական օրերին, քաղաքական դիմակայության այս նոր Սարդարապատում ևս հաղթելը վիճակված է հայ ժողովուրդին: Առջևում մեծ մարտահրավերներ կան և դժվարին անելիքներ, բայց այդ ճանապարհը սկսվում է երկիրն օտարի հինգերորդ շարասյունից ազատագրելուց, և այդ ազատագրման մտասևեռումն ամեն օր ավելի է ամրապնդվում Սարդարապատ կերտած ժողովրդի այսօրվա սերունդների հոգում: ■

Մայիսյան հաղթանակների ուրացման արշավը Հայաստանի իշխանությունների կողմից

Անի Մելքոնյան
Պատմաբան

Վերջին մեկ դարում մայիսը հայոց պատմության մեջ նշանավորվել է, որպես հաղթանակների ամիս, հաղթանակներ, որոնք հայ ժողովրդի համար վճռորոշ նշանակություն են ունեցել: Այդ վճռորոշ հաղթանակներից առաջինը՝ 1918 թ. մայիսին էր, երբ ծառացած էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը:

Ցեղասպանված հայ ժողովուրդն իր մեծ ողբերգությունից հետո կանգնել էր «Ազատություն կամ մահ» հրամայականի առաջ, և երբ անխուսափելի էր թվում մահը, կարողացավ հավաքել ուժերն ու դիմակայել թշնամուն՝ ինչի շնորհիվ նրան հաջողվեց 600-ամյա չգոյությունից հետո նորից Հայկական լեռնաշխարհում իր պետականության խարիսխը գցել:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Լենինը Ռուսաստանը դուրս էր բերել պատերազմից և «խաղաղության» թեզի ներքո ռուսական զորքերը ետ էր կանչել ռազմաճակատից, ինչի հետևանքով թուրքական մեծաքանակ ուժերի դեմ մնացել էր միայն հայկական փոքրաթիվ զինուժը:

Օգտվելով ռուսների հեռանալուց՝ 1918 թ. սկզբին թուրքական զորքերը լայնածավալ հարձակման անցան, մեկը մյուսի ետևից գրավելով Արևմտյան Հայաստանի բոլոր բնակավայրերը և մայիսի 15-ին հասնելով Ալեքսանդրապոլ:

Մայիսի 19-ին թշնամին ներխուժեց Արարատյան դաշտ: Արամը զորավար Մ. Սիլիկյանին հրահանգեց չնահանջել և պահպանել դիրքերը՝ հակառակը հարվածի տակ կդներ Երևանը: Կարծես թուրքական զորքերի ճանապարհը դեպի Հայաստանի սիրտը բաց էր: Հայ ժողովրդի գլխին կախվեց անխուսափելի բնաջնջման վտանգը: Այդ մասին մայիսի 23-ին իր կառավարությանն ուղարկված հեռագրում շեշտում էր նաև Բաթումում գերմանական պատվիրակության ղեկավար Ֆոն Լոսովը՝ գրելով հետևյալը. «Թուրքական քաղաքականության նպատակն է, ինչպես ես միշտ կրկնում եմ, մշտապես գրավել հայկական շրջանները և բնաջնջել հայերին: Թալեաթի և Էնվերի դրան հակառակ խոսքերն անարժեք են»[1]:

Ձարգացնելով առաջխաղացումը՝ թշնամին 1918 թ. մայիսի 21-ին գրավել էր Սարդարապատ գյուղն ու կայարանը: Հենց նույն օրը գեներալ Մ. Սիլիկյանն ու նրա սպայակույտի պետ փոխգնդապետ Ա. Վեքիլյանը վճռեցին թշնամուն վճռական հակահարված տալ և մշակեցին գործողության պլան[2]:

Արդյունքում, մայիսյան հերոսամարտերն ավարտվեցին հայ ժողովրդի հաղթանակով, և ծնունդ առավ Հայաստանի Հանրապետությունը:

Բայց 1918 թ. մայիսյան հերոսամարտերը թողնենք և անցնենք հաջորդ կարևոր հաղթանակին՝ տարած Երկրորդ աշխարհամարտում 1945 թ. մայիսի 9-ին, որի մեջ իր ուրույն դերն ունեցավ հայ ժողովուրդը:

Ինչո՞ւ էր կարևոր այս հաղթանակը հայ ժողովրդի համար, եթե Հայաստանի տարածքում ռազմական գործողություններ չէին ընթանում: Նախ՝ այն պատճառով, որ Թուրքիան այդ պատերազմում Գերմանիայի դաշնակիցն էր, և փաստ է, որ Հայաստանի սահմանների մոտ կենտրոնացած թուրքական զինուժը սպասում էր «կանաչ լույսի» Հայաստան մտելու համար, իսկ այդ կանաչ լույսը կարող էր լինել Ստալինգրադում գերմանական զորքերի հաղթանակը, հետևաբար պաշտպանելով Ստալինգրադը՝ հայերը պաշտպանում էին Հայաստանը, ինչը այսօր, որքան վերացական է թվում, նույնքան իրական էր այն օրերին:

Հաջորդը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակը հայության համար նաև հոգեբանական նշանակություն ուներ. երեք տասնամյակ էր անցել Հայոց ցեղասպանությունից, որը տեղի էր ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ 1915 թ.: Այդ ժամանակ Գերմանիան Թուրքիայի դաշնակիցն էր և գործուն մասնակցություն էր ունեցել արևմտահայության տեղահանության գործընթացին: Բանն այն է, որ «Գերմանիայի քաղաքական շրջանակներում գտնում էին, որ Արևմտյան Հայաստանում թուրքական միատարրություն ստեղծելու նպատակով անհրաժեշտ է

հայերին զանգվածաբար վերաբնակեցնել Բաղդադի երկաթուղու շինարարության տեղամասերում, որով հնարավոր կլիներ լուծել երկու կարևոր հարց. երկաթուղու կառուցումը կապահովվեր ձեռներեց ու որակյալ բանվորական ուժով, մյուս կողմից՝ Արևմտյան Հայաստանում կթուլանար ռուսական ազդեցությունը: Մասնավորապես, հայտնի գերմանացի քաղաքագետ Պաուլ Ռորբախը գտնում էր, որ «…պետք է Արևմտյան Հայաստանից դուրս հանել բնիկ հայերին և նրանց տեղը վերաբնակեցնել Թրակիայից և Ռուսաստանից բերած մահմեդականների, և այդ դեպքում Հայաստանը մեկ հարվածով կպոկվի Ռուսաստանից»»[3]:

Հայերի հիշողության մեջ դեռ թարմ էին այս իրադարձությունները, և հայ ժողովուրդն իր կռիվն ուներ՝ Հայոց ցեղասպանությանը մեղսակից Գերմանիայի հետ, ահա թե ինչու հայ ժողովուրդը ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմին, իսկ Բեռլինում պարած քոչարին ոչ թե Ռուսաստանի կամ Երկրորդ աշխարհամարտում նրա դաշնակիցների հաղթանակի համար էր, այլ հիշեցում էր Գերմանիային, որ չնայած իր դաշնակից Թուրքիայի մեծ ոճրին, դեռ հայ ու Հայաստան կա, և պատասխան էր Հիտլերի այն հարցի թե. «Ո՞վ է հիմա հիշում Հայոց ցեղասպանության մասին»[4]:

Իսկ հիշողներ կային, և այդ հիշողությամբ էլ՝ 1992 թ. մայիսին կերտվեց հայոց նորագույն շրջանի մեծագույն հաղթանակներից մեկը՝ Շուշիի ազատագրումը, որը բեկումնային եղավ Արցախի ազատագրական պայքարում, որովհետև, ինչպես ժամանակին իրավացիորեն շեշտել է Ջորավար Դրոն, «ով տիրում է Շուշիին, նա տիրում է Ղարաբաղին»[5]:

Իսկ Ղարաբաղին (Արցախին) տիրում էին հայերը, և այնտեղ կանգնած էր Արցախի Հանրապետության մայիսի 9-ին հիմնադրված բանակի զինվորը, մինչև որ Հայաստանում իշխանության եկան մարդիկ, ովքեր որևէ կապ չունեին մայիսյան հաղթանակների հետ, և կարճ ժամանակ անց սկսվեց հաղթանակների արժեզրկման արշավը: Ազատամարտիկ ու հրամանատար կոչված մեկը՝ 2018 թ. նոյեմբերին Թալինում «թավշյա հեղափոխության», այսպես կոչված, «հաղթանակի» մասին խոսելիս, հայտարարեց. «այս հաղթանակն ավելի կարևոր էր, քան Արցախյան ազատամարտը»[6], դե իսկ 2019-ին Աննա Հակոբյանը իր կեղծ «խաղաղության» արշավում հայտարարեց. «հակամարտության պատմության այս տարիների ընթացքում բազմաթիվ զոհեր ենք ունեցել երկու կողմից էլ, հազարավոր զոհեր ենք ունեցել, բայց մենք նրանց կյանքը զոհաբերել ենք հանուն ոչնչի»[7]:

Այսինքն, այն հաղթանակը, որը հազարամյակների պարտություններից հետո իր ուժերով կռել էր հայ ժողովուրդը, ազատագրելով պատմական հայրենիքի մի փոքրիկ հատվածը՝ ըստ Հայաստանի իշխանության օղակներում հայտնվածների՝ ոչինչ էր:

Իհարկե ամեն ինչ այսքանով չավարտվեց, դրան հաջորդեցին Ադրբեջանի հետ պայմանավորված պատերազմը, Շուշիի և Հադրութի՝ ինչպես նաև Արցախի Հանրապետության 75%-ի դավաճանական հանձնումը Նիկոլ Փաշինյանի կողմից, իսկ 2023 թ. Հայաստանի իշխանության համաձայնությամբ՝ Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության մնացած հատվածի հայաթափումն ու զավթումը:

Արցախը, սակայն, ամբողջությամբ հանձնելուց հետո էլ, Հայաստանի իշխանությունը չդադարեցրեց

Հայ զինվորները Բեռլինում

հաղթանակների ուրացման իր կազմակերպած արշավը:

Այդ ուրացման արշավի ամենազավեշտալի դրսևորումներից մեկն էլ 44 օր շարունակ Հայաստանի իշխանությունների ձեռքին հայ ժողովրդին խաբելու խոսափող դարձած՝ այսպես կոչված, ռազմական փորձագետ Արծրուն Հովհաննիսյանի հայտարարությունն էր «Գերմանիան ուներ ծրագիր, Ստալինգրադից հետո իջնի և վերցնի Կովկասը, ապա գրավեր Թուրքիան, որն էլ ենթադրում էր միացյալ պատմական Հայաստանի ստեղծում»[8]- խոսքը հավանաբար «Գերտրուդա» անունով հայտնի ծրագրի մասին է, որի վերաբերյալ, ինչպես հասկացանք, Արծրուն Հովհաննիսյանը կամ թյուր տեղեկություններ ունի, կամ առհասարակ չգիտի թե ինչի մասին է խոսքը:

Իսկ ի՞նչ էր իրականում «Գերտրուդա» ծրագիրը. «Իրանի և Իրաքի նավթային շրջանների գրավման նպատակով գերմանական բանակի գլխավոր շտաբի մշակած պլանը՝ ողջ Մերձավոր ու Միջին Արևելքը, ինչպես նաև Հնդկաստանը նվաճելու՝ Հիտլերի ընդհանուր մեծ պլանի մի մասը: Այն ելնում էր նախապես խորհրդային Կովկասը նվաճելուց և նախատեսում էր երկու տարբերակ. եթե Թուրքիան հանդես գար Գերմանիայի կողմից, ապա ենթադրվում էր թուրքական ու գերմանական զորքերի համատեղ հարձակումը Իրանի և Իրաքի վրա: Իսկ եթե Թուրքիան չհամաձայներ հանդես գալ Գերմանիայի կողմից, ապա այդ դեպքում ենթադրվում էր նախապես ջախջախել ԽՍՀՄ-ի սահմանին գտնվող թուրքական բանակը, այնուհետև հարձակումը շարունակել առանց թուրքերի: Պլանի իրականացման համար ենթադրվում էր գործի դնել 9 դիվիզիա, այդ թվում՝ մեքենայացված և տանկային, նախատեսվում էր նաև օդից օժանդակություն: Նշված զորքերը երեք զորասյուներով պետք է թուրքական սահմանին հասնեին կովկասյան լեռնանցքներով»[9]:

Ինչպես տեսնում ենք «Միացյալ Հայաստանի» ստեղծման վերաբերյալ որևէ խոսք այս ծրագրում չկա, իսկ «Գերտրուդա» գործողության մշակումն ուներ այլ պատճառներ. «Բանն այն է, որ 1939 թ. կնքված անգլո-թուրքական բարեկամության պայմանագրի պատճառով նկատելիորեն վատացել էին Թուրքիայի և Գերմանիայի հարաբերությունները: Այդ կապակցությամբ Հիտլերը հետ էր կանչել Թուրքիայում աշխատող գերմանացի մասնագետներին (այդ թվում՝ զինվորական ակադեմիայի դասատուներին) և միջոցներ ձեռնարկել Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության գործունեությունն ուժեղացնելու ուղղությամբ»[10]:

Հիտլերի նպատակն այն էր, որ ստիպի Թուրքիային դաշնակցելու Գերմանիայի հետ, չհամաձայնելու դեպքում՝ ջախջախել Թուրքիային:

Ասենք, որ ի վերջո Գերմանիան չեղարկեց «Գերտրուդա» ծրագիրը, իսկ Ստալինգրադում Գերմանիայի պարտությունից հետո՝ Թուրքիան 1944 թ. կնքեց Անգլիայի հետ բարեկամության երկրորդ պայմանագիրը:

Ինչ վերաբերում է ԽՍՀՄ-ի վերաբերյալ դիրքորոշմանը, ապա թուրքերը պատրաստվում էին պատերազմի ԽՍՀՄ-ի հետ, և բնական է, որ կհարձակվեին հենց Այսրկովկասով, այսինքն՝ կփորձեին օկուպացնել Հայկական ԽՍՀ-ն:

Հարց է առաջանում, եթե 1942 թ. խորհրդային զորքերը պարտվեին Ստալինգրադում, և Թուրքիան Գերմանիայի հետ դաշնակցելով հարձակման անցներ Կովկասում՝ ի՞նչ էր լինելու փոքրիկ Խորհրդային Հայաստանի և նրա սակավաթիվ բնակչության հետ…., կարծում ենք պարզ է: Բայց այստեղ տարօրինակն այն չէ, որ Հայաստանի ներկայիս իշխանություններն ուրանում են մայիսյան հաղթանակները, փորձելով ցույց տալ, որ 1945 թ. Հայրենական մեծ պատերազմում ԽՍՀՄ տարած հաղթանակի գործում հայ ժողովուրդը չի ունեցել այն մեծ ավանդը, որն իրականում ունի՝ պատերազմին տված 600.000 կովող ուժով, 300.000 զոհով, ԽՍՀՄ մեկ կրկնակի հերոսով (Նելսոն Ստեփանյան) և հինգ հայազգի մարշալներով: Ոչ էլ այն, որ նույն իշխանությունը մայիսի 9-ին «պատահաբար» «մոռանում» է Շուշիի ու Արցախի պաշտպանության բանակի մասին, այլ այն, որ իշխանության ոչ պաշտոնական խոսափողն այդ ուրացման քաղաքականությունը շղարշում է Միացյալ Հայաստանի մասին ակնարկով:

Իսկ ո՞ր Միացյալ Հայաստանի մասին է խոսում պարոնը, ա՞յն, որը Նիկոլ Փաշինյանն ուրացել է՝ հայտարարելով «Արևմտյան Հայաստանն Արմավիրն է, Թալինն է, Մարալիկն է. սրանից դուրս չկա եւ չի կարող լինել Արևմտյան Հայաստան»[11]: Ուրեմն Գերմանիան Խորհրդային Հայաստանին էր միացնելու արդեն իսկ Հայաստանի տարածքում գտնվող Արմավիրը, Թալինն ու Մարալի՞կը, եթե դրանից դուրս, ինչպես պնդում է գերագույն գլխավոր կոլա-

Շուշին ազատագրողները

բորացիոնիստը, «չկա և չի կարող լինել» Արևմտյան Հայաստան, կամ «Գերտրուդա» ծրագրից բխող ենթադրյալ Միացյալ Հայաստանի մասին խոսող իշխանամերձ շրջանակները հակադրվում են Նիկոլ Փաշինյանի այն մտքին, որ «Եթե մենք բանակը բարեփոխում ենք Արարատի ու պատմական Հայաստանի խոսույթի ներքո, մեզ ոչ ոք զենք չի վաճառի եւ ռազմական համագործակցություն չի հաստատի, մենք ինքներս մեզ կդարձնենք թիրախ»[12]:

Համոզված ենք, որ իշխանամերձ ոչ մի շրջանակ չի հակադրվում Նիկոլ Փաշինյանի մտքերին ու թուրքամետ քաղաքականությանը, ուրեմն ինչո՞ւ է Հայաստանի հայրենուրաց իշխանության և նրա մերձավոր շրջանակների մեջ «հայրենասիրական» զեղումներ առաջացել, այն էլ ոչ ավել, ոչ պակաս՝ Միացյալ Հայաստանի վերաբերյալ: Միգուցե մարդկանց խաբելու, թմրեցնելու, «գլխի տակ փափուկ բարձ դնելով», այսպես կոչված, «իրական» Հայաստանից հերթական տարածքների հանձնման նպատակի՞ց է բխում այդ «հայրենասիրությունը», թե՞ առաջնորդվելով «հայրենասիրությունը տականքների վերջին հանգրվանն է» սկզբունքով դավաճանների իշխանությունը փորձում է իր համար դրական կերպար ձևավորել, հաջորդ տարի կայանալիք ընտրություններին ընդառաջ:

Ուստի հայ ժողովուրդը պետք է շատ ավելի զգոն և խելացի գտնվի ու իր հայրենիքը թուրքին վաճառող, իր հաղթանակները արժեզրկող, իր պատմությունը կեղծող, իր ցեղասպանությունը կասկածի տակ դնող իշխանությանն ուղարկի այնտեղ, ուր հարկ է, ցույց տալով, որ հայն ու Հայաստանը դեռ գոյություն ունեն և օտարահպատակներին թույլ չեն տալու որոշել հայության ճակատագիրը: ■

Ծանոթագրություններ

1. Ասրյան Ա., Արամ Մանուկյան կյանքը և գործը, Ե., 2008., էջ 186:
2. Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 193
3. https://westernarmeniatv.com/hy/history_am/%D5%A1%D6%80%D6%87%D5%B4%D5%BF%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%AB-%D5%B7%D5%B8%D6%82%D6%80-79/
4. https://blognews.am/arm/news/657803/ov-e-hima-hishum-hayeri-cexaspanutyan-masin-inch-aritov-hitlern-artasanec-ays-khosqern-u-inchu-dranic-heto-hazaravor-mardik-spanvecin.html
5. https://yerkir.am/hy/article/2025/05/08/292017
6. http://asekose.am/am/post/hexapoxoutyan-haxtanakn-aveli-kareor-er-qan-arcaxyan-azatamarte-sasoun-miqayelyan
7. https://hayeli.am/?p=129739&l=am
8. https://tert.am/am/news/2025/05/10/arcrun-hovhannisyan/4230831
9. https://www.irates.am/hy/1558397029
10. Նույն տեղում:
11. https://armlur.am/1432401/
12. https://hraparak.am/post/7dd9001e7f8f711d98b407ee4ce0

Առաջին հանրապետությունից Խորհրդային հանրապետության անցման ընտրանքի շուրջ

Վանիկ Վիրաբյան
Պատմ. գիտ. դոկտոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

Վերջին ժամանակների գիտաքաղաքական և պատմագիտական գրականության մեջ, Հայոց պատմության նորագույն շրջանի հիմնարար խնդիրների դասավանդման գործում տարածում է գտել մի թյուր, կեղծ գիտական տեսություն: Անսկզբունքային մոտեցում է ցուցաբերվում հայ ժողովրդի պատմաքաղաքական ու պետականության զարգացման նորագույն շրջանի կարևորագույն պատմափուլերից մեկի՝ հայկական պետականության վերածնունդով պայմանավորված և Սարդարապատյան հերոսամարտի մայիսյան փոթորկալից հորձանուտում ծնված հանրապետական տիպի հայկական պետության նկատմամբ, որը եռափուլ զարգացում ապրեց՝ իր վերելքներով և վայրէջքներով հանդերձ:

Այն հատկապես ցայտուն դրսևորվեց 1980-ական թթ. վերջին-1990-ական թվականների կեսերին՝ նորանկախացման առաջին փուլի ընթացքում: Այն տեսակետն էր առաջարկվում, և այսօր էլ այդ թյուր մոտեցումների կողմնակիցները պնդում են, որ Հայաստանի Առաջին հանրապետությանը (1918 թ. մայիս - 1920 թ. դեկտեմբեր) հատուկ են եղել պետությանը բնորոշ բոլոր հատկանիշները, իսկ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը՝ ոչ[1]: Ելնելով պատմահասարակական զարգացման ոչ իրատեսական, միակողմանի և թյուր ըմբռնումից, այդ հեղինակները, «հիմք» ընդունելով կուսակցական-քաղաքական նեղ նպատակադրումները, մերժում են այն, ինչ միանշանակ բացասման ենթակա չէ: Դրանով իսկ խախտվում է պատմական ժամանակագրությունը, աղավաղվում են պատմաքաղաքական ակնհայտ իրողությունները, խզվում է դեպքերի ու զարգացումների պատմաքաղաքական շղթան, տեղը ոեալ ոչինչ չի դրվում, ժառանգորդության ոչ մի կապ չի նշվում հնի ու նորի միջև:

Դրան զուգահեռ կա հեղինակների մի այլ խումբ, որն այդ տեսակետը չի բաժանում[2]: Հանրահայտ է, որ երբ պատմությունը փորձում են «մեկնաբանել» ոչ գիտակ մարդիկ, ապա պատմության վիճակը բավական ողբալի է դառնում: Առաջանում է մի «նոր» կեղծ գիտական տեսություն (ասել է՝ հակագիտություն), որը հավակնում է ճշմարիտ և իսկական պատմության դեր կատարել: Տվյալ դեպքում այս հեղինակները, ըստ երևույթին, ունեն պատմության իրենց յուրահատուկ ըմբռնումը, որը սակայն, ամենևին էլ չի կարելի ընդունել որպես ճշմարտություն: Այս առումով միանգամայն բնութագրական է ՀՅ Դաշնակցության հիմնադիրներից ու գաղափարախոսներից մեկի՝

Քրիստափոր Միքայելյանի «Ամբոխային տրամաբանություն» աշխատության մեջ արտահայտված հետևյալ հիմնարար միտքը. ***«Ով սովոր է հասարակական երևույթները քիչ շատ կանոնավոր կերպով ընդհանրացնելու, և իհարկե, գիտե, թե որքան ուժեղ է իրերի ընդհանուր հոսանքը պարզմական առանձին դեպքերի, առանձին անցքերի դեմ. նա գիտե, որ փարիներն ու փասնյակ փարիները, որոնք կարող են նշանակություն ունենալ անհատի կյանքում, պարզության մեջ մի-մի վայրկյաններ են լոկ, որոնց հիման վրա դժվար է որևէ գուշակություն անել, նա գիտե, թե որքան անիմաստ է ամբոխային տրամաբանության սովորական ընթացքը.- ամեն երևույթ դարձել այն անմիջական փոփոխությունների համեմատ, որ ստանում է անհատը կյանքի այս կամ այն հարվածներից, նա գիտե, ինչ է նշանակում խոսել «ատիթի» կամ «պատրվակի» մասին այնտեղ, ուր կան ներքին, հիմնական պատճառներ»[3]: Ամփոփելով միտքը՝ հեղինակը գալիս է խիստ տրամաբանական եզրահանգման. «Բայց եթե պարզմական երևույթները պետք է քննվեն ոչ թե իրենց ժամանակի և տեղի հետ սերտ կապված պայմաններում, այլ ցանկությունների տեսակետից, ո՞ւր կարող են վերջանալ այս տեսակ գանգատները սահմանները»[4]:***

Ո՞րն է այս դիտարժան նախաբանի իմաստը: Խնդիրն այն է, որ որոշ հեղինակներ, Հայաստանի Առաջին հանրապետությունից հետո, որը պատմական դեպքերի ու իրադարձությունների երկաթե տրամաբանությամբ իր սկիզբն առավ 1918 թ. մայիսյան՝ Սարդարապատյան հերոսամարտերի ընդերքում և

իր որոշակի ավարտն ունեցավ 1920 թ. դեկտեմբերին, թուրք-հայկական աղետալի պատերազմի և մեծ տերությունների կողմնակալ դիրքորոշման հետևանքով դադարեց գործել, ժամանակագրական առումով ոչինչ չեն տեսնում: Նրանք չեն ուզում տեսնել, որ ***Հայաստանի Երկրորդ հանրապետությունը,*** որը ստեղծվեց Ալեքսանդրապոլի՝ հայերի և թուրքերի միջև կնքված 1920 թ. դեկտեմբերի 2-ի պայմանագրի հետևանքով և Հայաստանի դաշնակցական կառավարության և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված՝ Երևանյան համաձայնագրի հիման վրա և գոյատևեց մինչև 1991 թ. սեպտեմբերը, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն էր: 1921-1991 թթ. Հայաստանի Երկրորդ հանրապետությունում կուտակվեց հասարակական-քաղաքական ինքնագիտակցության և ինքնակառավարման եզակի փորձ, առանց որի անհնարին կլիներ Երրորդ հանրապետության կայացումը: ***Իսկ 1991 թ. ծված հանրապետությունը հանիրավի դիտում են որպես Երկրորդ, այլ ոչ թե Երրորդ հանրապետություն:***

Ուշագրավ է, որ դեռ 1919 թ. դեկտեմբերի 10-ին կառավարության նիստի ժամանակ ունեցած ելույթում ներքին գործերի նախարար Ա. Գյուլխանդանյանը, որը երազում էի իր ղեկավարած կառույցն ուժեղացնելու համար համալրել համալսարանական կրթությամբ արհեստավարժ կադրերով, բավական պատկերավոր ու հիմնավոր պատճառաբանելով վերափոխումների անհրաժեշտությունը, ասում էր. ***«Հայ ժողովուրդը, որը միշտ հիացել է իր պարմությամբ, դարերով կռվել է իր քաղաքական ազատության համար, և երբ այսօր Հայաստանի անկախությունը փաստ է, ժողովուրդը յուր ամբողջությամբ չի ընդունում..., որ այժմյան Հայաստանի Հանրապետությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ շարունակությունը նվիրական պարմական Հայաստանի և որ տարբերվում է հենց միայն նրանով, որ այժմ... հաստատվել են հանրապետական կարգեր: Բայց որպեսզի հայ ժողովուրդը զգա և գիտակցի, որ նա ապրում է յուր նախնիների հարազատ հողի վրա, որ նա ուրեմն մեր երկրի տերն ու տիրականն է եղել հազարավոր տարիներով, է այժմ և պիտի լինի միշտ, անհրաժեշտ է նրա՝ այժմյան մեր երկրի մասին ունեցած մտապատկերները կապել անցյալի հետ: Այդ բանը խոշոր քաղաքական նշանակություն ունի»***[5]:

Տարբեր բնագավառների մի շարք «մասնագետներ», հրապարակախոսներ, քաղաքական առաջնորդներ ոչ միայն մի ամբողջ ժողովրդի տասնամյակների պատմությունն են անտեսում, այլև տեսնում են միայն պետության (հանրապետություն, միապետություն, սահմանադրական միապետություն և այլն) սև-սպիտակ, բուրժուական և ոչ բուրժուական, սոցիալիստական, կապիտալիստական լիարժեք և ոչ լիարժեք, բռնատիրական և ընկերավարական տիպերը, որոնց տարբերությունները այնքան էլ մեծ չեն, բայց հաճախ խիստ անշահավետ և անհեռանկարային են «մեծ քաղաքականության», գոյատևման ու զարգացման տեսանկյունից:

ՀՀ Կառավարության նստավայրը (1918-1920 թթ.)

Էլ չենք ասում այն մասին, որ չի գտնվի քիչ թե շատ լուրջ որևէ մասնագետ, որ համարձակվի, ասենք թե, նույնիսկ Արտաշիսյան հարստության ողջ ժամանակաշրջանը դիտել միայն որպես լիարժեք հզոր և անկախ պետականության (մեր քննարկման առումով ժամանակաշրջանը և պետության տիպը, ձևը՝ միապետական-հանրապետական, բուրժուական-սոցիալիստական, բռնատիրական-ժողովրդավարական, պետք է երկրորդվեն և կարևորություն չունենան, ասենք դա իրականում այդպես էլ կա) զարգացման պատմություն: Այդ նույնը կարելի է ասել նաև հայոց պետականության զարգացման մյուս բոլոր փուլերի մասին: Հետևաբար, պատմությունն արժևորելիս չի կարելի առաջնորդվել մտացածին պատմական կատեգորիաներով, արհեստածին ու կամայական չափանիշներով և պետություն չտեսնել այնտեղ, որտեղ այն եղել է՝ անկախ դրա քաղաքական կարգից:

Հարկ է ընդգծել, որ հայ ժողովրդի զարգացման պատմության բարձրակետը համարվող Տիգրան Մեծի ժամանակաշրջանի պետության մասին խոսելիս մենք շեշտում ենք հզորության պահն ամբողջովին վերցրած, սակայն, ասենք, Տիգրան Մեծի թուլության կամ հայոց պետականության թուլության պահերը, Հռոմի գերիշխանությունն ընդունելը, պատմապահի թելադրանքով պարտադրված փոխզիջումների գնալը և այլն, բոլորովին էլ չենք դիտում որպես պետության չգոյություն, այլ ընդամենը՝ տկարության, ժամանակավոր թուլության պահ:

Եթե հարցին մոտենանք գոռեհիկ պատմագիտության տեսանկյունից, ապա շատ ավելի բացասաբար պետք է արտահայտվենք Արշակունիների ժամանա-

Հայկական բանակը Էջմիածնում (1919 թ.)

կաշրջանի պետության մասին, պետություն, որի գահակալներն օտար ծագում ունեին: Կարելի՞ է արդյոք ենթադրել, թե դա հայկական պետականության զարգացման հերթական փուլ չէր, թեկուզև որոշակի առումով՝ ոչ կատարյալ և խեղված: Ամենևին: Չէ՞ որ հենց այս ժամանակաշրջանում Մեծն Մեսրոպ Մաշտոցն արարեց Հայոց գրերը՝ հենվելով պետականության հուսալի կառույցի վրա՝ ի դեմս Վռամշապուհ արքայի, որը դրա խորհրդանշողներից էր, և հոգևոր ուժի՝ Սահակ Պարթևի վրա, ի դեմս եկեղեցու, որպես հոգևոր կառույցի: Ժողովուրդների զարգացման պատմությանը քիչ թե շատ տեղյակ յուրաքանչյուր ոք գիտե, որ լինում են պետության զարգացման վայրէջքների և վերելքների պահեր: Այսինքն, չի կարելի բացարձակացնել խմբակային, նեղ ու ոչ լիարժեք գնահատականները ***հարմարեցնելով ամբոխային տրամաբանության կամ աշխարհաքաղաքական վայրիվերումների պահանջներին և պատեհապաշտությամբ թելադրված պարտադրանքին***:

Առաջին հայկական պետություն-հանրապետությունը մայրամուտ ապրեց 1920 թ. դեկտեմբերին, սակայն փոխարինվեց սոցիալիստական-կոմունիստական հանրապետությամբ: Իր բազմաթիվ ստվերոտ և անընդունելի, ժխտման ենթակա կողմերով հանդերձ, նա մի պահ ուներ զինված ուժեր՝ բանակ, 1921 թ. ստեղծված ռազմական դպրոց, պետական զանազան հաստատություններ, նախարարություններ, իրավապահ և անվտանգության մարմիններ, անգամ Սահմանադրություն: Վերջապես, այդ պետությունը, ուներ սահմաններ և դրոշ, բավականին խորհրդանշական պետական զինանշան, օրհներգ, մայրենի լեզվով դասավանդվող և պետության կողմից հովանավորվող ու ղեկավարվող կրթական գրեթե կայացած, հաջող համակարգ և այլն: Անշուշտ, այդ Սոցիալիստական հանրապետությունը գտնվում էր Մոսկվայի չթուլացող ազդեցության և թելադրանքի ոլորտում, այնտեղից գալիս էին բացասական և դրական բնույթի հրահանգչական և իրավական ակտեր, սակայն չպետք է մոռանալ, որ բացարձակ անկախ և ազատ պետություններ երբեք չեն եղել, (որպես օրինակ, կարելի է վկայակոչել թեկուզև ներկայիս արևմտաեվրոպական երկրների գերակշռող մեծամասնությանը, որոնք իրենց պատմաքաղաքական զարգացումը ներկա փուլում իրագործում են միասնական Եվրոպայի շրջանակներում, և շատ դեպքերում ուղղորդվում են ԱՄՆ-ի կողմից, շատ դեպքերում էլ կորցնելով ինքնուրույն պետական վճիռներ կայացնելու իրավունքը): Եղել է մեծ, հերոսական, հաճախ ռոմանտիկ ձգտում, մանավանդ երբ խոսքը վերաբերում է փոքրաքանակ ժողովուրդներին: Սակայն դա ամենևին էլ չի նսեմացնում և ոչ մի ժողովրդի պատմություն: Հետևաբար, կարծում ենք, տեղին է շեշտել, որ ***այդ «ժամանակաշրջանի համար Հայաստանի խորհրդայնացումը պետք է դիտել որպես պարտմական իրողություն, աշխարհաքաղաքական դարաշրջանի հերևանք, թեկուզև սոցիալիստական հեռանկարի առումով: Ռուսաստանում իշխանության ղեկին անցած բոլշևիզմն արդեն 1920 թ. գորեղ գործոն էր, և դրա հետ հաշվի չհարել հնարավոր չէր, առկա հնարավորությունների ու ուժերի անհամաչափության պարճառով:***

1920 թ. սկզբներին ակնհայտ դարձավ. խորհրդային ուժերը հաղթող էին դուրս եկել Անտանտի կողմից բացահայտորեն ֆինանսավորվող և ռազմապես աջակցվող սպիտակ ուժերի դեմ առճակատումից:

Նույն թվականին բոլշևիկյան ուժերը սրընթացորեն տեղաշարժվեցին դեպի Կովկաս՝ այն վերանվաճելու հստակ մտադրությամբ, հանձինս որի՝ ՀՀ դաշնակցական առաջնորդները տեսան մի նոր լուրջ վտանգ: Ակնհայտ էր, որ Խորհրդային Ռուսաստանն անվերապահորեն չէր աջակցի դեպի Արևմուտք հակված, բոլշևիկների դեմ անսքող անբարյացակամություն տածող քաղաքական ուժի կողմից կառավարվող հանրապետությանը:

Ռազմաքաղաքական իրավիճակի թելադրանքով Հայաստանը չկարողացավ և չէր էլ կարող գործնականում համաձայնության գալ մեծ տերություններից որևէ մեկի հետ, ինչը ճակատագրական հետևանքներ ունեցավ հայ ինքնության, հայ ազգի հետագա հեռանկարների և անվտանգային շահերի ապահովման առումով: Հայաստանի և Թուրքիայի միջև Սևրի դաշնագրի ուրվականը կար, իսկ Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև կախվել էր ՀՀ խաբուսիկ հույսը՝ անտանտյան դաշնակիցների և ԱՄՆ-ի օժանդակության վերաբերյալ: Կար իրավիճակի անորոշության զգացողություն: ՀՀ հետախուզական ծառայության մի շարք ներկայացուցիչներ, բարձրագույն սպայական-հրամանատարական և կուսակցական-քաղաքական որոշ շրջաններ ավելի զգուշավոր էին այս կամ այն երկրին նախապատվություն տալու հարցում, նույնիսկ աղոտ կասկածներ կային, թե ով է իրականում ուժեղ՝ բոլշևիկյան Ռուսաստա՞նը, Կոլչա՞կը, թե՞ Դենիկինը, անգլիացինե՞րը, ամերիկացինե՞րը, թե՞ այլ ուժեր: Այդ մասին էր հենց զգուշացնում գեներալ Գ. Ղորղանյանը 1919 թ. հունվարի 20-ին Թիֆլիսից ՀՀ արտգործնախարար Սիրական Տիգրանյանին ուղղված գաղտնի զեկույցում. «***Մեր արտաքին քաղաքականությունը պետք է լինի չափազանց զգուշավոր: Մենք չենք կարող և չպետք է վարենք բացառապես անգլիամետ կամ ռուսամետ քաղաքականություն: Մենք պատերազմի հենց սկզբից մեր ճակատագիրը կապել ենք Համաձայնության երկրների հետ և դրանից չենք հրաժարվել մինչև վերջին օրը: Այժմ մենք բոլորին պիտի հասկացնենք, որ մեր հարցերի լուծումը ապասում ենք ոչ թե Անգլիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից կամ Ամերիկայից առանձին-առանձին, այլ Համաձայնության երկրներից: Մեր ճակատագիրը պետք է որոշի Դաշնակիցների խորհրդաժողովը Փարիզում: Իսկ մինչ այդ որոշումը սիրալ կլիներ մեր բարեկեցությունը կապել Համաձայնության անդամ այս կամ այն երկրի հետ, քանի որ հնարավոր չէ կանխատեսել այդ երկրի դիրքորոշումը ապագա խորհրդաժողովում: Հնարավոր է, որ մենք ժամանակավոր հաջողություն ունենանք, սակայն, հնարավոր է նաև, շատ բան կորցնենք***»[6]:

Այդ հույսերը տարան ՀՀ ճակատագրական մեկուսացմանը և անկմանը: Երբեք էլ էական օգնություն դաշնակիցների կողմից չեղավ, միայն եղան սնամեջ հայտարարություններ: Իսկ հարևանների հետ տարբեր պատճառներով այդպես էլ հնարավոր չեղավ լեզու գտնել: Եվ սակայն բոլշևիկներին Դենիկինի բանակի պարտությունից հետո միայն՝ 1920 թ. հունվարին, Դաշնակիցները Անդրկովկասյան հանրապետությունները ճանաչեցին իբրև անկախ պետություններ նպատակադրելով Կովկասը և Պարսկաստանը ետ պահել բոլշևիկյան ազդեցությունից: ***Այս հանգամանքը իրատեսորեն է գնահատում Ռիչարդ Հովհաննիսյանը, նշելով, որ արևմտյան կողմնորոշումը որևէ էր, քանզի այն Հայաստանը ետ էր շպրտում Ռուսաստանին մեր նկատմամբ «կախվածությունից» դեպի «ավելի հուսալի, ավելի հզոր» երկրները, որոնք այդքան շատ բան էին «ներդրել» հայկական ողբերգության մեջ***[7]: Քաղաքական-ռազմական կառավարող շրջանները հույսեր էին փայփայում, որ Դաշնակիցները կկերպարանափոխվեն և հանուն Անտանտի գծով իրենց կրտսեր եղբայրակցի և պատերազմում ծանր կորուստներ ունեցած Հայաստանի ու հայ ժողովրդի, արդյունավետ քայլեր կձեռնարկեն, և հողմացրիվ կանեն Կարմիր-բոլշևիկյան ***«ցնցուրիավոր»*** բանակներին, որոնք սակայն իրենք ջարդուփշուր արեցին թե՛ Կոլչակի, թե՛ Դենիկինի, թե՛ Վրանգելի, թե՛ Անգլիայի կազմակերպած, այսպես կոչված, «14 երկրների» և թե՛ առհասարակ մնացյալ բոլոր սպիտակ բանակները: ***Դա դիպուկ է նկատել Տ. Դևոյանցը. «Բայց Տրոցկիներն ու Զինովիևները չկան այլևս: Նրանց փոխարինել է Սովետական մի նոր դիվանագիտութիւն, որ այժմ զբաղուած է իր նախորդների զիջած հողամասերը հաւաքելով եւ կցելով Խորհրդային Ռուսաստանին: Այսպէս նա վարուեց Լատվիայի, Լիտուանիայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Բեսարաբիայի ու Բուկովինայի հետ: Այդպէս պիտի վարուի նաեւ իր կորցրած միւս հողերի հետ»***[8]:

Խորհրդային Հայաստան

Իրավիճակի այդ սրընթաց գահավիժումները նկատել են նաև Կովկասի գծով անգլիացի հետազոտողներ Դ. Մ. Լանգը և Ք. Ջ. Ուոքերը. ***«1920 թ. ընթացքում աշխարհի իրավիճակն այնպիսի դրամատիկ փոփոխություններ կրեց, որ այլևս խմաստազրկվեցին դաշնակից տերությունների՝ Հայաստանին տված խոստումները... բուռն վիճաբանություններից հետո... դաշնակցական կառավարությունը որոշեց խաղաղ կեր-***

պով իշխանությունը հանձնել բոլշևիկներին և ինչպես առածն է ասում, նրանք գերադասեցին «կարմիր լինել, քան մեռած»[9]:

Այսպիսով, Հայաստանի, այսպես կոչված, «սովետիզացիան» այլընտրանք չուներ և դա աշխարհաքաղաքական ստեղծված իրավիճակի ակնհայտ իրողությունն էր և տրամաբանական արդյունքը: Ընդհանուր առմամբ, դա բավականին հստակ է զգացել Ալ. Խատիսյանը. «Բոլշեւիկները եւ անոնց ետեւէն նոյնիսկ ռամկավարները կ'սեն, թէ Դաշնակցականները հասցուցին Հայաստանը ողբերգական վիճակի 1920 թ. վերջը, իսկ բոլշեւիկները եկան եւ փրկեցին Հայաստանը Թուրքերէն: Բացարձակապէս սուտ է այս: Եւ եկած եմ այն անխախտ համոզման, որ Դաշնակիցները լքեցին Հայաստանը, որ Թուրքերը ատկէ լայնօրէն օգտուեցան, բայց Թուրքերու գլխաւոր զինակիցները բոլշեւիկներն էին, որ ոյժ եւ հնարաւորություն տուին Թուրքերու հարձակելու Հայաստանի վրայ: Այդ՝ անվիճելի փաստ է: Փաստ է նոյնպէս, որ իրար օգնելէ ետքը, իրար մեջ բաժնեցին Հայաստանը: ***Եւ բոլշեւիկները ըրին այդ՝ ոչ թէ առանձին թշնամութենէն դեպի Հայապրանը, այլ դրդուած իրենց «համաշխարհային» քաղաքականութենէն, որուն համար անոնք պէտք կը զգային շահելու Թուրքերու բարեկամութիւնը՝ զոհաբերելով Հայապրանը:*** Եւ բոլշեւիկները Թուրքերուն տուին այն, ինչ որ անոնք կ'ուզէին - Կարսը, Սուրմալուն, Արտահանը, մնացածը, ինչ-որ Թուրքերուն պէտք չէր, այսինքն՝ Հայերով բնակուած շրջանները, Ռուսերը առին»[10]:

Քաղաքական իրադրությունը անդրկովկասյան տարածաշրջանի և Հայաստանի շուրջ 1919 թ. վերջում - 1920 թ. սկզբներին կտրուկ փոխվել էր, սկիզբ դնելով շրջադարձային իրողությունների, նոր ընտրանքների և դրանցով իսկ պայմանավորված արտաքին-քաղաքական իրական վտանգների: Թուրքական ազգայնական շարժումն այդ պատմափուլում կտրուկ վերելք էր ապրում, Թուրքիան վերակենդանանում էր քեմալականների իշխանության ներքո՝ հենց արդեն իսկ իր հետ թաքուն բարեկամության ձգտող ՀՀ նախկին դաշնակիցների հետ, որոնց արտաքին քաղաքական շրջադարձի և թողտվության շնորհիվ Թուրքիան արագ ջարդուփշուր արեց Հայաստանին և Հունաստանին արդեն 1920-1921 թթ., հայերին պարտադրելով անվերապահորեն հրաժարվել մեծ զգացմունքայնությամբ փայփայած Սևրի դաշնագրից ու հայկական մեծ երազանքից: Հայությանը դուրս նետեցին համաշխարհային շահերի այդ տիրույթից՝ Հայաստանը դիտարկելով ընդամենը մի միջանցք Արևմուտքն ու Արևելքը իրար շաղկապելու համար: Այդ նույն ընթացքում քեմալականների բարեկամ կոմունիստները հաղթանակած դուրս եկան դրսի թելադրանքով անընդմեջ հրահրվող, երկարատև քաղաքացիական պատերազմում: Հայկական քաղաքական շրջաններն աղոտ պատկերացումներ ունեին, որ ներքաղաքական բախումները Ռուսաստանում հրահրվում են դրսից, նպատակ հետապնդելով վերջնականապես հյուծել Ռուսաստանը, ջախջախել այն: Ինչպես որ այսօր են աշխարհի միահեծան տերերը ձգտում կյանքի կոչել այդ ծրագիրը, ինչից Հայաստանը անմասն չի կարող մնալ և անկախ իր ցանկությունից կարող է հայտնվել աշխարհաքաղաքական մեծ բախումների հորձանուտում:

Ադրբեջանում առաջխաղացող թուրքերի ու Կարմիր բանակի աքցանում հայտնված Հայաստանը հայտնվեց երկփեղկված վիճակում: Հայաստանը սրընթացորեն գլորվեց Սևրի երազային բարձունքներից և ջարդուփշուր եղավ, իսկ Հայաստանի նախկին դաշնակիցները առանց տատանման և երկմտանքի գծեցին Թուրքիայի հետ մերձենալու և բարեկամության ուղենիշները:

Անդրկովկասյան տարածաշրջանի շուրջ ռազմաքաղաքական իրադրության շրջադարձային փոփոխությունների շրջանում նախապատվությունը տրվեց Հայաստանի Հանրապետության խորհրդայնացմանը, երբ քաղաքացիական պատերազմը Ռուսաստանում գրեթե ավարտվեց, իսկ Ռուսաստանում, քաղաքացիական կռիվներին օժանդակած և ինտերվենցիան ուղղորդող եվրոպական երկրները պարզապես լքեցին այն: Նրա հետ նաև լքեցին իրենց պաշտպանած ազգային հանրապետություններին, որոնք ակնկալիքները շաղկապել էին Եվրոպայի հաղթող երկրների հետ:

Ստեղծված ցայտնոտային իրավիճակում դաշնակիցներից լքված Հայաստանին այլ ելք չէր մնում, քան գնալը այլընտրանք չունեցող քաղաքական համաձայնության Խորհրդային Ռուսաստանի հետ՝ հայ ժողովրդի համար ձեռք բերելով գոյատևման անդամահատված և փաստացի ոչ լիարժեք, սակայն տվյալ պահի թելադրանքից բխող տարբերակի: Դե իսկ ՀՀ նախկին դաշնակիցներն իրենք ևս տագնապելով աշխարհաքաղաքական ուժերի այս նոր համադրությունից, սեփական կամքով ուղիներ որոնեցին եզրեր գտնելու թե՛ Խորհրդային Ռուսաստանի, և թե՛ քեմալական Թուրքիայի հետ, զուգընթաց ձգտելով վերականգնել կորսված դիրքերը և հեղինակությունը մուսուլմանական աշխարհի երկրներում, որի ուղղությամբ նոր, հայության և Հայաստանի Հանրապետության համար խիստ անընդունելի և աղետաբեր ռազմավարության հիմքը դրվեց Բոլշևիկյան Ռուսաստանի նախաձեռնությամբ հրավիրված Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարում: Հայաստանը ասերկբայորեն զոհաբերվեց համաշխարհային հեղափոխության կեղծ և եսակենտրոն շահերին[11]: Հայաստանի շահերը և գոյության խնդիրը ստորադասվեցին մուսուլմանական աշխարհում դիրքերի ձեռքբերմանը, իսկ Թուրքիան վստահաբար այն ուղղորդեց բրիտանական և Անտանտի դաշնակիցների կայսերապաշտական ռազմավարության ծավալման դեմ: ՀՀ դաշնակիցներն արդեն 1920-1923 թթ. վերջնականապես հրաժարվեցին թե՛ Սևրի պայմանագրից, և թե՛ հայկական հանրապետության գոյության երաշխավորի դերից, բացառելով ռազմուժի կիրառումը հայկական հարցի լուծման համար:

Թուրքիայում, թե՛ քեմալականների, և թե՛ նախկինների կողմից Սևրի մերժմանը զուգընթաց ակնհայտ էր նաև Հայաստանին օգնելու հաղթող երկրների հրաժարումը նախկին խոստումներից, ինչն էլ համանման ձևով կրկնվեց 1920 թ. վերջին և հանգեցրեց հայկական վերջնագրային կապիտուլյացիային: Այլընտրանք չկար, և հայ ժողովուրդը կանգնեց խորհրդայնացման անխուսափելի փաստի առաջ:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ Հայաստանի ճանաչումը զուգակցվեց Օսմանյան կայսրության հետ կնքված պայմանագրի հետ: Հայաստանի դե յուրե ճանաչումը հաստատվեց 1920 թվականին, Սևրի պայմանագրով, ինչն այս միջազգային համապարփակ պայմանագրի արժեքն է: Այսինքն, տերությունները Սևրում միանշանակ արձանագրեցին Միացյալ և Անկախ Հայաստանի իրավաքաղաքական լինելությունը, որից հետո տեղի ունեցան հետընթաց գործընթացները:

ՀՀ արտաքին-քաղաքական հետագա ընտրանքի և առաջնահերթության վերաբերյալ ցանկանում ենք հատուկ նշել, որ խոսքը ոչ թե արևմտյան-եվրոպա-ամերիկյան կողմնորոշումից հրաժարվելու, և նախապատվությունը խորհրդային-ռուսական նոր իմպերիային տալու և վերջինիս շատ դեպքերում կայսերական, անհիմն և ոչ արդար պահանջները բավարարելու մասին է: Խոսքն այն մասին է, թե ինչպես դաշնակիցների ընդհանուր շահերի շրջանակում մաքառած հայ ժողովուրդը և Հայաստանի Հանրապետությունը դուրս պետք է գային այն աշխարհաքաղաքական աքցանից, որը ստեղծվեց 1920 թ. վերջին: Քանզի նաև ակնհայտ էր, որ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը ցանկանար թե չցանկանար, միևնույն է, բոլշևիկյան Ռուսաստանը նրա կամքը հաշվի չէր առնելու: Ամեն ինչ հաշվարկվում էր, և դիտարկվում պահի աշխարհաքաղաքական տրամաբանության տիրույթում: Ի վերջո, սևրյան «մերասևեռումը» պայմանավորված էր նաև բոլշևիկյան «նոր» Ռուսաստանի արտաքին-քաղաքական շահերի եսակենտրոնությամբ, վերջինիս անորոշ, ոչ բավականաչափ հստակ դիրքորոշմամբ:

Մյուս կողմից, Դաշնակիցների անորոշ վերաբերմունքն էապես նպաստեց ՀՀ արտաքին-քաղաքական հաշվարկների ձախողմանը, բոլշևիկյան քարոզչությանը և առաջիանաղացմանը: Եվ, ի վերջո, Հայաստանի Հանրապետությանը պարտադրված բռնի խորհրդայնացումը նրա հետագա գոյատևումը հանրապետության կարգավիճակով արտացոլում է Սևրի ողջ հոլովույթը, աշխարհաքաղաքական պարտադրանքի պահը de-jure ճանաչված Միացյալ և Անկախ Հայաստանի ճակատագրում, միաժամանակ փաստելով հայկական պետության լինելության անժխտելիությունը այն ստորագրած և չստորագրած պետությունների խմբի կողմից: Հենց այդ հանգամանքն էլ գլխավոր անանց արժեքն է, օրակարգային լինել՝ կախված աշխարհաքաղաքական ուժերի ու պատմական պահի թելադրանքից:

Խորհրդային, համայնավար համակարգն իր բոլոր բացասական երանգավորումներով ու ծանր հետևանքներով հանդերձ, որոշակի դեր կատարեց

Ներգաղթ

ազգապահպանման գործում, մասամբ փրկեց բռնի ուծացումից ու ֆիզիկական ոչնչացման դեռևս առկա վտանգից: Այն փակեց մի կարգի հեռանկարների ճանապարհը և քողարկված վիճակում պահեց մի այլ որակի հնարավորությունների ու հեռանկարների համակարգ, որը պարզորոշվեց 1980-ական թվականների վերջին - 1990-ական թվականներին»[12] ՀՀ անկախացմամբ և Արցախյան զարթոնքով:

Այսինքն, անցում կատարվեց հանրապետությունից-հանրապետություն (ժողովրդավարական, սոցիալիստական Հայաստանից՝ Սոցիալիստական Խորհրդային Հայաստանի): Ուրեմն, հայ ժողովրդի հասարակական-քաղաքական զարգացման կոմունիստական փուլը ևս պետք է դիտել որպես նրա պետականության զարգացման պատմաժամանակագրական փուլ՝ կարևորելով նրա անցած ողջ ուղին, իսկ այդ հանրապետության պատմությունը համարել ***Հայաստանի Երկրորդ հանրապետության պատմություն (1920 թ. դեկտեմբեր - 1991 թ. սեպտեմբեր)*** :

Միանգամայն ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության սովետական (խորհրդային) ձև ընդունելը չպետք է դիտել որպես պետականության վերացում, բացարձակացնելով արժեքային առումով պարտադրված տվյալ իրողության իմաստը: Պարզապես պետությունն իր գոյությունը շարունակեց սովետական (խորհրդային) ձևի և ընդհանուր միության շրջանակում, հետևաբար, միանգամայն իրավացի են այն հեղինակները, որոնք ***Հայաստանի Առաջին հանրապետությունից հետո (1918-1920 թթ.) որպես Երկրորդ հանրապետություն ընդունում են սոցիալիստական այն պետությունը, որը պատմության մեջ հայտնի է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն անվանումով***:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմությունը երկար մի շղթա է, և ամեն մի սերնդի կերտածն այդ շղթայի մի կարևոր օղակն է: Առանց պատմական ժառանգականության ոչ մի ժողովուրդ չի կարող գոյություն ունենալ: Պատմության շղթան դադարում է գոյություն ունենալուց, երբ փլուզվում են նրա տարբեր օղակները: Հասկանալի է, որ այդ շղթաներից մեկն էլ հենց այդ

պետության սոցիալիստական այն կառույցն է, որը հանիրավի մերժվում է: Այդ յուրաքանչյուր շղթայից անտեղյակ, ազգային հիշողությունից զուրկ, անառագաստ ժողովուրդը դատապարտված է կործանման: Վատ-լավ հիշողություն չկա, կա հիշողություն, առանց որի անհերևակայելի է պատմության ընթացքի լիարժեք և ամբողջական ըմբռնումը:

Այդ տրամաբանությամբ էլ, անհրաժեշտ է հատուկ նշել, որ այն ժամանակ, երբ Արևմտահայաստանի հայ ժողովուրդն ապրեց ցեղասպանության բոլոր հնարավոր ու անհնարին սարսափները (տեղահանություն, զանգվածային կոտորածներ, կրոնափոխություն և այլն) և զրկվեց իր հարազատ բնակավայրում՝ Մայր հայրենիքում ապրելու՝ աստվածատուր իրավունքից, բոլորովին այլ ճակատագիր ունեցավ Արևելյան Հայաստանը բոլշևիկյան Ռուսաստանի կազմում: Հայաստանը հայտարարվեց Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն և տարածքային ինքնավարության քիչ թե շատ իրական կարգավիճակով մտավ Խորհրդային Միության մեջ: Արևելահայաստանը և Արևելյան Հայաստանում փրկություն գտած հարյուր հազարավոր արևմտահայեր ստացան տնտեսական, մշակութային և քաղաքական զարգացման քիչ թե շատ լիարժեք հնարավորություններ: Կարճ պատմական ժամանակամիջոցում Հայաստանը դարձավ զարգացած արդյունաբերության, գյուղատնտեսության և մշակույթի երկիր, ինչը տեսանելի չէ Երրորդ հանրապետության օրոք:

Հայ ժողովուրդը փրկվեց պանթուրքիզմի կողմից մշտապես սպառնացող ֆիզիկական ոչնչացման վտանգից[13]: Միաժամանակ, պատմության դառը դասերից քաղած անվիճելի ճշմարտություններից է նաև այն իրողության գիտակցումը, որ հայ ժողովուրդը, ազգային շահից ելնելով, իր պատմական ճակատագրի ընթացքը գծելիս, պետք է խորապես հաշվառի Ռուսաստանի գործոնը, անկախ այն բանից, թե ինչ գույն ու ռեժիմ ունի այդ երկիրը՝ ցանկալի՞ է, թե՞ ոչ: Պետության լիարժեքության գաղափարի մասին վերոհիշյալ տեսակետների միջև որևիցե հակասություն տեսնելն անմիտ զբաղմունք է: Օրինակի համար, պետք է ասել, որ հենց Երկրորդ աշխարհամարտի տարիներին Հայաստանի Հանրապետությունը հանդես եկավ որպես քիչ թե շատ լիիրավ պետություն, հայ ժողովուրդն էլ մեծ ավանդ ներդրեց ֆաշիզմի դեմ ողջ առաջադեմ մարդկության մղած պայքարում: Հայ ժողովրդի ավելի քան 600 հազար զավակներ ակտիվ մասնակցություն ունեցան ***ժողովուրդների այդ մեծ պատերազմին՝*** տալով մոտ 300 հազար զոհեր: Ինչպես կարելի է պետություն չտեսնել այնտեղ, որտեղ այն կար: Հենց սոցիալիստական այդ հանրապետության ջանքերով էր, որ 1941-1945 թթ. Համաշխարհային մեծ պատերազմի առաջին փուլում ձևավորվեցին վեց հայկական հրաձգային դիվիզիաներ, իսկ մի քանի դիվիզիաներ էլ կիսով չափ համալրվեցին հայ մարտիկներով (61-րդ, 136-րդ, 138-րդ, 151-րդ, 320-րդ, 406-րդ դիվիզիաների անձնակազմի կեսից ավելին հայեր էին, իսկ 28-րդ և 38-րդ բրիգադներում մարտնչում էին բազմաթիվ հայ մարտիկներ): 76-րդ հրաձգային դիվիզիան գոյություն ուներ դեռ Հայաստանի խորհրդայնացման տարիներից: Իսկ դրանցից մեկը՝ 89-րդ Թամանյան դիվիզիան, անցավ շուրջ 3700 կմ մարտական փառապանծ ուղի և այն ավարտեց 1945 թ. մայիսի 9-ին՝ Բեռլինում, որտեղից Ադոլֆ Հիտլերի նախորդները 1915 թ. ոգեկոչել էին իրենց եղբայրակից եղեռնագործներին՝ թուրքերին: Ի դեպ, հենց մայիսի 9-ին ազատագրվեց պատմական Շուշին արդեն թուրքերի եղբայրակից ազերիների ստրկությունից:

«Պրավդա» թերթը, Խորհրդային Հայաստանի 25-ամյակին նվիրված առաջնորդողում անդրադառնալով Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը, գրել է. «Հայաստանում չեն որոտացել թնդանոթները, Հայաստանը չի իմացել գերմանական արշավանքի սարսափները: Բայց հայ ժողովուրդը հասկանում էր, որ Դոնի և Կուբանի, Ուկրաինայի և Բելառուսիայի դաշտերում վճռվում է նաև նրա ճակատագիրը, պաշտպանվում է նաև նրա անկախությունը, ազատությունը, երջանկությունը: Այդ պատճառով հայ ժողովրդի զավակները Խորհրդային Միության մյուս ժողովուրդների հետ ոտքի ելան ի պաշտպանություն Խորհրդային հայրենիքի և անձնուրաց կերպով մարտնչում էին գերմանաֆաշիստական զավթիչների դեմ: Սովետական Միության հերոսների փառապանծ ընտանիքին մաս կազմեցին հայ ժողովրդի 100-ից ավելի զավակներ: Հազարավոր հայ ռազմիկներ պարգևատրվել են մարտական շքանշաններով: Նրանք կռվել են Մոսկվայի, Ստալինգրադի մատույցներում, Ղրիմում, նրանք պաշտպանել են Լենինգրադը, նրանք հարձակվել են Քյոնիգսբերգի, Օդերի, Ֆրանկֆուրտի և Բեռլինի վրա: Համաշխարհային երկրորդ պատերազմի պատմության մեջ վառ էջ է գրել Հայկական Թամանյան 89-րդ դիվիզիան, որը Գրոզնու մատույցներից հասել է մինչև Բեռլին»[14]:

Այս փաստը հատկանշական է այն առումով, որ երբ որոշվում էր Բեռլինի գրոհին զորամիավորումների մասնակցության հարցը, ազգային զորախմբերից միայն 89-րդ Թամանյան հայկական դիվիզիային իրավունք վերապահվեց մասնակցելու պատմական այդ գործողությանը: Դրանով իսկ կարծես թե դատապարտվում էին Հիտլերը և նրա նախորդները, որոնք փորձում էին պատմական հիշողությունից զրկել սերունդներին: Փաստվեց, որ ինչպես ինքը, այնպես էլ նրա եղեռնագործ նախորդները, որոնք մասնակցել էին հայկական ցեղասպանության ծրագրավորմանն ու իրագործմանը, կանգնելու են մարդկության արդար դատաստանի առջև: Եվ այդ արդար դատաստանն իրագործողներից էր Հայաստանում կազմավորված Թամանյան 89-րդ դիվիզիան, ***այն դեպքում երբ որ այսօր էլ միտումնավոր խեղաթյուրվում են ֆաշիզմի դեմ ժողովուրդների այդ ահեղ գուրեմարտի իրողությունները, փորձելով դրանք ներկայացնել ընդամենը որպես «Արևմուտքի հաղթանակ», մեղանչելով համընդհանուր, պարմություն դարձած ճշմարտությունների դեմ:***

Հայաստանը պետություն էր և Երկրորդ աշխարհամարտին հաջորդած տարիներին, ընդունելով հայրենադարձներին՝ (Ստալինյան բռնություններով հանդերձ) կառավարությունը հանդես եկավ համապատասխան որոշումներով, որոնց հիմքում ընկած էին հեռահար նպատակադրումներ:

Պետք է նշել նաև, որ սոցիալիստական Հայաստանը՝ որպես պետություն, 1960-ական թվականներին ապրեց Ազգային զարթոնք, զարգացման մի քանի տասնամյակի ընթացքում ստեղծվեցին անկախ ու լիարժեք պետականության նոր կարգավիճակի հասնելու որոշակի նախադրյալներ: Այդ ամենը ակնհայտորեն վկայում է, որ չի կարելի տալ հապճեպ գնահատականներ պատմության գլխավոր իրողություններին: Հայաստանը պետություն-հանրապետություն էր անգամ սոցիալիզմի այն դժվար օրերին, երբ իշխում էր ստալինյան բռնապետական վարչակարգը, և մնացած բոլոր ժամանակներում՝ լինեն դրանք ***խրուշչովյան հալոցքի, թե բրեժնևյան լճացման տարիները կամ պետական, ազգային զարգացման այլ պատմական ժամանակաշրջաններ***: Պետությունը և ժողովուրդը զբաղված էին կառուցողական աշխատանքով: Հսկայական գործարաններից ու ֆաբրիկաներից զատ ստեղծվեցին առողջապահական, մշակութային, կրթական ու գիտական բազմազան օջախներ, մարզական և այլ հիմնարկություններ (Հայաստանի գիտությունների ակադեմիան, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը, Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնը, «Հրազդան» մարզադաշտը և այլն), ինչպես նաև Մեծ Եղեռնի զոհերի անզուգական և ինքնատիպ հուշահամալիրը: Իրականացվեց Հայոց պետականությունը խորհրդանշող հուշարձանների՝ Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերին նվիրված հուշահամալիրների շինարարությունը: 1965 թ. ապրիլին Երևանում տեղի ունեցան պատմական աննախադեպ և կարևոր իրադարձություններ՝ Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցի առիթով: 1968 թ. աշնանը պետական շուքով նշվեց Երևանի հիմնադրման 2750-ամյակը, որին ներկա գտնվեցին հազարավոր հյուրեր արտասահմանյան երկրներից: Արդարև, սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ պետականության դրսևորում: Հաջողությամբ նշվեցին նաև հայոց մեծագույն մտավորականներ Հ. Թումանյանի և Կոմիտասի, Իսահակյանի 100-ամյա և այլ հոբելյաններ: Ուրեմն, կար այդ պետականությունը, ապրում և ոչ հազվադեպ հերոսանում էին հայեր, որոնք պահպանում և փայփայում էին Հայաստանը՝ որպես պետություն, ստեղծում և զարգացնում էին արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, դպրոցը, մշակույթը:

Հայ ժողովրդի պատմության պարբերացման հարցերը որոշելիս անպայման պետք է դրսևորել ոչ թե գաղափարախոսական, կուսակցական, նեղ խմբակային շահեր, այլ ազգային պետականության նպատմամբ ցուցաբերել օբյեկտիվ մոտեցում: Եվ այսպես, անժխտելի իրողություն է, որ 1918-1920 թթ. Հայաստանի Առաջին հանրապետությունից հետո եղել է ոչ թե դադարակ տարածություն, այլ Երկրորդ՝ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (1920 թ. վերջ – 1991 թ. վերջ) և միայն այնուհետ՝ 1991 թ. ծնված Հայաստանի Երրորդ հանրապետությունը, որն արդեն ճանաչված է ամբողջ աշխարհում: Հետևապես, պատմական ճշմարտությունը պահանջում է արձանագրել, որ Հայաստանի ներկայիս, թվով Երրորդ հանրապետությունը հենվել է Երկրորդ՝ սոցիալիստական հանրապետության պետական-քաղաքական կառույցների վրա:

Մատենադարանը

Առաջինից Երկրորդ՝ Խորհրդային Հանրապետությանն անցման փաստի վերաբերյալ իր իմաստուն գնահատականն է տվել ՀՀ տարեգիր Սիմոն Վրացյանը. «***Բնավ պիտի չզարմանաք, եթե վաղը Մայիսի 28-ն էլ յուրացվի բոլշևիկների կողմից: Թող յուրացնեն, կարևորը այն չէ, թե ով է հեղինակը պատմական դեպքերի, կարևորը դեպքերն են:***

Որևէ ուրացումով կամ փաստերի խեղաթյուրումով կարելի չէ հերքել և այն փաստը, որ 1920 թ. դեկտ. 2-ին, կամ, եթե հաճելի է, նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ ոչ թե Հայաստանի նոր պետության ստեղծումը, այլ գոյություն ունեցող հանրապետության վարչաձևի փոփոխություն. ժողովրդական անկախ հանրապետության տեղը հաստատվեց խորհրդային անկախ հանրապետություն...

Այսպիսով, պատմական իրողություն է, որ ներկա Խորհրդային Հայաստանը շարունակությունն է Հայաստանի Հանրապետության: Եթե տեղի չունենային այն մաքառումները, որոնք հանգեցրին հայկական անկախ պետության ստեղծման 1918 թ. Մայիսի 28-ին, եթե գոյություն չունենար Հայաստանի Հանրապետությունն իր ազգային կազմով ու նկարագրով, այսօր գոյություն չէր ունենա և Խորհրդային Հայաստանը:

Վարչաձևերը ժամանակավոր երևույթ են: Ժամանակավոր են և վարիչները: Հավերժական են ազգերն ու հայրենիքները՝ հայրենի հողի վրա նստած ժողովուրդները: **Հավերժական է ազատատենչ հայ ժողովուրդը, որ մահվամբ մահը կոխելով՝ կերտեց հայրենիքի անկախությունը:**

Ատոմակայան

Մենք հավատում ենք, որ Հայաստանը նորից կլինի ազատ և անկախ, ավելի լայն ազգային սահմաններով»[15]:

Եվ դեռ ավելին, **ըստ Ս. Վրացյանի. «Մենք բացեցինք առաջին ճեղքը համաշխարհային դրամատիրության մեջ...**

Ոչ թե պետք է ընդօրինակել մեր գործելակերպը, այլ անկախորեն խորհրդածել նոր յուրատեսակության, պայմանների և արդյունքների պատճառների մասին, - պետք է իրագործել 1917-1921 թթ. փորձի ոչ թե տառը, այլ ոգին, միտքը, դասերը:

Հայաստանի խորհրդայնացումը տեղի էր ունեցել անկախության պահպանության պայմանով, Հայաստանի Հանրապետության տեղը պիտի բռներ անկախ խորհրդային հանրապետությունը»[16]:

Այսպիսով, հայ ժողովրդի հասարակական-քաղաքական զարգացման սոցիալիստական փուլը ևս պետք է դիտել որպես պետականության զարգացման պատմաժամանակագրական հաջորդական փուլ, իսկ այդ հանրապետությունը համարել Հայաստանի Երկրորդ հանրապետություն (1920 թ.-1991 թ.):

Ս. Սարինյանը նկատել է. ***«Մեր նորագույն պատմության մեծագույն ստեղծագործությունը եղավ հայոց առաջին հանրապետությունը, որ միջազգային ճանաչում տվեց Հայաստանին, որպես պետական-քաղաքական սուբյեկտի: Ինչ վերաբերում է երկրորդ հանրապետությանը, այդ պատմական մի ամբողջ ֆորմացիայի կրողը եղավ նա՝ տնտեսական, սոցիալական, մշակութային, ազգաբանական համակարգով, եւ որքան էլ կայսերապատկան ենթակայության մոդելում, այնուամենայնիվ, պետություն էր վարչատնտեսական, իրավական, սոցիալական, մշակութային հաստատությունների կառուցվածքով եւ խորապես նպաստել է հայոց պետական ազգի եւ քաղաքական սուբյեկտի հոգեբանական կազմությանը: Երրորդ հանրապետությունը նախորդների տրամաբանական շարունակությունն է եւ ընդհանրության մեջ նրանք նշանավորում են հայոց պատմության ժամանակը՝ անկախ պետականության կայացման դարաշրջանը»[17]:*

Օգտագործված գրականություն

1 Մելիք-Հակոբյան Ս., Հայաստանի Երկրորդ հանրապետութեան հիմնումը եւ դաշնակցութիւնը, Երևան, «Նաիրի» հրատ. 1995, Սարդարյան Կ. Խ., Պատմություն և իրականությունը, «Պարբերական» հրատ., Երևան, 1991, Որն է մեր ճանապարհը: Հոդվածներ/ Վ. Մանուկյան և ուրիշ.; Կազմ.՝ Ա. Բլեյան, Խմբ.՝ Մ. Ս. Բաղալյան, Երևան, «Արևիկ» հրատ. 1990, էջ 67-79:

2 Քեռյան Գ. Մ., Հայաստանի Երրորդ հանրապետության կուսակցական համակարգը և քաղաքական կուսակցությունները, Երևան, «Մխիթար Գոշ» 1996, Վիրաբյան Վ. Հ., Երկրորդ, թե՞ Երրորդ հանրապետություն, «Հայաստանի Հանրապետություն», պաշտոնաթերթ, 20 դեկտեմբերի, Երևան 1997, Վիրաբյան Վ. Հ., Առաջինից երրորդ հանրապետություն, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2, 139 -147, Երևան, 2000, էջ 139-147: Մարդկային զարգացման զեկույց, Հայաստան -1998, Պետության դերը, Երևան, Ա. Հ. ,1998, էջ 17-19, 24:

3 Միքայելյան Քր., Հեղափոխականի մտքերը, Երևան, Երևանի համալս. հրատ., 1990, էջ 27:

4 Նույն տեղում, էջ 84:

5 Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 201, g. 1, գ. 251, թ. 377:

6 ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 193, մաս I, թ. 35-36:

7 Hovannisian R. G., The republic of Armenia, vol. III, From London to Sevres, February- August, 1920, Barkeley, Los Angeles, London, 1996, vol. III, p. 1: Ավելին, Ռ. Հովհաննիսյանը գտնում է, որ հակառակ իրենց հաստատուն արևմտյան արևելումին, Դաշնակցությունը և հայկական կառավարությունը մնացին առանձին ու լքված Արևմուտքի կողմից, որը Արևմտյան Հայաստանը գծել էր թղթի վրա: Յովհաննէսեան Ռ., Հայ Յեղափոխական Դաշնակցության դերը Հայաստանի Հանրապետության մեջ // «Դրօշակ», թիւ 19 (1402), 13 յունվարի, 31-35, 1993, էջ 32-33:

8 Դէոյեանց Տիգրան Թ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), No 4 (249), յուլիս-օգոստոս, 81-901945, No 4 (249), 15 82:

9 Լանգ Դ. Մ. Ուոքքր Ք. Ջ., Հայերը: (Հայ ժողովրդի պատմություն), էջ 15 32:

10 Խատիսեան Ալ. Հ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, տպ. Համազգային, 1968, էջ 292-293:

11 Սարդարյան, Հայաստանը համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում (Ինչպես կործանվեց Հայաստանի Հանրապետությունը), 2007; Սաֆրաստյան Ռ. Ա., Մուսթաֆա Քեմալ. Պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.)/ Ռ. Ա. Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստ-տ, Երևան, «Տիր» հրատ., 2019:

12 Հայոց քաղաքական պատմություն (դասախոսությունների համառոտագիր), Երևան, ՀՊՃՀ հրատ., 1995, էջ 143:

13 Խուրշուդյան Լ. Ա., Հայկական հարցը, բռվանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը Երևան, Համազգային Հայ կրթական մշակութային միություն: 1995, էջ 52-53:

14 «Правда» 1945, 25 ноября, «Известая» 1945, 25 ноября, Москва.

15 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան» հրատ.: 1993, էջ 606-608:

16 Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 602, 604:

17 Սարինյան Ռ. Ն., Հայ գաղափարաբանություն. Պատմաքննական տեսություն, «Զանգակ-97» հրատ., Երևան, 1998, էջ 285:

Մայիսյան հաղթանակները որպես պատմական և քաղաքական հակամարտության դաշտ՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս

Հայաստանի և Ադրբեջանի միջև արցախյան հակամարտությունն ու դրա պատմությունը ոչ միայն տարածաշրջանային քաղաքականության, այլև, գոնե Հայաստանի պարագայում, ազգային ինքնագիտակցության կարևոր մաս են կազմում: Հատկապես մայիսյան հաղթանակները՝ 1918 թ. մայիսի 28-ին Առաջին Հանրապետության ստեղծումը և 1990-ականների սկզբին Արցախյան առաջին պատերազմում հայ ժողովրդի հաջողություններն ու հաղթանակը մեծ դերակատարություն են ունեցել Հայաստանի նորագույն պատմության ձևավորման և ազգային արժանապատվության ամրապնդման մեջ: Միևնույն ժամանակ, Ադրբեջանը, ունենալով իր տեսլականը պատմության նկատմամբ, մշտապես փորձում է հակադարձել Հայաստանի հաղթանակներին ու վերակառուցել իր պատմական հիշողությունը՝ մերժելով հայոց պատմության ու հաղթանակների լեգիտիմությունը: Այս երկու պետությունների հարաբերությունների պատմությունն իր մեջ կրում է պատմական հիշողության, ազգային ինքնագիտակցության և քաղաքական պայքարի ըմբռնման խորքային շերտեր:

Մայիսյան հաղթանակները՝ Հայաստանի պատմական հիշողության հիմք

Հայաստանի պատմության մեջ մայիսյան հաղթանակները միշտ եղել են խորհրդանշական և զգացական նշանակություն ունեցող իրադարձություններ: Առաջին հերթին, մայիսի 28-ը նշվում է որպես Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման օր: 1918 թ. մայիսյան հաղթանակները Հայոց ցեղասպանությունից հետո առաջին անգամ հնարավորություն տվեցին Հայաստանից դուրս սփյուռքի համայնքներին հպարտանալու ու ճանաչելու հայկական պետությունը՝ որպես ինքնիշխան ազգային գոյատևման հենասյուն: Չնայած Հայաստանի Առաջին Հանրապետությունը գոյատևեց միայն երկու և կես տարի՝ մինչև 1920 թ. վերջը, սակայն այն մնաց որպես ազգային ինքնագիտակցության հիմք, մեծ քայլ դեպի անկախության ուղի:

1994 թ. մայիսյան իրողությունները դարձան Հայաստանը աշխարհում ներկայացնող ինքնիշխան պետության համազգային դրսևորումներից մեկը: Արցախի ազատագրումը՝ հիմնականում մայիսյան ճակատամարտերի ընթացքում, դարձավ խորհրդանիշ մի ամբողջ ժողովրդի պայքարի, պատմական իրավունքների ու ազգային ինքնության պահպանման համար:

Մայիսի 28-ը Հայաստանի պետականության և ինքնիշխանության կարևոր խորհրդանիշներից է, ինչպես նաև երկրի ազգային արժանապատվության ու դիմադրության խորհրդանիշը: Սակայն, Ադրբեջանի պատմագիտության մեջ մայիսի 28-ը ներկայացվում է այլ կերպ՝ քաղաքական համատեքստի մեջ աղճատված և սխալ մեկնաբանված, ինչը հաճախ նպաստում է տարածաշրջանային լարվածության և գաղափարական հակասությունների խորացմանը:

Ադրբեջանի պատմական հիշողության հակադարձումը

Ադրբեջանի կողմից հայության պատմությանն ուղղված հակադարձումները ևս կարևոր դեր ունեն թե՛ պատմական, թե՛ քաղաքական մտածելակերպում: Ադրբեջանը մշտապես փորձել է խեղել պատմությունը՝ մերժելով հայկական պատմական տիրույթների առկայությունը, ինչպես նաև Հայաստանի մայիսյան հաղթանակների լեգիտիմությունը:

Ադրբեջանի պատմական հիշողությունը մոդելավորվում է այն գաղափարախոսության վրա, ըստ որի՝ Ղարաբաղի տարածաշրջանը եղել է Ադրբեջանի մաս, իսկ Ադրբեջանի պետական քարոզչությունը և պատմաբանները շարունակում են խեղաթյուրել պատմությունն ու հատկապես, հայությանն առնչվող

պատմական փաստերը՝ Արցախը ներկայացնելով որպես ադրբեջանական:

Այս հակադարձումները մեծ մասամբ պայմանավորված են քաղաքական շահերով: Ադրբեջանը մշտապես միջազգային ճանաչման է ձգտում այն տարածքների նկատմամբ, որոնք համարում է իր՝ «պատմական» իրավունքի տարածքներ: Ասվածի համատեքստում էլ՝ ի հայտ է գալիս Հայաստանի հաղթանակներին հակադրվելու և Ադրբեջանի մտացածին պատմությունը տարածելու անհրաժեշտությունը:

Ադրբեջանի պատմագիտության մեջ մայիսի 28-ը հազվադեպ է ներկայացվում որպես դրական պատմական իրադարձություն՝ կապված Հայաստանի անկախության հետ: Ադրբեջանցի պատմաբանները, հատկապես վերջին տարիներին, սկսել են ավելի ակտիվորեն խոսել այն մասին, թե մայիսի 28-ը, ըստ նրանց, ավելի շատ կապ ունի հայկական նվաճումների և «հայկական կեցվածքի տարածման» հետ, որն իբր խանգարել է «թուրքական համերաշխությանը»:

Երկու երկրների պատմական հիշողությունները՝ հակասություններ և քաղաքական շահեր

Հայաստանի մայիսյան հաղթանակները և դրանց արժևորումը դառնում են առանցքային վեհաբանություններ երկու կողմերի քաղաքական պայքարում: Հայաստանում մայիսյան հաղթանակները համարվում են հայոց ազատության և ազգային հպարտության հիմնասյուներ, իսկ Ադրբեջանի պատմական հիշողությունը, որը ներկայացնում է Արցախը որպես իրենց «պատմական իրավունքի» տարածք, նպատակ ունի ցույց տալու, որ Հայաստանի հաղթանակները հիմք չունեն:

Այս հակադրությունը հատկապես ընդգծվում է միջազգային հարաբերությունների, դիվանագիտության և մեդիայի մակարդակներում: Ադրբեջանը տարբեր կերպ ներկայացնում է պատմական հիշողությունները՝ ներառելով կամ բացառելով որոշ կարևոր իրադարձություններ, փաստեր և իրողություններ, որոնց միջոցով հավակնություններ է հայտնում հայկական պատմական տարածքների նկատմամբ:

Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ պատմական հիշողությունը՝ որպես հավաքական ինքնության կարևոր բաղադրիչ, ձևավորում է ազգային գաղափարախոսությունները: Երբ այդ հիշողությունները հիմնված են հակասական վարկածների և փորձառությունների վրա, դրանք վերածվում են քաղաքական գործիքների:

Օրինակ, Լեռնային Ղարաբաղի պատմական պատկանելիության համատեքստում այն, թեև բռնազավթված է Ադրբեջանի կողմից, սակայն պատմականորեն հայկական տարածք է, որի մշակութային և կրոնական ժառանգությունը հաստատվում է հին հայկական եկեղեցիներով, ձեռագրերով և բնակչության պատմությամբ: Ի հակադրություն սրա, Ադրբեջանը պնդում է, որ Ղարաբաղը պատմականորեն իր տարածքն է և ընդգծում է խորհրդային որոշումներով դրա ընդգրկումն Ադրբեջանի կազմում՝ 1921 թ., Կոմունիստների կովկասյան բյուրոյի որոշմամբ կցելով Ադրբեջանին և 1923 թ. ստեղծված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ձևով, թեև սրա առնչությամբ ևս, փաստերն ու իրողությունները այլ են:

Արդյունքում, երկու կողմերն էլ օգտագործում են պատմական փաստեր՝ ամրապնդելու իրենց իրավական և բարոյական դիրքերը: Սակայն այդ փաստերը հաճախ ներկայացվում են միմյանցից կտրված՝ անտեսելով համատեքստը: Սա վերածվում է մերժողականության՝ մեկի հիշողության ժխտմանը մյուսի կողմից:

Միջազգային դերակատարները երբեմն խրախուսում են պատմական միակողմանիությունները՝ ելնելով տարածաշրջանային շահերից: Թուրքիան բացահայտ աջակցում է Ադրբեջանի պատմական դիրքորոշումներին՝ ժխտելով Հայոց ցեղասպանությունը և Արցախը ճանաչելով Ադրբեջանի մաս: Ռուսաստանյան և արևմտյան քաղաքականությունը հաճախ երկակի է՝ մի կողմից հենվելով պատմական հայ-ռուսական կապերի վրա՝ առաջինի պարագայում, և Ադրբեջանի հետ ընդհանուր նավթագազային համագործակցության վրա՝ երկրորդի, իսկ մյուս կողմից աջակցելով Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» հայտարարություններին:

Մայիսյան հաղթանակները որպես խորհրդանշական հակամարտություն

Հայաստանի և Ադրբեջանի պատմական հիշողությունները հաճախ չեն ընդհատվում ժամանակով, այլ հակառակը՝ նոր իրադարձություններով վերակառուցվում և վերաիմաստավորվում են: Այդ գործընթացի մի մասն է մայիսին նշվող հաղթանակների խորհրդանշական օգտագործումը: Մայիսը մի շարք կարևոր իրադարձությունների ամիս է՝ մասնավորապես հայերիս համար՝ Սարդարապատի ճակատամարտ (1918 թ.), Շուշիի ազատագրում (1992 թ.), և հաղթանակ ֆաշիզմի նկատմամբ (1945 թ.): Այս բոլոր իրադարձություններն ունեն յուրահատուկ նշանակություն՝ ոչ միայն պատմական, այլև քաղաքական իմաստով: Մայիսյան հաղթանակները վերածվել են

մի տեսակ խորհրդանշական հակամարտության՝ երկու պետությունների պատմական նարատիվների միջև:

Հայաստանի համար մայիսյան հաղթանակները ազգային ինքնության ձևավորման նշանակություն ունեն, քանի որ պատերազմները մղվել են ոչ միայն տարածքների համար, այլև ազգային կամքի արտահայտման տեսանկյունից: Ադրբեջանի պատմական հիշողությունը, ընդհակառակը, փորձում է վերահսկել նախկինում պետությունների կողմից թույլ տրված սխալները՝ օգտագործելով դրանց գաղափարախոսական ուժը:

Հայաստանի համար մայիսի 28-ը՝ Առաջին Հանրապետության հիմնադրման օրը, անմիջականորեն կապված է Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերի հետ: Սարդարապատը ընկալվում է որպես ոչ միայն ռազմական հաղթանակ, այլ նաև հայ ժողովրդի ֆիզիկական գոյության փրկության հնարավորություն: Այս պատմությունը սերտորեն կապված է Հայոց ցեղասպանության պահանջատիրության հետ և ծառայում է որպես անկախության ոգեշնչման աղբյուր, փրկված ազգի գաղափարի ամրապնդում, պետական ինքնության հիմնասյուն:

Շուշիի 1992 թ. ազատագրումը ևս խորհրդանշական էր. այն ընկալվեց որպես հայերի վերադարձ պատմական և մշակութային հայրենիք՝ Լեռնային Ղարաբաղ: Մինչդեռ Ադրբեջանի համար Շուշիի կորուստը համարվում էր ազգային ողբերգություն և նվաստացում: Իլհամ Ալիևը Շուշիի բռնազավթումը հաճախ ներկայացնում է որպես նորագույն պատմության գլխավոր հաղթանակ, որը համարժեք է ազգի վերածննդին:

Ինչ վերաբերվում է Մայիսի 9-ին, ապա այն՝ որպես ԽՍՀՄ-ի հաղթանակի օր նացիզմի նկատմամբ, տոնվում է և՛ Հայաստանում, և՛ Ադրբեջանում: Սակայն վերջին տարիներին այդ օրը նույնպես ստանում է քաղաքականացված երանգ: Հայաստանում, այդ օրը հաճախ կապվում է Շուշիի 1992 թ. դեպքերի հետ՝ ստեղծելով խորհրդանշական զուգահեռ Հիտլերի դեմ հաղթանակի և արցախահայերի ազատագրման միջև: Մինչդեռ Ի. Ալիևը բազմիցս հայտարարել է, որ «նոր ֆաշիստը» եղել է Հայաստանը: Այս փոխադարձ մեղադրանքները ցույց են տալիս, որ Մայիսի 9-ի երևույթը դարձյալ վերածվել է պատմական արդարության յուրացման տիրույթի:

Պատմական հիշողությունը, հատկապես մայիսյան հաղթանակների համատեքստում, գործում է որպես քաղաքական լեգիտիմության հիմք: Հայկական և ադրբեջանական ղեկավարություններն օգտագործում են անցյալի հաղթանակները՝ հասարակության մոբիլիզացիայի, ազգային հպարտության բորբոքման, նոր սերունդներին ուղղորդելու նպատակով: Այս խորհրդանշական ճակատամարտը շարունակվում է ոչ միայն ռազմական գործողություններով, այլ նաև կրթությամբ, մշակույթով, մեդիայով և միջազգային քարոզչությամբ:

Օրինակ, 2023 թ. Հայաստանի կառավարությունը չմասնակցեց Մոսկվայում կայացած Հաղթանակի օրվան՝ ի նշան ռուսական քաղաքականության նկատմամբ աճող անվստահության: Իսկ Ադրբեջանի ղեկավարությունը Շուշիում կազմակերպեց զանգվածային տոնակատարություններ, որոնց հրավիրվեցին մի շարք մահմեդական երկրների պատվիրակություններ, ցույց տալու համար, որ «Ղարաբաղն այլևս մուսուլմանական մշակույթի մի մասն է»: Կարող ենք ենթադրել, որ այս գործողություններն ուղղված էին միջազգային մակարդակով պատմական նարատիվը վերահսկելուն:

Այսպիսով, Հայաստանի մայիսյան հաղթանակները և Ադրբեջանի պատմական հիշողությունը հակադրվում են ոչ միայն իրենց քաղաքականության ու պետական շահերի պատճառով, այլև նրա համար, որ պատմական հիշողությունը շարունակում է որպես գործիք ծառայել դիվանագիտությանը, ռազմական և գաղափարախոսական կռիվներին: ■

ԻԻՀ քաղաքական դիրքորոշումը Բենյամին Նեթանյահուի՝ Բաքու նախատեսված այցի վերաբերյալ

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

2025 թվականի մայիսին նախատեսված Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահուի այցը Բաքու առաջացրեց սուր և զգուշացնող արձագանք Իրանի կողմից: Թեև, ըստ վերջին հաղորդագրությունների՝ այցը հետաձգվել է Իսրայելի ներսում և Մերձավոր Արևելքում ընթացող ճգնաժամերի պատճառով[1], այդուհանդերձ, Իրանը շարունակում է դա դիտարկել որպես ռազմավարական սպառնալիք: Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների պնդումների, թե Բաքվի միջնորդությամբ Թուրքիան ի վերջո համաձայնել է բացել օդային տարածքը Նեթանյահուի համար, Թուրքիայի նախագահի գրասենյակը կտրականապես հերքել է:

Թուրքիայի նախագահի գրասենյակը մայիսի 3-ին պաշտոնապես հայտարարել է, որ Անկարան չի բացի իր օդային տարածքը Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահուի համար՝ վերջինիս՝ Ադրբեջան նախատեսված այցի շրջանակում: Հայտարարության մեջ հստակ ընդգծվում է, որ Թուրքիան ոչ մի բացառություն չի անի Նեթանյահուի համար, և սոցիալական ցանցերում տարածված լուրերը՝ իբր Թուրքիան համաձայնել է Բաքվի միջնորդությամբ թույլատրել թռիչքը, կեղծ են:

Նշվում է նաև, որ այս որոշումը կայացվել է Գազայի նկատմամբ Իսրայելի «ցեղասպանական քաղաքականության» ֆոնին: Թուրքիան շարունակում է «աջակցել պաղեստինյան ժողովրդի արդար պահանջներին»:

Թուրքիայի ԱԳՆ խոսնակը հավելել է, որ Անկարան նման թռիչքի թույլտվության որևէ պաշտոնական հարցում չի ստացել, և նման բան չի քննարկվել:

Ի դեպ, սա առաջին դեպքը չէ. 2024 թ. նոյեմբերին էլ Թուրքիան հրաժարվել էր իր օդային տարածքը տրամադրել Իսրայելի նախագահ Իսահակ Հերցոգի Ադրբեջան կատարելիք այցի ժամանակ[2]:

Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյաուհի՝ 2025 թվականի մայիսի 7-ին Բաքու նախատեսված այցի վերաբերյալ Իրանի կողմից կոնկրետ հայտարարություններ կամ արձագանքներ դեռևս հստակորեն ամբողջությամբ փաստագրված չեն: Այնուամենայնիվ, ելնելով առկա տեղեկատվությունից և Իրանի՝ տարածաշրջանային զարգացումների, մասնավորապես Իսրայելի և Ադրբեջանի հետ հարաբերությունների նկատմամբ վերաբերմունքից, կարելի է որոշակի եզրակացություններ անել:

Իրանն ավանդաբար զգայուն է արձագանքում Իսրայելի և Ադրբեջանի միջև համագործակցությանը, հաշվի առնելով երկու երկրների ռազմավարական գործընկերությունը և Իրանի սահմանների մոտ Իսրայելի ազդեցության ընդլայնման հնարավորությունը: Օրինակ, 2025 թվականի ապրիլին Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանի Բաքու այցից ընդամենը 10 օր անց Նեթանյահուի այցի մասին լուրերը կարող էին Թեհրանում ընկալվել որպես իրենց ազգային անվտանգության համար սպառնալիք:

Իրանական կողմը նախկինում բազմիցս մտահոգություն է հայտնել Ադրբեջանի և Իսրայելի ռազմական համագործակցության վերաբերյալ, նշելով, որ դա կարող է օգտագործվել Իրանի դեմ: Հաշվի առնելով վերջին տարիների իրանա-ադրբեջանական լարված հարաբերությունները, որոնք սրվել են այնպիսի առիթներով, ինչպիսիք են հարձակումը Իրանի դեսպանատան վրա, ադրբեջանցի պատգամավոր Ֆազիլ Մուստաֆայի դեմ մահափորձը (որտեղ Բաքուն մեղադրել է Թեհրանին), և Իրանի հակազդելու փորձերը Իսրայելի ներկայությանը տարածաշրջանում, կարելի է ենթադրել, որ Իրանը կարող է Նեթանյահուի այցը դիտարկել որպես սադրանք:

Մտավախություն կա, որ Իսրայելի տեխնիկական, հետախուզական կամ ռազմական ներկայությունը Ադրբեջանի տարածքում կարող է թիրախավորել

Իրանի ռազմավարական ենթակառուցվածքները: Ըստ որոշ միջազգային վերլուծաբանների՝ Բաքվի և Թել Ավիվի համագործակցությունը ներառում է նաև պաշտպանական տեխնոլոգիաների փոխանակումը և օդուժի ենթակառուցվածքների հասանելիությունը:

Վերջին տարիներին Ադրբեջանը խորացրել է իր հարաբերությունները Իսրայելի հետ: Բաքուն ոչ միայն դարձել է Իսրայելի ռազմավարական դաշնակիցը, այլև Իսրայելի նավթի հիմնական մատակարարը: Միևնույն ժամանակ Ադրբեջանը Իսրայելից գնում է ռազմատեխնիկական սարքավորումներ՝ այդ թվում՝ անօդաչու թռչող սարքեր, հակաօդային պաշտպանության համակարգեր և էլեկտրոնային հետախուզական համակարգեր:

Թեհրանի կարծիքով, այս համագործակցությունն ունի ոչ միայն տնտեսական կամ պաշտպանական բնույթ, այլև ուղղված է Իրանի տարածաշրջանային դիրքերի թուլացմանը: Մի շարք իրանցի պաշտոնյաներ պնդում են, որ Իսրայելը փորձում է իրեն հաստատել Կասպից ծովի հարևանությամբ՝ Իրանի հյուսիսային սահմաններին մոտ լինելու նպատակով:

Նեթանյահուի այցի կապակցությամբ բողոքի ալիքներ բարձրացան նաև հասարակության մեջ, մասնավորապես, ադրբեջանցի հայտնի շիա հոգևորական և ընդդիմադիր ակտիվիստ Հաջի Թալեհ Բաղիրզադեն, որը կալանավորված է Ալիևի վարչակարգի կողմից, հացադուլ հայտարարեց՝ բողոքելով Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահուի՝ Ադրբեջան կատարելիք այցի դեմ:

Ըստ բանտից հրապարակված նամակի՝ նա կոչ է արել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին հրաժարվել «աններելի մեղքից»՝ նկատի ունենալով սիոնիստական ռեժիմի առաջնորդի ընդունումը:

Բաղիրզադեն դիմել է նաև հասարակությանը՝ հորդորելով իրենց բողոքը բարձրաձայնել Նեթանյահուի այցի դեմ և չհանդուրժել «մահմեդական երկրում սիոնիստական ներկայությունը»:

Ըստ ստացված տվյալների՝ բազմաթիվ իսլամական հայացքներ ունեցող քաղբանտարկյալներ ևս միացել են հացադուլին՝ ի նշան համերաշխության Հաջի Թալեհի հետ:

Իրանամետ աղբյուրների պնդմամբ՝ Իսրայելը Ադրբեջանը համարում իր ամենաարժեքավոր ռազմավարական հենարանը իսլամական աշխարհում՝ ԱՄՆ-ից հետո իր ամենամեծ դաշնակիցը[3]:

Թեև Բենյամին Նեթանյահուի այցը Բաքու հետաձգվել է, Իրանը շարունակում է ուշադրությամբ հետևել Ադրբեջանի և Իսրայելի հարաբերությունների զարգացումներին: Թեհրանը այդ կապերը համարում է լուրջ մարտահրավեր ոչ միայն իր ազգային անվտանգության, այլև իսլամական համերաշխության համար տարածաշրջանում: Հաջորդ ամիսներին այդ հարցը կշարունակի մնալ տարածաշրջանային քաղաքական օրակարգի առաջնագծում՝ ներառյալ՝ Իրանի սահմանային անվտանգության, կովկասյան կայունության և, լայն իմաստով՝ Մերձավոր Արևելքի ռազմավարական հավասարակշռության համատեքստում:

Հղումներ

1 https://www.timesofisrael.com/liveblog_entry/report-netanyahu-forced-to-cancel-azerbaijan-visit-because-turkey-barred-him-from-airspace/

2 https://www.isna.ir/news/1404021309226/%D8%A2%D9%86%DA%A9%D8%A7%D8%B1%D8%A7-%D8%AA%D8%B1%DA%A9%DB%8C%D9%87-%D8%AD%D8%B1%DB%8C%D9%85-%D9%87%D9%88%D8%A7%DB%8C-%D8%AE%D9%88%D8%AF-%D8%B1%D8%A7-%D8%A8%D9%87-%D8%B1%D9%88%DB%8C-%D9%87%D9%88%D8%A7%D9%BE%DB%8C%D9%85%D8%A7%DB%8C-%D9%86%D8%AA%D8%A7%D9%86%DB%8C%D8%A7%D9%87%D9%88-%D9%86%D8%AE%D9%88%D8%A7%D9%87%D8%AF

3 https://t.me/QafqazNews2023/2627

Մայիս 28 (*)

Նիկոլ Աղբալեան

Վեց տարի առաջ, պատմական դէպքերու հարկադրանքին տակ, հայ ժողովուրդը «արցունքով» եւ «ակամայ» յայտարարեց իր անկախութիւնը, ինչպէս տեղական թերթերէն մէկը գրած էր հեգնանքով: Հ.Յ. Դաշնակցութեան ղեկավարութեամբ հայութիւնը ո՛չ միայն մերժած էր բաժնուիլ Անդրկովկասեան դաշնակցութենէն, այլ դէմ էր նաեւ Կովկասի ներքին անջատման: Ան դէմ էր այդ անջատման, որովհետեւ գիտէր իր գլխուն գալիքը. գիտէր որ բաժնուելով Անդրկովկասեան դաշնակցութենէն, ինքը պիտի մնար առանձին, գրեթէ մեն մինակ: Վրացիները չէին կրնար թիկունք կանգնիլ մեզի այն բոլոր փորձութիւններուն մէջ, որոնք այդ անջատումով իսկ պիտի յառաջ գային: Մենք, ընդհակառակը, ձրի վահանն էինք Վրաստանի, որովհետեւ թրքական արշաւանք մը անպայման Հայաստանի վրայով պէտք է կատարուէր: Իսկ Ազրպէյճանը ուրախ էր որ իր ցեղակիցները ու կրօնակիցները պիտի ողողէին ողջ Կովկասը: Մենք դէմ էինք անջատման, որովհետեւ գիտէինք թէ ո՛վքեր էին եկողները: Անոնք կու գային միանգամայն լուծելու հայկ. հարցը ոչ՛ թէ դիւանագիտական ճամբով, այլ սրով ու սուինով: Ա՛յս է պատճառը, եթէ մենք Հայաստանի անկախութիւնը յայտարարեցինք «ակամայ» եւ «արցունքով»: Այս իրողութիւնը, զոր իբրեւ պարսաւ կը նետեն մեր երեսին, գովեստ եւ պատիւ է հայ ժողովուրդին եւ իր ղեկավար կուսակցութեան - Հ.Յ. Դաշնակցութեան, - ու նաեւ նշան՝ մեր քաղաքական հեռատեսության:

Մենք ամենքէն աւելի լաւ էինք ըմբռնած ռուս բանակի ներկայութեան արժէքը մեր երկրին մէջ: Ռուս բանակին ետեւ հայ ժողովուրդը կարող էր պահպանել իր ազատութիւնն ու անկախութիւնը: Ու ի վերջոյ ցաւով, բայց սիրով ճամբայ տուինք ռուս բանակին, թէեւ զայն ոչնչացնելը մեր անդնդախոր ձորերուն ու կիրճերուն մէջ շատ դիւրին գործ էր մեզ համար: Վրացիները փակեցին անոնց ճանապարհը, որ Ռուսիա տանող ուղիղ գիծն էր, իսկ թաթարները տասնեակ հազարներով ռուս զինուորներ մորթոտեցին իրենց երկրին մէջ:

Սկիզբները, Ռուսիա յայտարարած էր որ Կովկաս կու գայ ճնշուած ազգերը ազատագրելու համար մահմետական լուծէն. մենք նպաստեցինք անոր այս նպատակով, բայց այն պահուն, ուր շատ պէտք ունէինք իր օժանդակութեան, ճակատագրականօրէն լքեց մեզ եւ չկատարեց իր պարտքը մեզի հանդէպ: Հ.Յ. Դաշնակցութիւնը, որ 30 տարի անընդհատ պայքար մղած էր յանուն ազատութեան, շատ լաւ էր ըմբռնած անոր արժէքն ու գինը. ան գիտէր նաեւ որ իր ուժերը շատ քիչ էին, որովհետեւ մնացած էր մինակ, ինքն իրեն հետ: Ձեզի ամենքիդ ծանօթ է որ

(150-ամեակ)

յաճախ դէպքերը կեանքի մէջ չեն ընթանար այնպէս՝ ինչպէս ցանկալի է մեզ ու մեր հաշիվները սովորաբար սխալ դուրս կու գան. այսպէս եղաւ 1918-ին: Մինչդեռ հայ ժողովուրդը կ'ուզէր որ Ռուսը մնայ Կովկասի մէջ, թաթարներն ու վրացիները տարբեր բաներ կը մտածէին: 1918 Մայիս 26-ին, վրացիք յայտարարեցին որ կ'անջատուին Կովկասեան Դաշնակցութենէն, 27-ին նոյն բանը ըրին թաթարները. մենք մնացինք դարձեալ մինակ: Դեռ 1912 եւ 1914-ին վրացիները կը յայտնէին, թէ Կովկասը կը պատկանի իրենց եւ թաթարներուն միայն: Ա՛լ ի՞նչ կ'ուզէին ուրեմն հայերը, ի՞նչ են իրար անցեր եւ հայկական գաւառներու մասին կը խօսին, - կը գրէին վրացի թերթերը: Հայերը,- կ'աւելցնէին անոնք, -եկուորներ են. մինչեւ Սեւանայ ծովը Վրաստան է, իսկ մնացածը կը պատկանի թաթար խաներուն, որոնք ինքզինքնին կը նկատէին պարսիկների օրինական ժառանգորդները: Եթէ միայն Երեւանը կը զիջէին մէզ, պէտք էր արդէն, իրենց հաշուով, մեծ «շնորհ» մը համարել ատիկա: Ահա այս մտայնութեան տէր եղողները կը յայտարարեին, թէ կ'անջատուին Կովկասեան դաշնակցութենէն: Այս պայմաններուն մէջ է, որ մենք ստիպուած էինք գործ կատարել:Մեր դրացիները դէմ էին հայկական ուրոյն հողամաս ստեղծուելուն, որովհետեւ այդ բանը քաղաքական բարդութիւն յառաջ պիտի բերէր: Անոնց համար վտանգ մըն էր հայ զանգուածի մը կեդրոնացումը՝ իրենց կողքին: Անոնք լաւ գիտէին, որ եթէ հայերուն տրուէր մատ մը հող, այդքան տեղի վրայ իսկ պիտի կազմուէր հայկական բռունցքը, որուն համը առած էին հեղ մը հայ-թաթարական ընդհարումնե-

րու ատեն: Ու հայութիւնը, այսպէս, միշտ կը նկատուէր վտանգաւոր հարեւան՝ արթուն ազգային գիտակցութեամբ, եւ, մանաւանդ, ուժեղ մրցորդ: Արդ, ինչ պէտք էր ընէինք մենք եւ այն կուսակցութիւնը, որ մէկ քառորդ դար պայքարած էր հայ դատին ու հայ հայրենիքին համար: Հայոց տնտեսական դրութիւնը արդէն քայքայուած, 150.000 տաճկահայ գաղթականներու պատսպարման հոգը կ՝աւելնար մեր միւս հոգերուն վրայ, եւ դեռ սով, համաճարակ ... Ինչ ընել. հրաժարի՞լ, հայրենի ժառանգութենէն, գուցէ կ՝ուզէիք որ լքէի՞նք մեր հայրենիքը: Հայ ժողովուրդը, որ 30 տարի Հ.Յ. Դաշնակցութեան դրօշին տակ կռուած էր ու եկած էր ազգային եւ մարդկային արժանապատվութեան, խիզախ ու հերոսական խոյանքներ էր փորձած, Սասունի եւ Վանի անմոռանալի հերոսամարտերը արձանագրած ու հայ-թաթարական ընդհարումներէն յաղթանակով էր դուրս եկած, պէ՞տք էր որ զիջէր իր պապենական ժառանգութիւնը թաթարներուն եւ վրացիներուն, հանդուրժելով ըլլալ անոնց հպատակն ու գերին: Մենք կը գտնուէինք երկընտրանքի առջեւ, կը գտնուէինք այնպիսի կէտի մը վրայ, ուր պէտք էր ընտրել կամ մահ կամ ազատութիւն: Պէտք էր ըլլալ խիզախ ու համարձակ: Ու, ի պատիւ այս ժողովուրդին ու ղեկավար կուսակցութեան, պէտք է ըսել որ ունեցանք այդ առաքինութիւնը, այո՛, «ակամայ», բայց երբեք դասալիք չըլլալու պայմանաւ: Մենք ընտրեցինք ազատութիւնը: Ձարհուրելի էր պատասխանատուութիւնը. Հ.Յ. Դաշնակցութիւնը հերոսաբար իր ուսերուն վրայ առաւ զայն: Կշռեցէ՛ք այն հետեւանքները, որոնք յառաջ եկան այս պատասխանատուութենէն: Տեսէ՛ք հետեւանքը, որ կշռէք ազգին արժանիքը: Երբ ռուսերը երկրորդ անգամ ոտք դրին Կովկաս, թաթարները ո՛չ մէկ դիմադրութիւն փորձեցին, իսկ վրացիները հազիվ երկու օր միայն կրցան պաշտպանել իրենց մայրաքաղաքը, եւ ռուս բանակը հանդիսաւորապէս մուտք գործեց Կովկաս: Սակայն հայ ժողովուրդը 13 ամիս շարունակ կռիւ մղեց ու թէեւ արիւնաքամ, բայց խիզախօրէն ուզեց պաշտպանել իր հայրենիքն ու անկախութիւնը: Մենք պաշտպանեցինք մեր «ակամայ» ազատութիւնը, իսկ անոնք չկրցան պահպանել իրենց **կամովին** անկախութիւնը, հակառակ անոր որ մեզի չափ վնասուած չէին անոնք: Հայը ազատութեան համար դաստիարակուած էր. ան գիտէր ազատութեան արժէքը. չէր ուզած փորձանքին մէջ մտնել, բայց անգամ մը որ մտաւ, գիտցաւ պաշտպանել զայն: Պարզ չէ՞ ազատութեան սէրը՝ որ ամրացած է, ռազմական կորովը՝ որ արթնցած է, խիզախութիւնը՝ որ վերադարձած է, ստրուկը՝ որ ազատուած է հոգիով ու գործով:

Ո՞րն է իմաստը մայիս 28-ի:

Այդ թուին բովանդակ հայ ազգը որ ստրուկ էր թուրքին եւ հպատակ ռուսին՝ կը դառնար ազատ ու անկախ հայրենիքի տէր ու քաղաքացի:

Այն ժողովուրդը, որ սովոր էր միայն իր վիզը երկարել թշնամիին եւ կինը զիջել ուրիշին, Մայիս 28-ին ինքզինք կը հռչակէր ազատ ու անկախ. ան իր ազատութեան համար կռուեցաւ ձմրան ցրտին, բոպիկ եւ մերկ, քաղցած ու արիւնաքամ վիճակի մէջ:

Արեւելեան ու արեւմտեան հայութիւնը միացած Դաշնակցութեան դրօշին տակ, հասած էր ինքնագիտակցութեան, իբրեւ մէկ մարդ:

Ոտնակոխ նահանգները հայրենիքի մասը կազմեցին ու մենք ունեցանք անկախ երկիր, ազատ ժողովուրդ մը եւ զարգացման ընդարձակ հորիզոն:

Եւ ազատութիւնն ու անկախութիւնը տուաւ իր պտուղը. հայ ժողովուրդը երեւան բերաւ անօրինակ եռանդ, անսովոր անձնուիրութիւն, բոլոր ուժերու պրկումը եւ տարի մը ետք, ամբողջ աշխարհին յայտարարեց թէ իր պահանջն է միացեալ եւ անկախ Հայաստանը:

ԺԹ. դարէն առաջ, հայութիւնը միշտ արթուն եղած էր իբր կրոնական միութիւն. ԺԹ. դարու սկզբին ան դարձաւ ազգային միութիւն: Իսկ Մայիս 28-ին արդէն ճանչցուեցաւ իբրեւ քաղաքական միութիւն: Մայիս 28-ը, ուրեմն, հայոց պատմութեան մէկ փուլն է, անջնջելի, լուսաշող ու անմար:

Զարգացման այս փուլին հասնելու համար հայ ժողովուրդը ի սպաս դրաւ իր խիզախութիւնը:

Հ.Յ. Դաշնակցութիւնը իր գործունէութեան ընթացքին եղաւ խիզախ. անոր հետեւելով ազգը զգաց իր վաղեմի ոգու վերազարթնումը ու համակուեցաւ նոյն խիզախիզախութեամբ:

Անոնք միայն կը յոժարին ստրկութեան, որոնց մէջ արթուն չէ խիզախութեան ոգին, որոնց համար արժէք չունի իր պապերուն ժառանգութիւնը - խիզախ ու համարձակ նկարագիր:

Վեց հարիւր տարուան ստրկութիւնը ո՞ր հայուն համար տանելի է այլեւս:

Հարազատ հայորդին պէտք է ըլլայ խիզախ, ատով կը ստեղծուի հզոր կամք, եռուն աշխատանք, համարձակ եւ ազնիւ նկարագիր:

Ստրուկը *հայ* դառնալու համար պէտք է մկրտուի խիզախութեան աւազանին մէջ եւ մաքրուի պատմական մեղքէն:

Մայիս 28-ի աքթը իր արդիւնքը տուաւ. այսօրուան Հայաստանը մեր ճոխ սեղանի փշրանքն է:

Ոմանք եղածը կը նկատեն անկախ. լաւ. բայց մենք ստեղծեցինք զայն մեր խիզախութեամբն ու աշխատանքովը:

Ոմանք կը նկատեն զայն ոչ-անկախ եւ ուրախ են. զարմանալի չէ. ազատ չեղածը ինչ կ՝իմանայ ազատութեան արժէքը:

Հայութեան հոծ զանգուածը, որ ապրեցաւ ու տեսաւ, գիտէ անկախութեան արժէքը:

Մենք եղանք հպատակի ու ստրուկի որդի երէկ, բայց ազատ զաւակի, ազատ հայր ենք այժմ. փորձեցինք անոր տալ անկախ հայրենիք, ու տուինք. յետոյ ձախողեցանք. բայց մեր զէնքերը վար չեն դրուած եւ պայքարը չէ վերջացած մեզ համար:

Եթե չհաջողինք իսկ մեր նոր ճիգերուն մէջ, գոնէ այն մխիթարութիւնն ունինք, որ մեր որդիներուն կը



կտակենք փառաւոր պատմութիւն մը խիզախ ոգորումներով լեցուն:

Մենք ստրկութեան պատմութիւն ժառանգեցինք. կը թողունք յաղթանակի էջեր:

Այսօրուան կիրքերը կը ժխտեն Մայիս 28-ի պատմական նշանակութիւնը. փոյթ չէ. ամէն սերունդ ունեցած է իր ստուերը, որ քարշ կու գայ:

Ժամանակ մը պարզ ազգասիրութիւնը նկատուած էր վտանգաւոր, այսօր ամենեւին. յետոյ յեղափոխութիւնը համարուեցաւ խելառութիւն. այժմ ամէն կողմը կը ծափահարուի:

Հեռու չէ այն օրը երբ Մայիս 28-ը պիտի դառնայ ազգային տօն. այն ժամանակ գուցէ մեռած կ՝ըլլանք մենք եւ մեզի հետ՝ մեր հակառակորդները:

Մոռանալու չէ, սակայն, որ իր փառաւոր անցեալը ժխտողը խառնածին է:

Այժմ՝ հալածական է Դաշնակցութիւնը եւ իրեն հետ նաեւ հայութիւնը:

Բայց Կովկասը կազմակերպուած է մեր քաղաքական իդէալին համաձայն:

Մենք ենք մշակեր եւ կը մշակենք դեռ հայութեան քաղաքական իդէալը:

Երբ Ֆէդէրացիա կ՝ուզէինք մենք, մեզ դէմ էին. հիմա որ մեր ձգտումն է անկախ եւ միացեալ Հայաստանը, մեր հակառակորդները ֆէդէրացիայի գաղափարը կը պաշտպանեն: Երբ մենք մէկ կողմ կը թողունք ոնէ քաղաքական միտք կամ գործելակերպ իբրեւ հինցած, մեր հակառակորդները կը վերցնեն զանոնք եւ կեանք կու տան անոնց: Թող գործեն մեր աշակերտները այս ուղղութեամբ:

Ո՛վքեր գիտեն արժէքը մայիս 28-ի՝ մեզ նման թող գոտեպնդուին. հայութիւնն ազատ է հոգով՝ անազատ կարգերու մէջ. ազատ ոգին անկարող է մնալ անազատ պատեանի մէջ. պատեանը պիտի պայթի եւ անկախ ու միացեալ Հայաստանի մէջ ամենքն անխտիր պիտի տօնեն Մայիս 28-ը:

Ծանոթագրություններ

*) Ն. Աղբալեանի ճառը՝ խօսուած 1 Յունիս 1924-ին, Աղեքսանդրիոյ մէջ:
«ՅՈՒՍԱԲԵՐ» 7 Յունիս 1924, Ժ. տարի թիւ 28
ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՐԿԵՐ 3-ՐԴ,
ՄՏԱԾՈՒՄՆԵՐ էջ 349-354, ՊԷՅՐՈՒԹ 1967 թ.

Նիկոլ Աղբալյան. ազգային գործիչը (ծննդյան 150-ամյակի առթիվ)

Վարդան Պետրոսյան
Բանասեր

Նիկոլ Աղբալյանը[1] 20-րդ դ. առաջին կեսի այն նշանավոր հայերից է, որի գործունեությունը խոր հետք է թողել մեր ազգային կյանքի միանգամից մի քանի բնագավառներում: Նա. 1) Հ. Թումանյանի, Լ. Շանթի, Ա. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի և ժամանակի մյուս երևելիների հետ միասին հայ գրական կյանքի կազմակերպիչներից էր և այն բացառիկ գրաքննադատը, որ եղավ ոչ միայն հիշյալ գրողների երկերի առաջին արժևորողը, այլև ավելի երիտասարդների՝ Վ. Տերյանի, Ե. Չարենցի, Ս. Զորյանի գրական մեծ ապագան անվրեպ կանխատեսողը: Որպես գրական կյանքի կազմակերպիչ՝ Ն. Աղբալյանի մարդկային նկարագրի խոսուն արտահայտություն կարող է համարվել, օրինակ, այն, որ 1909-1913 թթ. ընթացքում Լ. Շանթի «Հին աստվածներ» դրամայի «գրադատական» երեկոների նախաձեռնողներից էր, որոնց միջոցով ոչ միայն գնահատվում և հանրայնացվում էր այդ նշանավոր թատերգությունը՝ ճանաչում բերելով իր հեղինակին, այլև վերջինիս համար ապահովում էր որոշակի նյութական հասույթ: Ի դեպ, Լ. Շանթը, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին գտնվում էր Կ. Պոլսում, իր իսկ վկայությամբ, արևմտահայ մյուս մտավորականների՝ Գ. Զոհրապ, Դ. Վարուժան, Սիամանթո, Ռ. Սևակ, Ռ. Զարդարյան, Խ. Ակնունի և ուրիշներ, ճակատագրից խուսափեց հենց «Հին աստվածների» համար Թիֆլիսից Պոլիս փոխանցված հոնորարի միջոցով[2]. 2) Իր ժամանակի ազդեցիկ հայկական կուսակցության՝ ՀՅԴ-ի երկարամյա ղեկավար դեմքերից էր, որը ոչ միայն գործուն մասնակցություն ունեցավ հայ ազգային կյանքի բոլոր վճռորոշ հարցերի վերաբերյալ որոշումների կայացմանը, այլև այդ որոշումների կենսագործմանը. 3) Ազգային-պետական գործիչ էր, որի՝ որպես *հանրային կրթության նախարարի* անվան հետ են կապվում մեր պետականաշինության ամենից նշանավոր երևույթներից մեկի՝ *Հայաստանի համալսարանի* հիմնադրումը (1919 թ., մայիսի 16) և հանրակրթության համակարգի էական զարգացումը 1919-20 թթ.[3]: Ն. Աղբալյանը նաև «Համազգային հայ կրթական և մշակութային միության» հիմնադիրներից էր և այդ կրթօջախի երկու հիմնասյուներից մեկը՝ Լ. Շանթի հետ միասին: Մի կրթական հաստատություն, որը տասնամյակներ շարունակ եղել է և այսօր էլ է հայկական Սփյուռքի ամենից հեղինակավոր կրթօջախներից մեկը, որտեղից դուրս են եկել բազմաթիվ նշանավոր մտավորականներ, մասնավորապես գրողներ, գրաքննադատներ, խմբագիրներ, հանրային ակնառու գործիչներ, ինչպես Մ. Իշխանը, Ա. Ծառուկյանը, Գ. Բանյանը, Գ. Շահինյանը,

Պ. Մնացականը, Հ. Տասնապետյանը, Ե. Փամբուկյանը և ուրիշներ: Եթե Աղբալյան գրաքննադատի մասին ընդհանուր առմամբ կարելի է պատկերացում կազմել նրա համապատասխան աշխատություններն ուսումնասիրելով, իսկ պետական գործչի մասին այս կամ այն չափով խոսվում է տարբեր առիթներով, ապա *Աղբալյան ազգային գործիչը* նույնիսկ հայ մտավորականության մեծ մասի համար այսօր էլ հիմնականում մնում է անհայտ, որովհետև այդ ոլորտը քաղաքականացված (=կուսակցականացված) է: Մի բան, որը, մեր կարծիքով, անթույլատրելի է ոչ միայն Ն. Աղբալյանի, այլև իր ժամանակակիցներից շատերի դեպքում: Եվ դեռ հարց է, թե գործունեության վերոհիշյալ ասպարեզներից հատկապես որն է ավելի կարևոր Ն. Աղբալյան երևույթը գնահատելու առումով՝ գրաքննադա՞տը, պետակա՞ն գործիչը, թե՞ ազգային գործիչը: Կարծում ենք՝ մի բան կասկածից վեր է. առանց *Աղբալյան ազգային գործչին* ճանաչելու, նրա դիմագիծը ոչ միայն ամբողջական չի լինի, այլև հաճախ նրա խոսքն ու գործունեությունը դժվար ընկալելի կլինեն նաև մյուս ոլորտներում: Ճանաչել Աղբալյան ազգային գործչին, մեր կարծիքով, նույնն է, թե ճանաչել Աղբալյան մարդուն: Իհարկե, Ն. Աղբալյանի՝ որպես մտավորականի և ազգային-պետական գործչի դիմանկարը միաձույլ ամբողջություն է, հետևաբար լիարժեք է միայն նշված բոլոր կողմերի հանրագումարով: Իսկ Ն. Աղբալյան ազգային գործչի մասին մեր պատկերացումը ձևավորվում է ոչ միայն

ժամանակակիցների վկայությունների միջոցով, այլև իր իսկ հրապարակային և գրավոր խոսքերի տողատակերից, որոնք, լինելով հեղինակի վկայություններն ու գնահատականները իր ժամանակակիցների և տարբեր իրադարձությունների մասին, անուղղակիորեն դառնում են նաև վկայություններ իր մասին՝ որպես մարդու և ազգային գործչի, քանզի այդ տողատակերից ակնհայտ են դառնում այն սկզբունքներն ու չափորոշիչները, որոնցով ապրել և գործել է նրանց հեղինակը:

Իսկ որոնք են այն ցուցիչները, որոնց համադրությամբ կարող է ամբողջանալ Ն. *Աղբալյան ազգային գործչի* դիմանկարը: Մեր կարծիքով, այդ առումով կարևոր են հատկապես հետևյալ իրողությունները:

1. Լինելով *գրչի մարդ*՝ նա հաճախ գործուն կերպով ներգրավվում էր գրչից շատ հեռու աշխատանքներում: Մասնավորապես, Ն. Աղբալյանը **Կամավորական խմբերի կարգադրիչ մարմնի** անդամ էր՝ Ռոստոմի (Ս. Զորյան), Արմեն Գարոյի (Գ. Փաստրմաճյան), Հ. Արղությանի, Ա. Գյուլխանդանյանի, բժ. Հ. Ջավրիևի (Ջավրյան) և Ս. Վրացյանի հետ միասին: Նշվածներից, ըստ էության, *գրչի մարդ* էր միայն Ս. Վրացյանը[4]: **Կարգադրիչ մարմինը** (գործել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1914-1917 թթ.) զբաղվել է հայ կամավորական խմբերի կազմավորման, դրանց զինման, հանդերձավորման և պարենամթերքի մատակարարման հարցերով, բնականաբար՝ նշված խնդիրների հետ կապված հարաբերություններ պահպանելով սկզբում՝ ցարական իշխանությունների, ապա՝ *Ժամանակավոր կառավարության* ներկայացուցիչների հետ: Այդ տարիներին Ն. Աղբալյանը նաև հաճախ մեկնել է պատերազմական գործողությունների շրջան և հանդիպումներ ունեցել կամավորական խմբերի հրամանատարների և զինվորների հետ:

2. Առաջին հանրապետության շրջանում՝ 1919-20 թթ., Ն. Աղբալյանը Հայաստանի Խորհրդարանի զինվորական հանձնաժողովի նախագահ Ռ. Տեր-Մինասյանի (1920-ի մայիս - նոյեմբեր՝ *Բյուրո-կառավարության* զինվորական նախարար) հետ միասին ծրագրել է հայ կամավորականների խմբերի միջոցով հանրապետության տարածքը, մասնավորապես՝ Երևանի շրջակայքը և մոտ գավառները թուրքական «տարրից» մաքրելու աշխատանքները: Այդ աշխատանքների առաջին փուլը տեղի ունեցավ դեռևս 1918-ի սկզբներին՝ Մայիսյան հերոսամարտերի նախօրյակին, Արամ Մանուկյանի և Դրոյի գլխավորությամբ[5]: Ս. Վրացյանի վկայությամբ այդ օրերին Ն. Աղբալյանը, որ դեռևս գտնվում էր Թիֆլիսում, քարտեզի վրա ուսումնասիրելով Հայաստանում հայկական և թուրքական բնակավայրերի տեղաբաշխվածությունը, հայ և մահմեդական (իմա՝ թուրք) բնակչության թվային հարաբերակցությունը, թերևս առաջինը հասկացավ, որ առկա վիճակը հայ ժողովրդին իր բնօրրանում ապրելու ոչ մի հեռանկար չի տալիս: «Այդ օրերին Աղբալեանի բոլոր ճառերը Ազգային Խորհրդում վերջանում էին մէկ հանկերգով. «Հայաստանը պէտք է հայացնել»: Հայաստանի հայացման գործի տեսաբանն էր նա[6]:

Տարբեր պատճառներով Արամի և Դրոյի սկսած գործը չհասավ իր տրամաբանական ավարտին: Այդ գործի անավարտ մնալու հիմնական պատճառը, թերևս, հենց Հայաստանի Հանրապետության հռչակումն էր, որը, մի կողմից, թուրքական տարրին մղեց առժամանակ ավելի զուսպ կեցվածք ընդունելու, իսկ մյուս կողմից՝ նորաստեղծ հանրապետության իշխանությունների գործունեությունը գտնվում էր Անտանտի դաշնակից երկրների, մասնավորապես՝ Անգլիայի խոշորացույցի տակ, իսկ նրանք, մեղմ ասած, չէին խրախուսում մահմեդական բնակչության նկատմամբ ուժի կիրառումը: Ոչ պակաս նշանակություն ունեցավ նաև այն, որ Հայաստանի իշխանություններն իրենք էլ փորձում էին թուրք բնակչության պարագլուխների հետ շփումների միջոցով վերջիններին հասկացնել համատեղ խաղաղ ապրելու առավելությունը, որը, սակայն, ցանկալի արդյունք չտվեց:

Այսօր կարող է դժվար ընկալելի լինել, որ Առաջին հանրապետության տարիներին ուժի կիրառումով թուրք բնակչության տեղահանությունը մենք համարում ենք ոչ միայն դրական երևույթ, այլև դրանց կազմակերպիչների և իրագործողների կենսագրության շատ կարևոր բաղկացուցիչը, սակայն այդ իրողություններն իրենց ժամանակի մեջ գնահատելու դեպքում, կարծում ենք, նման հարցեր չեն առաջանա: Իսկ նշված ժամանակաշրջանի նույնիսկ թռուցիկ ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում հետևյալը. 1) հայկական բոլոր բնակավայրերը, այդ թվում Երևանը, շրջապատված էին թուրքական բնակավայրերով, հետևաբար հայկական բնակավայրերի միջև հաղորդակցության ուղիները գտնվում էին նրանց վերահսկողության տակ[7]. 2) Արևելյան Հայաստանի ողջ տարածքում թուրք և ադրբեջանցի էմիսարների դրդումով թուրքական տարրը, որը քանակով առանձնապես չէր զիջում հայ ազգաբնակչությանը

(ըստ 1917-ի վիճակագրության՝ Երևանի նահանգում կար 669 871 հայ և 410 149 մահմեդական (իմա՝ թուրք և «Կովկասի թաթար»[8]), իսկ Կարսի և Ղազախի հետ միասին՝ 854 041 հայ և 577 953 մահմեդական)[9], պարբերաբար, կազմակերպված կերպով ապստամբում էր հայկական իշխանությունների դեմ, կտրում հաղորդակցության ուղիները, սպանում և թալանում հայ ազգաբնակչությանը՝ այդպիսով ձգտելով խոչընդոտել հայկական ղեկավարության կողմից գործադրվող՝ ռազմաճակատին օժանդակելու ջանքերին՝ մինչև Մայիսյան հերոսամարտերը, իսկ ՀՀ հռչակումից հետո՝ արգելակել հայկական պետականության կայացումը Հայկական լեռնաշխարհի թեկուզև մի փոքր մասի վրա՝ ձգտելով «Հայաստանը պայթեցնելու ներսից»[10]: Այս իրողության ակնառու օրինակ էր հատկապես Բեյուք-Վեդիի թրքության ապստամբությունը, որը լուրջ գլխացավանք էր դարձել հանրապետության իշխանությունների համար: Բանը հասել էր այնտեղ, որ Հայաստանի տարածքում ստեղծվել էր երկու ինքնահռչակ մահմեդական «հանրապետություն»՝ ««Արեւմտեան Կովկասի Հանրապետութիւնը»՝ Կարսի «շուրայով» և Արեւելեան Կովկասի կամ «Արաքսեան Հանրապետութիւնը», որի մեջ մտնում էին Սուրմալուն, Զանգի եւ Վեդի բասարները, Միլիին, Շարուրն ու Նախիջեւանը՝ Նախիջեւան կենտրոնով», որոնք ունեին իրենց սեփական բանակները՝ զինված թուրքական զենք-զինամթերքով և չէին ճանաչում ՀՀ իշխանությունների գերակայությունը[11]: Նպատակը մեկն էր՝ ավարտին հասցնել հայության բնաջնջումը և վերացնել վերջին խոչընդոտը Մեծ Թուրանի ստեղծման ճանապարհին: Այս պայմաններում հայ ժողովուրդն իր պատմական հայրենիքի մի փոքր մասի վրա պետականություն կերտելու համար հարկադրված էր դիմելու ծայրահեղ քայլերի, այլապես անդառնալիորեն կկորցներ վերջին հնարավորությունը: Եվ ահա, ի թիվս զենքի մարդկանց, որոնց անցած ճանապարհը նրանց արդեն իսկ կոփել էր նմանօրինակ գործերում, կենսականորեն կարևոր այդ գործում իր ներդրումն ունեցավ նաև *գրչի մարդ* Ն. Աղբալյանը՝ որպես «տեսաբան»: Պահը ճակատագրականորեն հրամայական էր հայ ժողովրդի համար, և եթե օրվա պատասխանատուները չդրսևորեին ճիշտ ժամանակին և բավարար վճռականությամբ գործելու կամք, հայ ժողովրդի արյունարբու թշնամիները նրա ոտքերի տակից տանելու էին իր պատմական հայրենիքի նաև այս փոքրիկ հողակտորը, և ինքը դառնար այլևս աշխարհացրիվ մի թափառախումբ: *Եվ օրվա պատասխանատուները, նախ՝ Արամը և Դրոն, ապա Ռուբեն Տեր-Մինասյանը և Ն. Աղբալյանը դրսևորեցին այդ վճռականությունը*[12]:

3. Ազգի զինվորագրյալին, այդ թվում՝ բարձր պատասխանատվություն ստանձնած գործչին ներկայացվող պահանջների աղբալյանական նշաձողը շատ բարձր էր: Իհարկե, Ն. Աղբալյանն այդ բարձր չափանիշները սահմանում է իր և իր կուսակից ընկերների համար՝ որպես զինվորագրյալների առաջատար ջոկատի ներկայացուցիչների: Վերջիններից նա պահանջում էր անսակարկ և անմնացորդ նվիրում Ազգային գործին: Այդ իմաստով նրա պատկերացումների

ՀՀ կառավարության կազմը. կանգնած ձախից առաջինը՝ Նիկոլ Աղբալյան

արտահայտությունն էր «Մտածումներ Հ. Յ. Դաշնակցության մասին» երկասիրությունը, որը **Ն. Հանգույց** ստորագրությամբ նախ՝ հատվածաբար լույս տեսավ «Դրօշակի» էջերում, ապա առանձին գրքույկով[13]: Հեղինակն այս աշխատանքում իրերի և երևույթների խորքը թափանցելու իրեն բնորոշ սուր դիտողականությամբ ու պատկերավոր լեզվամտածողությամբ ընթերցողի համար բացահայտում է ՀՅ Դաշնակցության էությունը և ուրվագծում է ***տիպար դաշնակցականի*** իր տեսլականը՝ հիմք ընդունելով ՀՅԴ Կանոնագրի մի քանի դրույթ: Այն Կանոնագրի, որի մշակման գործում մեծ էր նաև իր մասնակցությունը[14]: Հիրավի, նշաձողը շատ բարձր է սահմանված նույնիսկ այնպիսի դաշնակցականների դեպքում, որոնց գործը հանուն հայրենիքի և հայ ժողովրդի զոհաբերության խորհրդանիշ է եղել թե՛ ժամանակակիցների և թե՛ սերունդների համար: Այդ պահանջներին ծանոթացող անգամ շատ անվանի դաշնակցականներ, որոնց անունները լուսավորում են ոչ միայն ՀՅԴ 135-ամյա ուղին, այլև զարդարում են հայ ժողովրդի ավելի քան հինգհազարամյա պատմության հերոսական էջերը, պիտի երկմտեին՝ արդյո՞ք իրենց անցած ճանապարհը կարող է քննություն բռնել աղբալյանական չափանիշներով: Դժվար է հիշյալ աշխատությունից առանձնացնել մի միտք, որը կարելի կլինի համարել ամենից բնութագրականը ***տիպար դաշնակցականի*** աղբալյանական ընկալման համար, որովհետև «Մտածումներում» հավասարապես արժեքավոր են բոլոր մտքերը: Բայցևայնպես, որպեսզի մեր խոսքը մերկապարանոց չինչի, անենք մի քանի քաղվածք. ««Դաշնակցականը» պարտաւոր է զոհաբերել, որ հայ ժողովուրդը ապրել կարենայ: Նա ուխտած է դուլ ու դադար չունենալ, «ամէն ջաք թափել», մինչեւ հայ ժողովուրդը ազատուի իր ստորադաս եւ ստրուկ վիճակից»[15]: Կամ՝ «.... «Դաշնակցականն» այսպիսով իր իսկ անձի մէջ վերակազմում է նոր հայութեան տիպարը,

բորբոքելով ժառանգական արութեան կայծերը, որ մնացած են անթեղուած եւ յարաճուն խիզախութեամբ խարանելով ու սպիացնելով ժառանգական ստրկամտութեան վէրքերը: .... Այս յեղաշրջման ճամբին «դաշնակցականը» կորցնում է շատ անձնական շահեր եւ խիզախում է շատ թանկագին կապեր, բայց նրա աչքին չեն երեւում այդ կորուստները, որովհետեւ մի կողմից խթանում է Կանոնագրի պահանջը՝ «ամէն ջանք թափել», որին նա յանձնառու է դարձած, միւս կողմից կշտամբում կամ քաջալերում է նահատակ ընկերների թանկագին յիշատակը, որ հսկում է անմար. ընկերներ, որ ոչ մէկ բանով պակաս էին նրանից, եւ յաճախ շատ բանով առաւել, եւ որոնք, սակայն, մեռան պայքարի ճամբին, կուսակցութեան դրօշը թողնելով իրան»[16]: Կրկին. «.... Ամէն մի «դաշնակցական» կոչուած է Սասունցի Դաւթի նման «թուր կայծակին» շարժելու Մարայ Մելիքի» դէմ. նա պարտաւոր է հոգալ թէ իր բազկի զօրութեան մասին՝ բարոյական տիպարը մշակելով իր մէջ եւ թէ կայծակէ թուրի զօրութեան մասին՝ «ամէն ջանք թափելով», որ նա չգուլանայ եւ չժանգոտի անտեղի եւ անվայել գործերի մէջ, այլ միշտ սրբած ու պատրաստ՝ ասպետական անշահախնդիր ձեռքի մէջ, օրհասական պայքարների օրերին՝ իջնի թափով ու զարկէ սարսափով ...»[17]: Անաչառ լինելու դեպքում պիտի ասել, որ իրականում Ն. Աղբալյանը ոչ այնքան այդպիսի բարձր չափանիշների սահմանողն էր, որքան դաշնակցականի *հավաքական կերպարից* դրանք բյուրեղացնողը՝ որպես ուղենիշ սերունդների համար: Ի դեմս «Մտածումներում» քայլ առ քայլ ուրվագծվող ***տիպար դաշնակցականի***, կտեսնենք և՛ ՀՅԴ հիմնադիր երրորդությանը՝ Քրիստափոր, Զավարյան, Ռոստոմ, և՛ նրանց ոչ պակաս արժանավոր ընկերներին, և՛ հաջորդ սերունդների նվիրյալներից շատերին, որոնց անհոգնել տքնության, զրկանքների ու զոհաբերության գնով սկիզբ առած հայ ազատագրական պայքարը գնալով ծավալվեց, երբեք կանգ չառավ՝ հասցնելով անկախ պետականության ստեղծման հանգրվանին 1918-ին, շարունակվեց Սփյուռքում, շարունակվում է մինչև օրս և այսուհետ էլ պիտի շարունակվի՝ «հարատեւ կռուի» կարգախոսով, քանի դեռ որևէ տեղ ոտնահարված են հայի ազգային իրավունքները: Ն. Աղբալյանի ուրվագծած ***տիպար դաշնակցականը***, սակայն, չի նույնանում հայտնի անուններից և ոչ մեկի հետ, որովհետև, ի վերջո, նրանք էլ մարդիկ էին՝ իրենց երկրային թերություններով ու թուլություններով: Ծնունդով լինելով մահկանացու՝ նրանցից շատերն անմահացան իրենց երկրային գործունեությամբ, որովհետև ողջ գիտակցական կյանքն ապրեցին ու գործեցին ըստ «Մտածումներում» ուրվագծված չափորոշիչների: Ընդ որում՝ նաև այն ժամանակ և հատկապե՛ս այն ժամանակ, երբ ***տիպար դաշնակցականի*** բանաձևումները դեռևս չկային, երբ նվիրյալների ամենօրյա անձնական վարքով էին ուրվագծվում այդ բանաձևերի դրույթները: Նրանցից ոմանք նույնիսկ ուղղորդեցին պատմության անիվը, որքանով դա հնարավոր էր մի փոքրաթիվ և պետականազուրկ ժողովրդի ներկայացուցչի համար: Դեռևս 19-20-րդ դդ. սահմանագծին այդ սկզբունքը բանաձևել էր ՀՅԴ հիմնադիր առաջնորդը՝ Քրիստափոր Միքայելյանը, երբ իր կուսակից համախոհների հետ միասին անձն քառսից շունչ ու կերպարանք էր տալիս հայ ժողովրդի ապագա առաջնորդող հեղափոխական ուժին՝ ՀՅ Դաշնակցությանը. «Պատռել է հարկավոր քարտեզների վրա այս կամ այն ավազակապետի կամքով գծված սահմանները, ջնջել է հարկավոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից և որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատև են լինում: Ո՛չ մի բռնություն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չի կարող բաժանել մի ժողովուրդ, եթե նա, տոգորված ընդհանուր շահերի գիտակցությամբ, ունի նաև կռվելու անսասան վճռողականություն և կապված, միացած է դարերով սնված ու պահպանված ընդհանուր բնազդների ու զգացմունքների առողջ զարկերով»[18]:

Հայացք նետելով Ն. Աղբալյանի անցած ճանապարհին՝ կարող ենք ասել, որ այդպիսի բացառիկ նվիրյալներից մեկն անպայմանորեն ինքն էր՝ «Մտածումների» նշանավոր, բայց և համեստ հեղինակը: Այդպես դատելու հիմք են տալիս ոչ միայն նրա գործունեության մասին ժամանակակիցների վկայությունները[19], այլև այն, որ հակառակ դեպքում պարզապես բարոյական չէր լինի անգամ այդ թեմային անդրադարձը մեկի կողմից, որի կյանքն ու գործը «Մտածումներում» արտացոլված արժեքների վկայումը չէին: Կարծում ենք՝ երկրորդական չէ այն իրողությունը, որ Ն. Աղբալյանը, մեր կարծիքով, «չի համարձակվել» «Մտածումներ ... »-ն ընթերցողին առաջարկել իր անուն-ազգանունով. *լինելով Մեծ Ուսուցիչ՝ այս բառի ընդգրկուն իմաստով, բայց և ծայր ապրիճան համեստ ու խստապահանջ իր անձի նկատմամբ, նա իրավունք չի վերապահել իրեն հանդես գալու* ***դաշնակցականությանը*** *դասեր տվողի դերում, երբ իր կողքին ապրում և գործում էին իրենից ոչ պակաս նվիրյալներ*: Այդ գրքույկն էլ գրել է՝ տեղի տալով Ս. Վրացյանի կրկնվող խնդրանքներին[20]:

4. 1918-ի մայիսի 26-ին Անդրկովկասյան Սեյմի (իմա՝ Անդրկովկասյան Հանրապետության) լուծարումով բարդ իրավիճակ առաջացավ հայության համար. նա դեմ դիմաց միայնակ էր մնում իր ոխերիմ թշնամու՝ թուրքի հետ, չնայած որ Սեյմի գոյության ընթացքում ռազմաճակատի ամբողջ ծանրությունը դարձյալ հայ ժողովրդի ուսերին էր՝ նրա ղեկավար ուժի՝ ՀՅԴ-ի առաջնորդությամբ: Այդ ծանր պահին, երբ պետք էր դիրքորոշվել ապագայի հարցում, ոչ բոլոր ղեկավար գործիչներն էին կարողանում վճռական կարծիք հայտնել, որովհետև իրավիճակը թվում էր փակուղային:

Ն. Աղբալյանն այն գործիչների թվում էր, որոնք, վերլուծելով ստեղծված կացությունը, շատ արագ կողմնորոշվեցին հօգուտ անկախության հռչակման՝ գիտակցելով, որ, չնայած սպասվելիք դժվարություններին, հայ ժողովուրդը պարզապես այլ ելք չունի. «Բայց, պարոններ, ... մի՛ մոռացէք, որ հայոց ժողովուրդը անհաշիւ սերունդներով անկախութիւն է երազել: Նա չի ակնկալել, որ անկախութիւնը անպատճառ ծափ ու ծիծաղով պիտի գայ: Նա պայքա-

րել ու երազել է: Եվ ահա անկախութիւնը գալիս է: Գալիս է գուցէ անժամանակ, գուցէ մենք դեռ պատրաստ չենք նրան արժանավայել կերպով ընդունելու, բայց գալիս է: .... »,- հիշում է Ս. Վրացյանը[21]: Անկախության հռչակումը ոչ միայն անխուսափելի էր, այլև վտանգավոր էր հապաղելը, որովհետև երկու հարևանները՝ վրացիներն ու Կովկասի թաթարները (= ադրբեջանցիները) արդեն հռչակել էին իրենց անկախությունը: Ուշացնելու, էլ չենք ասում՝ անկախություն չհռչակելու դեպքում հետևանքը կլիներ հայրենիքի կորուստը, որովհետև այդ պարագայում մեր երկու հարևանները կհավակնեին տեր դառնալ նաև հայկական գավառներին: Այդպիսի հավակնություններ երկուսն էլ ունեին և դրսևորեցին ՀՀ առաջին իսկ ամիսներից սկսած: Ն. Աղբալյանի դերը մեծ էր քննարկման մասնակիցներին հօգուտ անկախ պետականության կողմնորոշելու հարցում[22]: Ավելին, Ն. Աղբալյանը գործուն մասնակցություն է ունեցել նաև անկախության մասին «Յայտարարութեան» տեքստի պատրաստմանը. նա անկախության հայտարարության տեքստը կազմող հանձնախմբի անդամ էր՝ Ա. Ահարոնյանի, Հ. Քաջազնունու և Ա. Խատիսյանի հետ միասին[23]: Ըստ անկախության մասին «Յայտարարութեան»՝ «**Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառների գերագոյն եւ միակ իշխանութիւն**»[24]: Չնայած մի կողմից՝ պահի գերզգայունությանը, որը կարող էր նաև սխալվելու դուռ բացել, իսկ մյուս կողմից՝ վիթխարի պատասխանատվությանը, որ ինքնաբերաբար ստանձնում էին անկախություն հռչակելու կողմնակիցները (ինչու ոչ, քննարկման բոլոր մասնակիցները, անկախ իրենց դիրքորոշումներից), պիտի ասել, որ խորհրդաժողովը հրապարակեց խիստ հավասարակշռված հայտարարություն[25]: *Անկախության հռչակումը վերոհիշյալ ձևակերպումով «Յայտարարության» տեքստի հեղինակների քաղաքական իմաստունության աներկբա վկայություն է*, որովհետև այդ պահին ապագա պետության որոշակի սահմաններ նշելը, երբ պատմական հանգամանքների բերումով դարեր ի վեր Հայաստանի սահմանները ջնջվել ու ձևախեղվել էին, հայության կրկնվող արտագաղթերի և նվաճողների բռնազավթումների հետևանքով դրանք գորդյան հանգույցի պես խճճված էին,- առնվազն նշանակում էր՝ 1) ի սկզբանե նորաստեղծ պետության նկատմամբ թշնամաբար տրամադրել երկու հարևաններին, որոնց հետ կային սահմանային վեճեր, 2) Հայաստանի ապագա իշխանություններին կաշկանդել պետության սահմանները, ըստ հնարավորին, ճշգրտելու հարցում: Այս տեսակետն ընդունելու դեպքում պիտի ընդունենք նաև, որ *օրվա իմաստուն ազգային գործիչների թվում էր Ն. Աղբալյանը*, որքան էլ որ նա «իր էութեամբ քաղաքական մարդ չէր»[26]:

5. Ն. Աղբալյանն օժտված էր հանրային գործչի համար շատ կարևոր ունակությամբ՝ հռետորական տաղանդով[27]: Երևույթներն ու փաստերը կուռ տրամաբանությամբ համակցելու և պատկերավոր լեզվամտածողությամբ դրանք շարադրելու ձիրքը նրա բանավոր խոսքը դարձնում էին տպավորիչ և ազդեցիկ: Այդ խոսքը հաճախ է հնչել մեր ազգային

Նիկոլ Աղբալյանը և մարտական գործիչ Վարդան Շահբազը

կյանքի շրջադարձային պահերին և իր արժանավոր ժամանակակիցների կյանքն ու գործը գնահատելու առիթներով: Նրա խոսքի ուժը մենք արդեն զգացինք անկախության «Յայտարարության» առնչությամբ: Այժմ մեկ այլ օրինակ. 1919 թ. փետրվարի 1-ին հայ ժողովուրդը վերջին հրաժեշտն էր տալիս իր մեծ զավակներից մեկին՝ Արամ Մանուկյանին[28], որը հետո պիտի հռչակվեր Առաջին Հանրապետության հիմնադիր[29]: Օրվա բանախոսների թվում էր նաև Ն. Աղբալյանը: Ըստ Ա. Աստվածատրյանի՝ «Դաշնակցութեան Տան առջեւ դամբանականներ խօսուեցին: *Հոյակապ էր ու անմոռանալի մանաւանդ Նիկոլ Աղբալեանի խօսքը* (շեղը իմն է՝ Վ.Պ.)»[30]:

6. Շրջադարձային պահերին դրսևորելով արագ կողմնորոշվելու ունակություն և անգիջում կեցվածք իր տեսակետները պաշտպանելիս[31]՝ Ն. Աղբալյանը, այնուամենայնիվ, չէր առաջնորդվում այսրոպեական թելադրանքներով: Լինելով Դաշնակցության գաղափարախոսության հետևողական կրողն ու զարգացնողը, նա, այնուամենայնիվ, կուսակցական գործիչ չէր այդ բառի նեղ իմաստով, այլ՝ լայնախոհ ազգային գործիչ, որն ունակ էր կանխատեսելու վաղվա օրը և իրերն ու երևույթները գնահատելու այդ հեռանկարով: Նրա այդ հատկությունը դրսևորվել է ինչպես կուսակից ընկերների, այնպես էլ նույնիսկ կուսակցական-քաղաքական այլ դավանանքի կրողների առնչությամբ: Այսպես.

Ա) Հայտնի է, որ 1917-ից սկսած՝ զորավար Անդրանիկը անհաշտ էր ՀՅԴ ղեկավարության հետ[32]: Այդ հանգամանքը, ի վերջո, հանգուցալուծվեց Դաշնակցությունից Անդրանիկի հեռանալով, որից հետո թեպետև նրա նկատմամբ Դաշնակցության մեջ ձևավորվեց սառնության որոշ մթնոլորտ, բայցևայնպես դա չբերեց նրան, որ Դաշնակցությունը վերատեսության ենթարկեր Անդրանիկի գործը կամ ուրանար նրա ծառայությունը Ազգային Դատին: Ասվածի վկայությունները կարող են համարվել տարբեր առիթներով ՀՅԴ հեղինակավոր գործիչների, այդ թվում՝ Ն. Աղբալյանի, բարձր գնահատականները Անդրանիկի մասին: 1927-ի օգոս-

տոսի վերջին վախճանվեց զորավար Անդրանիկը: Եգիպտահայ գաղթօջախում ազգային հերոսի հիշատակի միջոցառման բանախոսն էր Ն. Աղբալյանը: Անշուշտ, նրա ճառը լեգենդար հայդուկապետին ըստ արժանվույն տրված տուրք էր, բայց մեզ համար այդ խոսքից կարևոր է հատկապես երկու երևույթ. Ն. Աղբալյանը՝ 1) մեծարանքի իր խոսքում չի խուսափում ենթատեքստով ակնարկել նաև Անդրանիկի խոցելի կողմերի մասին (հմմտ. «Նա գիտէր իր արժէքը, բայց նրա մեծութիւնը որոշում էր քծնողի եւ հիացողի չափերով, ուստի ծանր էին գալիս նրան իր ճշմարիտ բարեկամները: Բայց քծնողին արհամարհում էր, հիացողին հեգնում, իսկ ճշմարիտ բարեկամներից ակնածում»)[33], 2) վստահորեն կանխատեսում է Անդրանիկի գործի, հետևաբար նաև անվան անմահությունը հայոց պատմության մեջ (հմմտ. «Այն ամենը որ մնայուն է նրա մէջ եւ արժանի յիշատակութեան՝ նրանով մենք նրա համար պարտական ենք ազնուական հայ ցեղին, *իրան* (շեղը իմն է՝ Վ.Պ.) եւ Դաշնակցութեան, իսկ այն ամենը, որ դատապարտուած է մոռացման՝ արդիւնք է աննպաստ պայմանների եւ խորթ ազդեցութեան: *Նրա անունը միշտ կը շողայ հայ պատմութեան մէջ, եւ վաղն աւելի քան այսօր*» (շեղը իմն է՝ Վ.Պ.))[34]: Աղբալյան ազգային գործչի մասին բավականաչափ պատկերացում ունեցողը չի կարող չնկատել, որ նա Անդրանիկին վայել գնահատանքի խոսք հնչեցնելով հանդերձ, անգամ այդ զգայուն պահին, երբ ողջ հայությունը համակված էր ազգային հերոսի մահվան վշտով, հավատարիմ մնալով իր ուղղամիտ էությանը, ակնարկում է նաև նրա որոշ թերությունների մասին[35]: Սակայն դա Աղբալյանն անում է այնքան նրբորեն, կարծես՝ ոչ թե բուն տեքստում, այլ միջտողային բացատներում, որոնք կարող է նկատել միայն հմուտ ընթերցողը, բայցև որոնք ամենևին չեն ստվերում ազգային հերոսի մասին ընթերցողի բարձր տպավորությունը:

Բ) Խստապահանջ լինելով իր և կուսակից ընկերների հանդեպ ազգի և հայրենիքի առջև իրենց պարտքի կատարման առումով՝ Ն. Աղբալյանը, սակայն, ուներ մի թուլություն. *դա փաղանդավոր հայ մտավորականն էր*: Այն, ինչն աններելի էր սովորական մահկանացուին, ըստ Աղբալյանի, ներելի էր, օրինակ, տաղանդավոր գրողին: 1915-ին՝ բոլշևիկների շարքերը համալրած և զինվորական ծառայությունից խուսափող Վ. Տերյանի մասին նա բավարարվեց՝ միայն ասելով. «Տեսնո՞ւմ ես, չի ուզում էշ նահատակ լինել ... Մարդը չի ուզում էշ նահատակ լինել ... Հայրապետներն ու Կարապետները կարող են էշ նահատակ լինել, իսկ ինքը վերի արտի ցորենն է»[36]: 1920-ին Աղբալյանը Չարենցին աշխատանքի ընդունեց կրթության նախարարությունում չհամալրված միակ՝ «անձնական քարտուղարի» հաստիքի վրա (այլապես նա մտադիր էլ չէր այդ հաստիքը համալրել), որպեսզի խոստումնալից բանաստեղծը պետական «թոշակ» ստանա և ստեղծագործի, սովից չմեռնի, իսկ նույն Չարենցը «երազում էր թէ երբ որ Հայաստան գան բոլշեւիկները, ինքը իր ձեռքով կախաղան բարձրացնէ «դաշնակ մինիստր Աղբալեանին»»[37]: Այն Աղբալյանին, որը «սարսելով դահիճն ու ֆոյէն – // աւետեց ամբողջ աշխարքին, // որ ծնուել է – մեծ մի պօէտ ...»՝ ի դեմս Ե. Չարենցի[38]: Իհարկե, ավելի ուշ Չարենցը գիտակցել է իր սխալը: Այդ մասին են վկայում ընդամենը երկուերեք տարի անց Ն. Աղբալյանին նվիրած գրքերի վրա նրա արած ընծայագրերը (հմմտ. «Սիրելի Նիկոլ Աղբալյան, ընդունեք իմ գրքերը որպես հարգանքի և համակրանքի նշան: 28.1. [1]923, Երևան», «Սիրելի Նիկոլ Աղբալյանին, իմ առաջին ուսուցչին, որին ես երբեք չեմ մոռանա և երբեք չեմ դադարի հարգել» և այլն)[39], սակայն, ըստ Ս. Վրացյանի, «Նիկոլը չհաւատաց Չարենցի անկեղծութեան ու չներեց ... »[40]:

7. Ն. Աղբալյանն ամբողջ կյանքում ապրել է պարզ ու համեստ կենցաղով, եթե չասենք՝ աղքատության մեջ: Մշտապես տարված լինելով ազգային-կուսակցական գործերով՝ նա կարծես չի էլ նկատել նյութական դժվարությունները՝ ակամա նույն կենսակերպին ենթարկելով նաև իր ընտանիքը[41]: Այդ կենսակերպը նրան վարժեցրել է ծայրահեղ խնայողականության նույնիսկ այն դեպքերում, երբ կարող էր իրեն ավելի ազատություն տալ: Ոմանք այս երևույթի մեջ փորձել են տեսնել նաև ժլատության տարրեր, մեր կարծիքով, սակայն, դա այդպես չէ: Ն. Աղբալյանը չէր կարող իրեն «շռայլություն» թույլ տալ, երբ ընտանիքը Երևանում դժվարության մեջ էր և շուրջը օրվա գոյության պայքար էին մղում իր բախտակից տարագիրները: Բացի այդ, նա միշտ աչքի է ընկել անանձնական կենսակերպով. նրա ողջ կյանքն ազգին անմնացորդ ծառայելու բացառիկ օրինակ էր: Մի պահանջ, որ, ինչպես տեսանք, ինքը ներկայացնում էր ***տիպար դաշնակցականին***: Ժլատ թվացող Աղբալյանը, ժողովրդական լեզվով ասած, կտրելով իրենից և իր ընտանիքից՝ խնայած միջոցները տալիս էր ազգին. նա տարիների ընթացքում քիչ-քիչ խնայած դրամով «սեփական տուն մը կշինէ Շթորայի մէջ եւ իր շինածը ազգին կը նուիրէ, ձեռքի մէկ շարժումով»[42]: Սա թերևս, բացառիկ իրողություն էր իր նման սուղ միջոցներով ապրող մտավորականի դեպքում:

Մեկ այլ օրինակ ևս: 1920-ականների վերջերից Ն. Աղբալյանը հայերենագիտական հոդվածներով թղթակցում է Վիեննայի Մխիթարյանների «Հանդես ամսօրյա»-ին: Այդ գիտական հրապարակումների համար ոչ միայն Մխիթարյանները նրան հոնորար չեն տվել, այլև ինքը կանոնավոր կերպով բաժանորդագրվել է հանդեսին, որպեսզի այն չդադարի լույս տեսնել, որովհետև, ըստ Աղբալյանի, դա «մէկ թերթ է, որի ընթերցողները միայն իր աշխատակիցներն են: Եթէ մենք ալ չվճարենք, թերթը էլ լոյս աշխարհ չի գար ... »[43]:

Ն. Աղբալյանը ոչ միայն *տիպար դաշնակցական* էր, այլև *տիպար մտավորական* էր, որն իրեն բաժին ընկած խաչը պատվով է կրել բոլոր իրավիճակներում: Հանուն իր ժողովրդի և հայրենիքի նա զոհաբերել է ամեն ինչ, որ ուներ երկրային կյանքում, նույնիսկ ընտանիքը և փոխարենը չի ակնկալել ոչինչ: Նա այն մտավորականներից էր, որոնց խոսքն ու գործը երբեք չեն հակասել միմյանց և այն բացառիկ *ազգային գործիչներից*, որոնց կյանքն ու գործը պիտի ուղենիշ լինեն առաջնորդության հավակնություններ ունեցողների համար: ■

Հղումներ

1 Իմա՝ Նիկողայոս (տես Հայաստանի Հանրապետության Պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Եր., ՀԱԱ, 2010, էջ 597):
2 Տես Լևոն Շանթը իր մասին // Լևոն Շանթ. մարդը և գործը, Եր., 2019, էջ 50-51:
3 Տես Ս. Վրացեան, Նիկոլ Աղբալեան // նույնի՝ Անձինք նուիրեալք, Պէյրութ, 1969, էջ 197-198,- Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Թեհրան, 1982, էջ 283-285:
4 Ս. Վրացյանը 1907-39 թթ. ընթացքում, կուսակցական և պետական տարբեր կարգավիճակների բերումով պայմանավորված որոշակի ընդմիջումներով, խմբագրել է ՀՅԴ բազմաթիվ պարբերականներ, որոնց թվում՝ 1910-11 թթ. «Յառաջ» (Կարին), 1912-14 թթ. «Հայրենիք» (Բոստոն. ԱՄՆ), 1922-23 թթ. «Հայաստանի ձայն» (Փարիզ), 1927-1933 թթ. «Դրօշակ» (Փարիզ. Ա. Ջամալյանի մասնակցությամբ), 1933-39 թթ. «Վէմ» (Փարիզ) և այլն (տես Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 684): Նա հեղինակ է նաև բազմաթիվ աշխատությունների (հմմտ. «Հայաստանի Հանրապետութիւն» (1-ին հրատ., Փարիզ, 1928. 2-րդ հրատ., Պէյրութ, 1958), «Կեանքի ուղիներով» (Կահիէ, 1955. 6 հ.-ով), «Հայաստանը բոլշեւիկեան մուրճի և թրքական սալի միջեւ» և այլն): Ս. Վրացյանը կազմել և հրատարակել է ՀՅԴ գործունեությանը վերաբերող մի շարք արժեքավոր ժողովածուներ (հմմտ. «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան» (հ. Ա, Պոսթըն, 1934, հ. Բ, Պոսթըն, 1938), «Վաթսունամեակ» (1950), «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան» (1950) և այլն):
5 Տես Ս. Վրացեան, Հայաստանի .... , էջ 123-137,- Մ. Աբրահամյան, Իմ հիշելի հուշերը, Եր., 2016, էջ 261-272,- Ա. Աստուածատրեան, Արամը // Արամը (մահուան յիսնամեակին առթիւ), Պէյրութ, 1969, էջ 101-103,- Հ. Գևորգյան, Դրո, Եր., 2014, էջ 234-260:
6 Տես Ս. Վրացեան, Նիկոլ Աղբալեան // Անձինք .... , էջ 197:
7 Տես Ս. Վրացեան, Հայաստանի ...., նույն տեղում,- Մ. Աբրահամյան, նույն տեղում,- Ա. Աստուածատրեան, նույն տեղում,- Հ. Գևորգյան, նույն տեղում:
8 Ժամանակակից ըմբռնումով՝ ադրբեջանցի:
9 Այլ ազգությունների ներկայացուցիչների թիվը 34 478 էր, որից 374-ը՝ վրացի (տես Ռուբէն, Հայ յեղափոխականի մը .... , էջ 179):
10 Տես Ռուբէն, նշվ. աշխ., էջ 182:
11 Տես Ս. Վրացեան, Հայաստանի .... , էջ 292-302,- Ռուբէն, նշվ. աշխ., էջ 177-218:
12 Տես խմբ. Մուշեղ (Սասունցի) Ավետիսեանի յուշերը // Ռուբէն, նշվ. աշխ., էջ 108-117:
13 Տես Ս. Վրացեան, Նիկոլ Աղբալեան // Անձինք ...., էջ 207:
14 Տես Ս. Վրացեան, Նիկոլ Աղբալեան // Անձինք ...., էջ 208:
15 Ն. Աղբալեան, Ամբողջական երկեր, հ. III (Մտածումներ), Պէյրութ, 1967, էջ 245-246:
16 Ն. Աղբալեան, նշվ. աշխ., էջ 246:
17 Նույն տեղում, էջ 253:
18 Ք. Միքայելյան, Կովկասահայի տագնապը // Հեղափոխականի մտքերը, Եր., 1990, էջ 98-99:
19 Հմմտ. «Նիկոլն իր հոգեկան կառուցուածքով հաւատարիմ շարունակողն էր Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր սերունդի գաղափարապաշտ աւանդոյթների» (տես Ս. Վրացեան, Նիկոլ Աղբալեան // Անձինք .... , էջ 182):
20 Տես Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 207:
21 Տես Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 194-195:- Ըստ էության, նույն բանը նկատի ունի Հ. Տասնապետյանը՝ գրելով. «Անկախութեան վճռական յայտարարութիւն ըլլալէ աւելի, դէպքերու գահավէժ եւ անհակակաշիռ ընթացքով պարտադրուած իրողական վիճակի մը հաստատումն է ան» (Հ. Տասնապետեան, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. ընդհ. ժողով (1890-1924), Պէյրութ, 1988, էջ 128, ծանոթ. 37):
22 Ըստ Ս. Վրացյանի՝ Ն. Աղբալյանի ճառը Հայոց Ազգային Խորհրդի նիստում «կարելի է ասել, վճռեց հարցը» հօգուտ անկախության (տես Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 194-195):
23 Տես Ա. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 84:
24 Տես Ս. Վրացեան, Հայաստանի .... , էջ 158,- Ա. Խատիսեան, նույն տեղում:
25 Ըստ Ռ. Տեր-Մինասյանի՝ հիշյալ միտքը «Հայ ամենամեծ հայրենասէր Ստեփան Մամիկոնեանի» «վարպետ բանաձեւումի» արդյունք է (տես Ռուբէն, նշվ. աշխ., էջ 137):
26 Ս. Վրացեան, Նիկոլ Աղբալեան // Անձինք .... , էջ 189:
27 Հմմտ. «Նիկոլը, առհասարակ, սքանչելի խօսող էր» (տես Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 192): Նաև՝ «Ազգուգական հռետոր մըն էր....» (տես Գ.Բ. [Գառնիկ Բանեան], Նիկոլ Աղբալեան (ուրուագծեր կեանքի եւ գործի մասին) // Ն. Աղբալեան, Ամբողջական երկեր. հ. I. (Գրական-քննադատական երկեր), Պէյրութ, 1959, էջ ԺԲ):
28 Ըստ Ա. Աստվածատրյանի՝ Արամը մահացել է «Յունվար 29ին, ցերեկուայ ժամը 3ին» (տես Ա. Աստուածատրեան, Արամը // նշվ. աշխ., էջ 144), իսկ Ս. Վրացյանը նշում է հունվարի 26-ը (տես Ս. Վրացեան, Հայաստանի .... , էջ 239): Կարծում ենք՝ առաջին տվյալն ավելի հավանական է:
29 Դրանից տասն օր առաջ Թիֆլիսում հրաժեշտ էին տվել ժամանակի մյուս հսկային՝ ՀՅԴ հիմնադիր երրորդության վերջին ներկայացուցչին՝ Ռոստոմին, որի անունը շուրթերին մնաով և Արամը (տես Արամ Մանուկեան // Արամը, էջ 149):
30 Տես Ա. Աստուածատրեան, նշվ. աշխ., էջ 145:- Ն. Աղբալյանի խոսքն, ըստ ամենայնի, չի ունեցել գրավոր տարբերակ, առնվազն նրա երկերի քառահատորում այդպիսի տեքստ չի հանդիպում:
31 Հմմտ. «Աղբալեանը, դուրսէն կակուղ շաքար, բայց ներքնապէս անկոտրում յամառ» (տես Ա. Ծառուկեան, Հակադիր երկուռեակներ // նույնի՝ Մեծերը եւ միւսները, Պէյրութ, 1992, էջ 44:
32 Հակադաշնակցական ճամբարի ներկայացուցիչները հաճախ են փորձել այս հանգամանքը օգտագործել իրենց ճղճիմ կուսակցական-քաղաքական հաշվարկների համար՝ Անդրանիկին՝ որպես ազգային հերոսի, հակադրելով ՀՅԴ-ին: Մեր կարծիքով, Անդրանիկ-ՀՅԴ բարդ հարաբերությունների ճիշտ բացատրությունը տվել է Ա. Ահարոնյանն իր «Անդրանիկ» երկում (տես Ա. Ահարոնյան, Անդրանիկ // նույնի՝ Խավարի մեջ, գ. Բ, Եր., 1991, էջ 467-512):
33 Ն. Աղբալեան, Անդրանիկ // նույնի՝ Ամբողջական երկեր, հ. III, էջ 332-333:
34 Ն. Աղբալեան, նշվ. աշխ., էջ 334:- Ընդհանուր առմամբ Անդրանիկին նույն շեշտադրումներով է գնահատում նաև Ա. Ահարոնյանը, որը նաև անձնական բարեկամություն է ունեցել զորավարի հետ (տես Ա. Ահարոնյան, Անդրանիկ // նշվ. աշխ.):
35 Ուրիշները Անդրանիկի խոցելի կողմերի մասին ավելի բաց են գրել, ընդ որում՝ ընդհանուր առմամբ լինելով նրա գործի գնահատողներ (հմմտ., օրինակ, Ս. Վրացեան, Վերջին խօսք՝ Անդրանիկի մասին // Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (քառահատոր շարք), հ. Գ, Աթէնք-Երեւան, 1992, էջ 376-380,- Վ. Ահարոնեան, Անդրանիկ. մարդը եւ ռազմիկը, Եր., 2019, էջ 297-337:
36 Տես Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով, հ. Ա, Պէյրութ, 2007, էջ 178:- Ն. Աղբալյանը կրկնում է Վ. Տերյանի խոսքը (տես նույն տեղում):
37 Տես Ս. Վրացեան, Նիկոլ Աղբալեան // Անձինք .... , էջ 198:
38 Տես Եղիշէ Չարենց, Երկերի ժողովածու, հ. II, Էպիքական պոէմներ, Մոսկվա, 1922, էջ 275 (հմմտ. Ն. Աղբալեան, Ամբողջական երկեր. հ. I., էջ 330):- «Չարենց նամե» պոեմի այս տողերը ավելի ուշ՝ հավանաբար 1930-ականներին, երբ հալածանքների օղակը սեղմվում էր Չարենցի շուրջը, վերջինս խմբագրել է՝ «երբ Նիկոլ Աղբալեանը մի օր» տողը դարձնելով «երբ մի լուրջ քննադատ մի օր» (հմմտ. «Էլ ինչո՞ւ ծիծաղեր հոգիս, // Երբ մի լուրջ քննադատ մի օր // Սարսելով դահիճն ու ֆոյեն – // Ավետեց ամբողջ աշխարքին, // Որ ծնվել է – մեծ մի պոետ» - տես Ե. Չարենց, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. I, Եր., 1986, էջ 429):
39 Տես Ե. Չարենց, Գիրք մնացորդաց, Եր., 2017, էջ 252-253:
40 Տես Ս. Վրացեան, Նիկոլ Աղբալեան // Անձինք .... , էջ 199:
41 Տես Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 181:
42 Տես Ա. Ծառուկեան, Մեծերը եւ միւսները, էջ 11:
43 Ա. Ծառուկեան, նշվ. աշխ., էջ 34:

Նիկոլ Աղբալյանի հրապարակագրությունը 1917 թ.

Արմեն Մանուկյան
Բանասիրական գիտությունների թեկնածու ՀՀ ԳԱԱ
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի աշխատակից

Հրապարակագրությունն անվանի գրականագետ, գրաքննադատ, հանրային, քաղաքական և պետական գործիչ, մանկավարժ, մեծ հայ Նիկոլ Աղբալյանի (1875-1947) բեղուն գործունեության ուշագրավ կողմերից մեկն է, որն առ այսօր պատշաճ ուշադրության չի արժանացել ուսումնասիրողների կողմից: Որպես ազգի ճակատագրով մտահոգ հայ մարդ, մտավորական և ՀՅԴ գործուն անդամ, 1904-ից՝ Աղբալյանը չէր կարող չարձագանքել իր ժամանակի քաղաքական իրադարձություններին, որոնք ուղղակիորեն առնչվում էին հայության առօրյա կյանքին ու ճակատագրին և խորհելու ու մտահոգվելու տեղիք տալիս՝ կապված մեր ժողովրդի ապագայի հետ:

Աղբալյան հրապարակագրի գործունեության սկիզբ կարելի է համարել 1894 թ., երբ Գևորգյան ճեմարանը չավարտած, բայց այնտեղ սովորած լինելու վկայագիր ստացած 19-ամյա պատանին Էջմիածնից Թիֆլիս ճանապարհորդելու ընթացքում գրած իր «Հիշատակարան»-ում դաժան քննադատության է ենթարկել ժամանակի հայ իրականությունը, մասնավորապես՝ ժողովրդի վերաբերմունքը իր սրբավայրերի նկատմամբ և հայ հետամնաց, տգետ ու շահամոլ հոգևորականներին՝ դրսևորելով խուզարկու հայացք ու վերլուծական միտք ունեցող մտավորականի ակնհայտ ունակություններ (տե՛ս Աղբալյան Ն., *Հիշատակարան* // «Մշակույթ» ամսագիր, Երևան, 1989, թ. 2-3, էջ 112-115):

Որպես քաղաքական վերլուծաբան՝ Աղբալյանի գործունեությունն սկսվել է 1905 թ., երբ նա Պլովդիվի «Ռազմիկ» թերթում նոյեմբերին և դեկտեմբերին տպագրել է «Ուսումնասիրություն հայ-թաթարական ընդհարումների» վերլուծական հոդվածը (անավարտ), իսկ 1906 թ. Թիֆլիսի «Ալիք» օրաթերթում՝ «Շուշիի ընդհարումները» թղթակցությունը՝ 1906 թ. ամռանը հայ-ադրբեջանական կռիվների մասին: Հետագայում նրա ուշադրությունը գրավել են 1908-ին Եգիպտոսում, 1910-ին՝ Պարսկաստանում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադարձությունները, 1912-1913 թթ.՝ Բալկանյան երկու պատերազմները, որոնք լուսաբանելիս Աղբալյանը ցուցաբերել է քաղաքագետի ակնհայտ ունակություններ՝ բացատրելով պատերազմների պատճառները, հակառակորդ կողմերի նպատակները և հաճախ կանխատեսելով ռազմական գործողությունների ընթացքը (տե՛ս Անանյան Գ., *«Բալկանյան իրադարձությունները Ն. Աղբալյանի հրապարակախոսության մեջ»* // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1995, թ. 2, էջ 18-29):

1914-ին սկսված Առաջին աշխարհամարտը և դրան հետևած խանդավառությունը հայության շրջանում

ստիպել են Աղբալյանին դառնալ կամավորական շարժման կազմակերպիչներից մեկը: «1914 թից վարել եմ կամաւորական գործը իբր Կարգադրիչ Յանձնաժողովի անդամ, իսկ յետոյ իբր պահեստի բատալիոնի (գումարտակի – Ա. Մ.) պետ»,- գրել է նա իր ինքնակենսագրության մեջ (տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 307, ց. 1, գ. 18, թ. 28): 2-3 տարիների ընթացքում Աղբալյանը, ինչպես և կամավորական շարժման արդյունքում Արևմտյան Հայաստանը թուրքական դարավոր լծից ազատագրելու հույսեր փայփայող մյուս հայորդիները ապրել են հույսի ու հուսահատության բազմաթիվ պահեր, մինչև որ վրա է հասել 1917 թվականը, տարի, որի ընթացքում մեծապես նախապատրաստվել է 1918-ի մեծագույն իրադարձությունը՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը մայիսի 28-ին: Այդ իրադարձությանը ամենաանմիջական մասնակցություն է ունեցել Աղբալյանը ինչպես իր ելույթներով (տե՛ս Վրացյան Ս., *Նիկոլ Աղբալեանի մասին* // «Ակօս», Պէյրութ, 1957, թ. 10, էջ 58), այնպես էլ 1917 թ. իր հրապարակագրությամբ:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում շատերի մոտ էր ոգևորություն և մեծ սպասումներ առաջացրել՝ հայության ապագայի տեսակետից համարվելով բարեբախտ իրադարձություն: Աղբալյանը, որի մոտ նույնպես մեծ հույսեր էր

արթնացրել այդ իրադարձությունը, Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո Բաքվի «Արև», այնուհետև Թիֆլիսի «Հորիզոն», որի երեք խմբագիրներից մեկն էր, և իր խմբագրած «Ազատամարտ» լրագրերում հրապարակել է բազմաթիվ առաջնորդողներ, քաղաքական հոդվածներ ու վերլուծություններ, որոնք, լինելով օր օրի կատարվող դեպքերի անմիջական արձագանքը, միաժամանակ պարունակում էին հետաքրքիր առաջարկներ հայ ժողովրդի և նրա առաջնորդների՝ քաղաքական կուսակցությունների, առաջին հերթին՝ ՀՅԴ-ի անելիքների վերաբերյալ՝ գծելով նոր պայմաններում հնարավորինս արդյունավետ գործելու քիչ թե շատ որոշակի ծրագրի ուրվագծերը: Այսպես, իր առաջին հրապարակումներում նա ողջունել է Փետրվարյան հեղափոխությունը և արտահայտել իր անվերապահ համակրանքը՝ համարելով այն բախտորոշ իրադարձություն ժողովուրդների բանտ համարվող Ռուսական կայսրության բոլոր ժողովուրդների, ինչպես նաև համայն աշխարհի համար: «Հին ու յանցաւոր կարգի շառաչուն տապալումը և նոր կարգի հաստատումը միլիոնաւոր սիւնների աջակցութեամբ՝ լցնում է համայն աշխարհը խանդավառութեամբ»,- կարդում ենք «Գերմանական արշավը» վերնագրով հոդվածում («Արեւ», Բագու, 1917, մարտի 12, թ. 52: Տե՛ս նաև թթ. 53, 59, 60 և այլն): Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունը ռամկավարական համարող և հայության ապագայի տեսակետից այն ողջունող Աղբալյանը անմիջապես նախանշել է Ազգային բյուրոյի (Թիֆլիսի ազգային կենտրոնական բյուրո, 1912 թ. հոկտեմբեր – 1917 թ. հոկտեմբեր), որի անդամ էր ինքը, առաջնահերթ անելիքները նոր պայմաններում. «Պէտք է շտապել կազմակերպելու հայութիւնն իբրև ուրոյն ազգ, քանի որ վաղը մենք առիթ կունենանք մեր ազգային տեսակէտը մշակելու և պաշտպանելու Կովկասի վարչաձևի, ազգագրական վարչաշրջանների, տեղական լեզուների, պետական կրթարանների և հազար ու մի մանր ու խոշոր խնդիրների մասին, որ դնում է մեր կեանքն ու երկիրը և շօշափում է ամենքիս շահերն իբրև ազգութեան» («Հայության կազմակերպումը», «Արեւ», 1917, մարտի 15), հաջորդ համարներում՝ ավելի որոշակի. «Մեզ անհրաժեշտ է ազգային-քաղաքական ինքնավարութիւն մեր բնաշխարհում, նրա յաջողութեան համար՝ ազգային-քաղաքական կազմակերպութիւն ամեն մի հայաբնակ վայրում» («Իբր ուրվագիծ», նույնը, մարտի 16), «Կովկասի կառավարչութեան հիմքում պէտք է դրուին երկու սկզբունք՝ ազգութիւն եւ բնաշխարհ: Այդ իսկ պատճառով պէտք է նոր սահմաններ գծուին Կովկասին՝ հիւսիսից և եղած նահանգներին՝ ներսում: Պէտք է ստեղծել, որքան հնարաւոր է, միատարր ազգաբնակութիւն ունեցող վարչական միութիւններ: Երկրի վարչութիւնը պէտք է վստահել տեղացիներին՝ տեղացի նկատելով նաև մեր երկրում հաստատուած ռուսներին: Տեղական լեզուները պէտք է մտնեն դատարան, օրէնսգիրք, պօստ ու վարչատուն: Պետական դպրոցները պէտք է բաշխուեն ըստ ազգութեանց



և դառնան ազգային դպրոցներ պետական հաշվով: Պաշտօնական ռուս լեզուն պէտք է վեր հանել Կովկասի վարչապետութեան բարձունքը» («Կոմիսարների ուշադրության», նույնը, մարտի 17) և այլն: Շուտով սկսվել է հայ քաղաքական կուսակցությունների համատեղ աշխատանքը՝ ուժերը միավորելու և մարտի 9 (22)-ին ստեղծված Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (Озаком)՝ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության երկրամասային մարմնի հետ համագործակցելու ճանապարհով առաջադրված նպատակին հասնելու համար: Առաջ անցնելով ասենք, որ այդ աշխատանքի արդյունքը եղավ Ազգային խորհրդակցությունը (Ազգային համագումար, 1917 թ. սեպտ. 29 – հոկտ. 13, Թիֆլիս), որը ձևավորել է 35 անդամից կազմված օրենսդիր մարմին՝ Ազգային ժողով, և վերջինիս կազմից՝ 15 անդամից (վեցը՝ դաշնակցական, այդ թվում՝ Ն. Աղբալյանը) բաղկացած գործադիր մարմին՝ Հայոց ազգային խորհուրդ (նախագահ՝ Ավետիս Ահարոնյան): 1918 թ. հուլիսին Հայաստանի նորաստեղծ հանրապետության խորհրդարանի ստեղծումով Հայոց ազգային խորհուրդը դադարեցրել է իր գործունեությունը (Ազգային համագումարի և մասնավորապես Ն. Աղբալյանի ելույթների մասին տե՛ս Անանյան Գ., *Նիկոլ Աղբալյան*, Ե., 2002, էջ 46-49, Վրացյան Ս., *Նիկոլ Աղբալեանի մասին*, «Ակօս», 1957, թ. 10, էջ 54-55, «Հորիզոն», 1917, օգոստ. 24, թ. 180, «Ազատամարտ», 1917, հոկտ. 21, թ. 17):

Իսկ 1917 թ. գարնանը և հետագայում վերն ուրվագծված ծրագիրը գոնե մասամբ կյանքի կոչելու դժվարին գործին խանգարում էին երկու խոչընդոտ՝ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության ու Օզակոմի թուլությունը և վրացիների ու կովկասյան թաթարների՝ ադրբեջանցիների ազգայնական նեղ ձգտումները: Եթե երկրորդը Աղբալյանի համար ինչ-որ տեղ սպասելի էր ու միանգամայն հասկանալի, ապա առաջինը նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ: Իրադարձությունների ծավալմա-

նը զուգահեռ՝ նրա մոտ ոգևորությանը խառնվել է հիասթափությունը. հսկա երկրում տարրական կարգ ու կանոն հաստատելու, հարձակվող գերմանացիներին կանգնեցնելու, ժողովրդին հացով ապահովելու և այլ կենսական հարցեր լուծելու գործում Ժամանակավոր կառավարության ապիկարությունը Ռուսաստանում խժդժություններ է առաջացրել, ինչպես, օրինակ, հուլիսյան դեպքերը, երբ մեծամասնականների (բոլշևիկների) ու անարխիստների դրդումով տեղի են ունեցել զինվորների և բանվորների զանգվածային ելույթներ ընդդեմ կառավարության, կամ կառավարության և անձամբ վարչապետ Կերենսկիի ու բանակի գերագույն հրամանատար գեներալ Կոռնիլովի հակամարտությունը, որը սեպտեմբերի 1-ին ավարտվել է վերջինիս ձերբակալությամբ, և դրանից հետո փաստացի դրսևորվել է կառավարության հաշտվողական վերաբերմունքը բոլշևիկների նկատմամբ, ինչն էլ հասցրել է հոկտեմբերյան հեղաշրջմանը:

Ցավով հետևելով իրադարձությունների զարգացմանը Ռուսաստանում՝ Աղբալյանը մի կողմից խստորեն քննադատել և դատապարտել է բոլշևիկներին՝ անվանելով Լենինին և նրա կողմնակիցներին գերմանական դավերի գործակալներ («Հետևանքներ», «Հորիզոն», 1917, հուլիսի 22), զառանցողներ («Վիժում», նույնը, հուլիսի 25), աղմկարարներ, խռովարարներ ու այլն, գեներալ Կոռնիլովին՝ անվանելով նրան արկածախնդիր («Իշխանության տրագիզմը», նույնը, սեպտ. 30), մյուս կողմից՝ տեսել է ժամանակավոր կառավարությունների թուլությունը, անվճռականությունն ու անկարողությունը, արձանագրել այդ ամենը իր հոդվածներում և աստիճանաբար հանգել է այն եզրակացությանը, որ «ազատութիւնը, ապահովութիւնն ու հացը միմիայն ուժով կարելի է ձեռք բերել և պահպանել» («Ռամկավարություն և իշխանություն», նույնը, հուլիսի 13), և «ստեղծած կացութեան հանդէպ Ռուսաստանի փրկութիւնը դիկտատուրի մէջ պէտք է որոնել» («Դիկտատուրա», նույնը, հուլիսի 14): Աղբալյանը հայության ապագայի լինել-չլինելու հարցը ուղղակիորեն կապել է Ռուսաստանում կենտրոնական ուժեղ իշխանության հետ՝ գտնելով, որ միայն ուժեղ իշխանությունը կարող է ի կատար ածել Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո հայտարարված արտաքին քաղաքականության՝ շատ կողմերով անհասկանալի սկզբունքը՝ «խաղաղութիւն առանց հողատման և ռազմատուգանքի՝ ազգերի ինքնորոշման հիման վրայ» («Մթին բանաձև», «Ազատամարտ», 1917, հոկտ. 1): Նա հավատում էր, որ նույնիսկ այդ սկզբունքի իրագործումը նպաստավոր պայմանների առկայության դեպքում կարող է իրականություն դարձնել «հայ քաղաքական մտածութեան բանաձևը»՝ «ազատ հայութիւն ազատ Հայաստանում» («Ամենից առաջ», նույնը, սեպտ. 30), ինչը հնարավոր դարձավ 1918 թ. մայիսին:

1917 թ. հոկտեմբերին ու հետո, տեսնելով օր օրի զարգացող քաղաքական իրադարձությունները և վերլուծելով դրանք, նրա մեջ այդ հավատը կամաց-կամաց փոխվել է անհանգստության, և անհանգստությունը՝ տագնապի, մանավանդ երբ հոկտեմբերի 25-ի հեղաշրջումով իշխանությունը բռնազավթել են մեծամասնականները, և նրանց իսկ ջանքերով ամիսներ շարունակ կազմալուծված ռուսական զորքը սկսել է լքել նաև կովկասյան ճակատը: Դեռ հուլիսին Աղբալյանը կանխագուշակել էր. «Երբ սովի հետևանքով յաճախեն ընդհարումները, և խանգարւի կարգն ու խաղաղութիւնը մեր երկրում, այն ժամանակ կը խորտակւի յեղափոխութիւնը՝ իր հետ խորտակելով եւ մեր բոլոր լուսաշող հեռանկարները: Աւելորդ է ասել, թէ այդ շփոթը կանդրադառնայ եւ զօրքի պարենաւորման վրայ, որի հետեւանքով ճակատը կերերայ, եւ Կովկասում կը ստեղծւի այնպիսի իրարանցում, որի սանձելն ու վարելը միանգամայն անհնարին կը լինի: Այսպիսով պարենաւորման գործը եւս առանձին գունաւորում է ստանում Կովկասում, եւ նրա յարուցած սպառնալիքը՝ առանձին կշիռ» («Երկուստեք», «Հորիզոն», 1917, հուլիսի 21), նույնը՝ օգոստոսին. «Մենք ապրում ենք սոսկալի նախօրեակ. պիտի պահենք յորձանուտի մէջ մեր փոքրիկ լաստը» («Անխուսափելին», նույնը, 1917, օգոստ. 23): Այն միտքը, որ Ռուսաստանում ստեղծված անկայուն ու վտանգավոր քաղաքական վիճակը հետևանք էր նաև մեծամասնականների քայքայիչ գործունեության, նա բազմիցս ընդգծել է իր հոդվածներում՝ նշելով դրա դեմը նույնիսկ բռնությամբ առնելու անհրաժեշտությունը: Միաժամանակ, որքան էլ զարմանալի է, նրա գրվածքներում ակնհայտ դրսևորվել են դեպքերի տրամաբանությունից չբխող և, ինչպես հետագայում հաստատվեց, անհիմն հավատ ու լավատեսություն. «Մենք հաւատում ենք ռուս ժողովրդի պետական բնազդին եւ Ռուսաստանի ռամկավարութեան առողջ մտածումին ու գործին» («Գրավականը», նույնը, 1917, հուլիսի 15), «Ուզում ենք հաւատալ, որ ռուս մեծ ժողովուրդը պիտի սթափւի իբր ազգ եւ փրկէ հայրենիքը վերահաս կործանումից» («Սթափում», նույնը, օգոստ. 17): Հեղափոխական այս ռոմանտիզմը, որը կապված էր Աղբալյանի ազգային երազների ու դրանց իրականացման բուռն ցանկության հետ, որևէ գործնական արտահայտություն չունեցավ, հակառակը, բոլշևիկների կողմից իշխանության բռնազավթումից հետո իրականություն դարձավ Աղբալյանի մեկ այլ կանխագուշակում՝ քաղաքացիական պատերազմի սկիզբը Ռուսաստանում. «Մեր գուշակութիւնը կատարւում է: Ռուսաստանն ապրում է քաղաքացիական կռւի նախօրեակին, որ մեր կարծիքով անխուսափելի հետեւանք է երկրի ներքին կացութեան: Մեծամասնականների զինւած միջամտութիւնը պետական կեանքին արդէն իրողութիւն է: Նրանք կազմել են զինւորական կոմիտէ, Պետրոգրադի գարնիզոնի (կայազորի – Ա. Մ.) զօրամասերում նշանակել են կոմիսարներ, հրահանգել են զօրամասերին չկատարել մայրաքաղաքի սպայակոյտի հրամանները, գրաւել են երկաթուղային կայարանները, հեռագրատունը» («Կատարվում է», «Ազատամարտ», 1917, հոկտ. 28): Այս իրողությունը ստիպել

է Աղբալյանին թերթի հենց հաջորդ օրվա համարում հանգելու հետևյալ տխուր եզրակացությանը. «Այս ամենը իր անխուսափելի անդրադարձումը պէտք է ունենայ նաև Կովկասի եւ իր ճակատի վրայ, հետեւապէս՝ նաև փախստական հայութեան» («Վերաբերում», նույնը, հոկտ. 29):

Ճիշտ է, այս դեպքերից առաջ տեղի էր ունեցել մի կարևոր իրադարձություն՝ ազգային, այսինքն՝ հայկական, վրացական և թաթարական զորամասերի ստեղծումը Անդրկովկասից դուրս գտնվող ռուսական (նախկին ցարական) զորքերում ծառայող հայերից, վրացիներից ու ադրբեջանցիներից, ինչն անվերապահորեն ողջունել էր Աղբալյանը՝ գրելով. «Կովկասի ազգաբնակութեան երկու խոշոր հատուածները՝ հայերը եւ վրացիները, որ անմիջական վտանգի ենթակայ են մեր զօրաճակատի թուլացման դէպքում, ազգային զօրամասերի ստեղծումով կարող են իրենց բաւական ապահով զգալ: Նրանց թիկունքում իրան ապահով կարող է զգալ եւ հայաստանցի փախստական հայ բազմութիւնը» («Ազգային զորամասեր», «Ազատամարտ», հոկտ. 6): Ստեղծված հայկական զորամասերը (հետո նրանց միացան նաև ռուսական կովկասյան բանակում ծառայող հայ զինվորականները) հետագայում անգնահատելի դեր խաղացին 1918 թ. բախտորոշ իրադարձություններում, իսկ 1917-ի վերջերին փաստացի իրավիճակն Անդրկովկասում այն էր, որ ռուսական զորքի հեռանալուց հետո հայերը մենակ էին մնացել թուրքական զորքերի դեմ: Վրաստանը հեռու էր ռազմաճակատից, և վտանգի դեպքում նրանք մտածում էին հայերի թիկունքում թուրքերի հետ առանձին հաշտություն կնքել, ադրբեջանցիներն էլ մտահոգվելու պատճառ չունեին և իրենց եղբայրներին իրենք էին հրավիրում Անդրկովկաս ու աջակցում ամեն կերպ: Այնպես որ, հայերի համար կրկնվում էր նույն ցավալի իրավիճակը, որը բազմիցս հանդիպում է մեր պատմության մեջ, և Աղբալյանը ստիպված էր հերթական անգամ սրտի մորմոքով արձանագրել բազմիցս հաստատված ճշմարտությունը. «Մենք կանգնած ենք մեն-մենակ, ինչպէս եւ միշտ, մեր չարագուշակ ճակատագրի հանդէպ մեր բարձրաբերձ լեռնաստանում: Ոչ մէկ յոյս, ոչ մէկ ակնկալութիւն ոչ եւրոպական իմպերիալիզմից, ոչ Կովկասի դեմոկրատիզմից, ոչ էլ ռուսաց սոցիալիզմից:

Մի՛ ժողովուրդ եւ մի՛ հայրենիք. մի հի՛ն, տոկո՛ւն ժողովուրդ. մի հի՛ն, արիւնլա՛յ Հայրենիք:

Ո՞րն է ուրեմն կեանքի հրամայականը – հաւաքել ցրիւ ուժերը, կազմաւորել ու տոկալ» («Այսպես», նույնը, նոյ. 29): Նույն մտքերը նա արտահայտել է այլ հոդվածներում ևս՝ կրկին շեշտելով հայ ժողովրդի բոլոր ուժերի համախմբման և հնարավոր ու անհնար ամեն ինչ անելու անհրաժեշտությունը՝ գալիք դաժան փորձություններին դիմանալու համար. «Այն զօրքը, որի միջոցով Հին Ռուսաստանը մտածում էր սեփականել Հայաստան աշխարհը, հիմա փախչում է դասալիք. այն զօրքը, որի միջոցով Նոր Ռուսաստանը մտածում էր հանրամարդկային բարձր գաղափարներ իրացնել

կեանքի մէջ, վատաբար թողնում է խրամատները: Մնում է հայ ժողովուրդն իր դարաւոր ոսոխի դիմաց. առջեւից սպառնում է թշնամու սուրը, թիկունքից՝ սովի գերանդին: Այս օրհասական վայրկեանին նրան ուրիշ ելք չի մնում, քան դառնալ ինքն իր ուժին ու կորովին եւ պաշտպանել իր պատիւը, կեանքն ու ստացուածքը եւ դրանով նաև իր հայրենիքը» («Ինքներս», նույնը, դեկտ. 13): Սա էր քաղաքական բուռն իրադարձություններից, երկար ամիսների սպասումից, ոգևորությունից, համառ աշխատանքից ու հիասթափությունից հետո արված եզրակացությունը:

Այսպես էլ ավարտվել է փոթորիկներով լի 1917 թվականը, և վրա է հասել ոչ պակաս փոթորկահույզ, միաժամանակ նոր հույսերով ու սպասումներով լի 1918-ը: Ինչպես 1917-ը, այդ տարին էլ Աղբալյանի համար եղել է անխոնջ աշխատանքի, կորուստների ու ձեռքբերումների տարի, բայց այս անգամ նա իրեն դրսևորել է ոչ թե որպես հրապարակագիր, այլ որպես տաղանդավոր քաղաքական ու պետական գործիչ, որը Հայաստանի առաջին հանրապետության կերտողներից մեկն էր:

Այսօր՝ ավելի քան 100 տարի անց, հետադարձ հայացք ձգելով Նիկոլ Աղբալյանի 1917 թ. հրապարակագրության վրա, կարող ենք վստահաբար պնդել, որ նա եղել է իր ժամանակի ազնիվ տարեգիրը, և նրա հրապագրությունն այսօր էլ արդիական է այնքանով, որքանով այսօրվա իրադարձությունները նման են 100 տարի առաջ տեղի ունեցած դեպքերին:

Մեզ մնում է միայն ճիշտ եզրակացություններ անել մեր ժողովրդի ճակատագրի՝ անընդհատ կրկնվող զիգզագներից և դրանց վերլուծություններից՝ այսօր և հետագայում նույն կոտրած տաշտակի առջև չկանգնելու համար: ■

Սեյրան Խաթլամաջյան

2024 թվականին լրացավ 30 տարին, ինչ մեզնից, մեր քաղաքից բացակայում է գեղանկարիչ Սեյրան Խաթլամաջյանը:

Ս. Խաթլամաջյանի մահվան տարելիցը, ինչպես որ այլոց հիշատակներն ու հոբելյանները, արժանվույնս, պետական մակարդակով չհիշատակելու փաստը ցավալի է, բայց ոչ զարմանալի: Այսօրվա կյանքի տերերն ապրում են իրենց ստեղծած «Իրական Հայաստանում», որտեղ տեղ չունի այն ամենը, ինչը չի առնչվում իրենց:

Սեյրան Խաթլամաջյանը վառ ներկայացուցիչն է հայ կերպարվեստագետների տաղանդավոր մի սերնդի, որն իր անջնջելի հետքն է թողել հայ կերպարվեստի պատմության մեջ և հայ մշակույթի էջերում առհասարակ: Հիշենք, որ ստալինյան հեղձուցիչ տասնամյակներից հետո, երբ թվում էր թե կես դարից ավելի ձգված հայոց ողբերգությունները ոչնչացրել են արժանավորապես ոտքի կանգնելու ազգի ներուժը, 50-ականների երկրորդ կեսից Հայաստանում սկսվեց մի վերազարթոնք, որը վաթսունականներին արդեն վերածվեց իսկական ազգային վերածնունդի: Ինքնահաստատման և վերածնության այդ 9-րդ ալիքը պետք է վերելքի մղեր հայ կյանքի բոլոր ոլորտները, այդ թվում՝ մշակույթը և մշակույթի լայն շրջագծում հայ կերպարվեստն ու, մասնավորապես, գեղանկարչությունը:

Մինաս Ավետիսյանի, Վրույր Գալստյանի, Էդուարդ Արծրունյանի, Գայանե Խաչատրյանի, Հակոբ Հակոբյանի, Հարություն և Արմինե Կալենցների, Մարտին Պետրոսյանի, Աշոտ Հովհաննիսյանի (Դեղձ Աշոտ), Վարոս Շահմուրադյանի, Ռաֆայել Աթոյանի, Ջուլում Գրիգորյանի, Վալենտին Պոդպոմոգովի և բազում այլ տաղանդավորների կողքին իր արժանավոր տեղն ունի նաև Սեյրան Խաթլամաջյանը: Ընդ որում, սերվելով ազգային վերազարթոնքի հոգևոր-մշակութային նույն ակունքներից, սերնդի այս և մյուս երևելիներն առանձնանում են արվեստագետի ինքնատիպությամբ և ուրույն ձեռագրով:

Թվարկված շարքից մի քանի ուրիշների նման՝ Սեյրան Խաթլամաջյանը ներգաղթելով հայրենիք, թերևս հայրենի միջավայրի, հողի ու արևի շնորհիվ էր, որ պետք է կարողանար ստեղծագործությունների մեջ լիարժեքորեն դրսևորել իր ազգային ինքնությունը և գտներ հայրենիքը բացահայտելու ազգային գունապնակը:

Խաթլամաջյանի գունապնակը վառ է, միաժամանակ, մեղմ ու թեթև, և մղում է ռոմանտիկ երազային զգացողությունների: Նկարչի մտածողությունը հակված է դեպի վերացական ոճը, թեև որքան էլ կոնկրետությունից հեռու լինեն ամպի փաթիլների նման թեթև, փափուկ և տաք վրձնահարվածները, միևնույն է, դիտողը նրա կտավների վրա տեսնում և զգում է Հայաստանը: Այս իմաստով կարելի է աներևույթ հոգևոր-ազգակցական կապ տեսնել Խաթլամաջյանի և մեծատաղանդ մեր հայրենակից Արշիլ Գորկու միջև: Այստեղ հիշենք՝ Գորկին ինքն է բացատրում, որ իր գործերում իրականում հայրենիքի գույներն են և զգացմունքային հիշողության պահպանած՝ նրա վերացարկված պատկերները: Երկու այս արվեստագետների դեպքում էլ ուժը և միտքը, որոնք մղում են ինքնարտահայտման, անչափելի սերն է հայրենիքի նկատմամբ:

Խաթլամաջյանի դեպքում այդ սերը նույնքան ընդգծված, դրսևորվում էր նրա կենսագործունեության մեջ և առօրյայում:

Սեյրան Խաթլամաջյանն ուղն ու ծուծով հայ մարդ էր, ով ուներ ազգային մեծ երազանքներ, որոնցով ապրում էր: Արցախյան շարժման առաջին օրերից նրա կյանքի գլխավոր իրադարձությունները կապված էին Ազատության հրապարակի՝ Արցախի ազատագրական պայքարի և Հայաստանի անկախացման ընթացքի, թոհուբոհի հետ: Ժամանակակիցները կհիշեն ասես Երևանի կոլորիտի անբաժանելի մասը կազմող այս թավ բաշով հսկայի մեկ ոտքից մյուսին շորորացող քայլվածքը քաղաքի կենտրոնում և սրճարանների տարածքում՝ շրջապատված իր նման ազգասեր մարդկանցով: Թերևս բարի հսկայի կերպարով նա հիշեցնում էր այդ որակումն ստացած մեկ այլ հեռավոր ազգակցի, Վիլյամ Սարոյանին՝ իր բարությամբ, պարզությամբ, դյուրահավատությամբ, և հայկական ինքնության ավազանում իր եսը զգալու ինքնազգացողությամբ: Պատահական չէ, որ հայրենիքի նկատմամբ խորը սերն ու պատմական պատասխանատու պահին նրա ճակատագրի համար մտահոգությունը Սեյրան Խաթլամաջյանին բերել էին Դաշնակցություն՝ հայրենիքում ազգային կուսակցության հաստատվելու առաջին օրերից:

Այդ շրջանում առիթ եմ ունեցել տեսնելու նրան ժողովների, քննարկումների, բուռն բանավեճերի մեջ: Սեյրան Խաթլամաջյանի նկարած Առաջին Հանրապետության զինանշանը ոչ միայն հպարտորեն բազմած էր նորանկախ Հայաստանի առաջին գումարման խորհրդարանի դահլիճում՝ պառլամենտի կողմից նորանկախ երկրի խորհրդանիշն ընդունելու հարցի քննարկման օրը, այլև լուսապատճենի ձևով հազարավոր օրինակներով տարածվել էր երկրով մեկ՝ նաև ժողովրդի մեջ համապատասխան համոզումն ամրապնդելու նպատակով:

Սեյրան Խաթլամաջյանը մարդ էր, ում հետ հաճելի էր շփվել, նրա կողքին լինելով՝ վարակվել իր լավատեսությամբ: Կարծում եմ՝ սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ նրա էությունն ամբողջովին արտահայտված էր իր պայծառ, ուրախություն ծնող և լավատեսություն ներշնչող կտավների մեջ: Նրա շատ կտավներ տոն են հիշեցնում, և չնայած Սեյրանին անդրադառնալու առիթը 30-րդ տարելիցն է, այնուամենայնիվ, նա պատկերանում է որպես կյանքով առլեցուն, մարդկանց համար արժեք ստեղծող և ստեղծագործություններով ապրողների հետ կյանքը շարունակող բարի հսկա:

Խմբագրության կողմից՝ Ա.Ծ.

Հայապահպանության բերդ մը Հայրենիքին մեջ

Հայկազուն Ալվրցյան
Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր

Ներկայացվող նյութը Ս. Խաթլամաջյանի բանավոր խոսքն է՝ ձայնագրված ժապավենի վրա 1988 կամ 1989 թվականին: Ձայնագրությունը պահպանվում է մեծ գեղանկարչի ու մտավորականի դստեր՝ Մարիամ Խաթլամաջյանի անձնական պահոցում, ով էլ, բավականին ջանք գործադրելով, կարողացավ մաշված ժապավենից այն գրի առնել և հանձնել մեզ:

Ակնհայտ է, որ Ս. Խաթլամաջյանը դիմում է համախոհներին, որոնց անվանում է «հայ ազատական, այսինքն՝ քրիստոնեական մտավորականների դաշնակցություն»: Ի դեպ՝ դաշնակցություն բառը խոսքում հնչում է մի քանի անգամ: Նրան ճանաչողները լավ գիտեն, որ գոնե մտավորական շրջանակներում Ս. Խաթլամաջյանը հայտնի էր որպես Դաշնակցության գաղափարների կրող, ինչը խորհրդային տարիներին խստորեն հետապնդվում էր իշխանությունների կողմից: Երբ 1890 թ. Դաշնակցությունը հայտարարեց Հայաստան իր կառույցի վերադարձի մասին, Սեյրանը եղավ առաջին անդամագրվողներից մեկը: Նա հայ պետականության վերականգնման և անվտանգ հեռանկարի հույսը կապում էր ՀՅԴ-ի հետ, որի գաղափարների կրողն ու ջատագովն էր, գոնե իմ իմացությամբ, 70-ականների սկզբից մինչև իր վաղաժամ մահը՝ 1994 թ. սեպտեմբերի 14-ը:

1960-ականներին Հայաստանում վերելք ապրող ազգային զարթոնքի գաղափարները լայն տարածում գտան հայ մտավորականների և արվեստագետների շրջանում, որոնք, աստիճանաբար բյուրեղանալով, արդեն 70-ականներին կերպավորվել էին որպես ազգային-ազատագրական պայքարի գաղափարական-ծրագրային դրույթներ՝ իրենց շուրջ համախմբելով առաջին հերթին մտավորական երիտասարդությանը: 70-ականներին այդ գաղափարներն արդեն շունչ ու ոգի էին ստանում որպես մշակութային, գրական-գեղարվեստական մարմնավորումներ, ստեղծվում էին ընդհատակում գործող քաղաքական կազմակերպություններ և միություններ:



Մշակութային գործիչների և մտավորականության շրջանում այդ տարիներին հայտնի դարձան ազգային գաղափարների հետևորդ մի շարք գործիչներ, որոնց մեջ իր հայացքներով և հաստատակամությամբ աչքի էր ընկնում Ս. Խաթլամաջյանը:

1992 թ. ամռանը մի առիթով, երբ իր հարուստ պահոցում փորձում էր մի լուսանկար գտնել, բազում թղթերի և ծրարների մեջ նկատեցի Սփյուռքում հրատարակվող թերթի մի համար: Հարցիս՝ «Ինչո՞ւ ես պահում այս համարը», պատասխանեց. «Նայե, հոն իմ մասին նյութ կա»: Թերթը հին էր, ուստի նախ նայեցի հրատարակության թվին՝ 1975, իսկ Սեյրանին նվիրված նյութի վերնագիրն էր՝ «Հայապահպանության բերդ մը Հայրենիքին մեջ»:

Այդ բերդը Ս. Խաթլամաջյանն էր, մի մարդ, որ առնվազն երկու տասնամյակ (գոնե իմ հիշողությամբ) ՀԱՅԻ ինքնության պահպանության և ՀԱՅԱՍՏԱՆԻ ազատության գաղափարների նվիրյալն ու անխոնջ տարածողն էր: Նրա աշխարհայացքը խարսխված էր մի կողմից՝ մեր պատմական հարուստ հոգևոր-մշակութային և ազգային-գաղափարական ժառանգության վրա՝ Խորենացուց մինչև Մ. Նալբանդյան և Ռ. Պատկանյան, որոնց նկատմամբ նրա սերը հասնում էր պաշտամունքի, մյուս կողմից՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, հայոց լեզվի և ազգային դպրոցի վրա, որոնք էլ պետք է լինեն ազգային գրականության և մշակույթի դարբնոցները:

Վերջում ավելացնեմ, որ Սեյրանի նախնիները անեցիներ էին. նրա լեզուն համեմված էր Անիի բարբառի բառամթերքով և քերականական ձևերով, որոնք հարազատորեն դրսևորվել են նաև այս խոսքում: ■

Համազգայինների, հայ ազատական մտավորականների դաշնակցության, հայապաշտպանության, ազգապաշտպանության բարեպաշտ ուխտը[1]

Սեյրան Խաթլամաջյան

Հայադավան ուխտավորներ,

Մեր հայ ազատական[2], այսինքն՝ քրիստոնեական մտավորականների դաշնակցության դրությունը պաշտպանողական է և ոչ թե հարձակողական: Հարձակողական դրությունը իրենք են գրավել[3]:

Ազատական մտավորականների դաշնակցության նպատակն է վերականգնել կորցրածը, այսինքն՝ ինչ որ մեզանից խլել են՝ ազգությունը, այսինքն՝ ազգի անձնավորությունը[4]:

Մեր սուրբ պարտքն է պաշտպանել ազգությունը ազգասպանությունից, այսինքն՝ աշխարհակործան աշխարհաքաղաքացիությունից, օտար կրթությունից և օտար գաղափարներից, հեռու մնալ բոլոր տեսակի կրոնական և քաղաքական աղանդներից, որոնք մեր ազգի համար խորթ են և մահացու:

Մեր բարոյական պարտքն է ճանաչել և պաշտպանել, և պաշտպան կանգնել խղճի ազատությանը, մարդու իրավունքներին, ազգի իրավունքներին:

Մենք ազգի անդամ ենք և չենք կարող մեզ օտար համարել ազգից, չենք կարող անվանել մեզ մի մասնավոր, կտրված ու բաժանված անձ ամբողջ ազգի կազմից:

Ազգի վնասը և օգուտն ավելի մեծ կշիռ ունի մեր աչքում, քան թե մեր անձնականը:

Մեր պարտքն է զբաղվել և աշխատել ազգապահպան և հայապահպան սուրբ գործով և վերածնել հայոց ազգային ոգին, մտածելակերպը և ազգային գաղափարը:

Պահպանել, եթե մնացել է, և վերականգնել ազգային սովորությունները, կենցաղը, ազգային և եկեղեցու տոները, հարսանեկան ծեսերը, պսակ, կնունք, ուխտագնացություններ, ազգային-հեղափոխական, ազգային-եկեղեցական երգերը, մանկական խաղերը, բոլոր բարբառները, գրաբարը, արևմտյան և արևելյան զույգ գրական լեզուն(երը), **վերականգնել կանխամտածված հայերուս երկու մասի բաժանելու համար՝ արևմտահայերի և արևելահայերի, (...)[5] դասական ուղղագրությունը:**

Մտավորականության սուրբ պարտքն է պաշտպան կանգնել հայադավան բուն մեր ծնող հայկական եկեղեցուն, այսինքն՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, հավատարիմ մնալ մեր նախնյաց դավանանքին. մեր ազգային եկեղեցու **կառավարությունը** սահմանադրական է, մեր եկեղեցական ժողովրդի[6] ընտրությամբ և հավանությամբ ընտրում են եկեղեցական[7]: Նշանակում է՝ վերականգնել բոլոր թեմական և թաղական խորհուրդները և ժողովները՝ հոգևոր դպրոցները, և կառուցել եկեղեցիներ:



Մեր հայրերը, պահպանելով մեր ազգային հայկական եկեղեցու անկախությունը, պահպանեցին ազգի գոյությունը: Հայոց եկեղեցին պահել է մինչև այսօր յուր ինքնությունը և անկախությունը: Անհրաժեշտ է, հարկավոր է մանավանդ այսուհետև ևս (...)[8]:

Հայ ազատական մտավորականների դաշնակցության ուխտն է մի բարոյական միություն, որը պարտական է պաշտպանել մեր ազգը և եկեղեցին: Հայոց լեզու, հայոց կրոն[9]. ահա մեր նշանաբանը: Առանց հայկական լեզվի չկա ազգություն, առանց հայ եկեղեցվո չկա բարոյականություն:

Անհրաժեշտ է, հարկավոր է վերականգնել հայոց բուն ազգային դպրոցական գործի դրվածքը: Մարդավայել, ազգային դաստիարակությունը և կրթությունը երբեք համարված չէ հանցանք: Ազգության ինքնությունը, ինչպես բնության օրենք, խոստովանված է, ընդունված է ամեն լուսավորյալ ազգերե:

Հայ մտավորականությունը անհրաժեշտ է ազգային ոգով զարգանալու և կրթվելու: Մեր ազգային կրթական հաստատությունների մեջեն պիտի դուրս գան իսկական հայեր, այսինքն՝ գիտցող իրենց մայրենի լեզուն, նախնավանդ դավանությունը և հայկական պատմությունը:

Բուն ազգային դպրոցներում ճշմարիտ դասավանդել և վերականգնել պատմությունը, այսինքն՝ պատմության գրքերեն դուրս շպրտել հակապատմական թյուր կարծիքներ և պատմական իրականությունը գրել այնպես, ինչպես որ տեղի ունեցած էին՝ սրբազան հավատի վկայությամբ:

Մեր հարազատ դպրոցներում անաստվածների կողմից արգելված կրոնի դասերը, ընդհանուր կրոնի պատմությունը, հայոց եկեղեցու պատմությունը, կրոնագիտությունը և գրաբարը, մեր ազգային գրականությունը վերականգնել:

Հայ ազատական մտավորականությունը սուրբ պարտք ունի հայ ժողովրդի թմրած ազգային ոգին արթնացնելու և մանավանդ ճշմարտությունը ասելու:

Մեր ազգային գաղափարը բխում է մեր հայոց պատմությունից, ազգի կյանքից և բուն ազգային դավանանքից: Մեր ազգի սեփականը մեզ համար սուրբ է: Մեր պարտքն է բոլոր ազգային, քրիստոնեական և սուրբ կորուստների վերականգնումը:

Հայոց ազգը իր ազգային յուրահատուկ առանձնահատկությամբ պիտի գոյատևե քաղաքակիրթ ազգերի հետ հավասար:

Մեր ազգը չպետք է որ անջատ մնա ընդհանուր քաղաքակրթությունից, քրիստոնեական քաղաքակրթությունից և ընդհանուր մարդկային զարգացումից:

Քարոզել և զարգացնել ազգային արվեստ, թատրոն, շարժանկար, երաժշտություն, նկարչություն, ազգային ճարտարապետություն, այո՛, ազգային ճարտարապետություն. մեր ճարտարապետությունը պիտի կառուցվի ազգա՛յին ոճով: Մեր քաղաքները պիտի ազգային ոճով կառուցվեն:

Ազգային գրականություն, այո՛, ազգային գրականություն. մեր գրականությունը բո՛ւն ազգի կյանքից պիտ բխե, և ազգային ոգի, ազգային գույն պետք է ունենա և ճշմարիտ:

Վաճառականության, տնտեսության, օրենսդրության, սահմանադրության, ժամանակակից գիտության բոլոր ճյուղերի զարգացում:

***

Սիրելի՛ հայրենակիցներ, ասացեք խնդրեմ, ունի՞նք մենք արդյոք իրավունք սառնասիրտ լինել դեպի մեր Սուրբ հայկական եկեղեցին, որ ո՛չ միայն չի ստրկացրել մեր միտքն ու ոգին, այլ ընդհակառակը՝ ինքն է, որ ինչպես անապատի բոցեղեն սյունը, մեր առջևեն գնացել դեպի լուսավորության տաճարը:

Քննեցե՛ք, դատեցե՛ք, տեսե՛ք և ասացե՛ք՝ երկրագնդի վրա կա՞ մի ուրիշ քրիստոնեական եկեղեցի, որքան (...) լիներ մեր՝ ներողամիտ ու ազատամիտ:

Ո՞ր ազգի եկեղեցին կարող է մեր հայկականի առջև պարծենալ, որքան մերը՝ առավել թշնամիներից հալածվող և ամեն կերպ տանջանքներից և սնոտիապաշտություններից:

Սիրելի՛ համազգիներ, ահա մենք դեպի այսպիսի եկեղեցին ենք սառնասիրտ և այսպիսի անձնուրաց մարդոցն ենք մենք արհամարհում: Արդյո՞ք ունինք իրավունք՝ ո՛չ, ո՛չ: Բայց մենք գիտե՞նք արդյոք ուր է մեր ազգության, այսինքն՝ կրոնի և լեզվի փրկությունը: Հայ եկեղեցվո մեջ, իր անձնավորության տակ: Ինչպես որ մի ժամանակ հորձանուտի դեմ Մովսեսի շինած պղնձե օձին նայելով փրկվում էին մահից, այնպես էլ մենք բարոյական ուրիշ փրկություն չունինք: Բայց եթե աչքներս անթարթ հառելով մեր Սուրբ Էջմիածնի վրա, ապա թե ոչ՝ մեր կորուստը մոտիկ է:

Մեր ազգության հույսը, ապավենը, ապաստանն ու այունն է այն Էջմիածինը, որ միշտ եղել է արթուն պահապան մեր սուրբ ազգությանը և մեր սուրբ կրոնին:

***

«Ո՞րն է հայ ազգի կրոնը: Հայ ազգի կրոնն է հաստատուն հավատը, որ Հայաստանը պիտի ազատվի օտարի լուծեն: Ո՛վ այս բանին հավատում է, նա է ուղղափառ հայադավանը»[10]:

Հային յուր եկեղեցիեն դուրս փրկություն չկա, եղբայր հայեր: Ամուր պահենք մեր պաշտելի նախնիների սուրբ ավանդույթները, աղոթքով սկսենք մեր ամեն մի գործը, հավատով ու հույսով, օրհնությամբ կպսակվինք:

«Առավոտ ու գիշեր ի՞նչ աղոթք պիտի անե հայը: Հայը քնեն զարթնելիս կամ քուն մտնելիս այս աղոթքը պիտի կարդա. ո՛վ բարեգութ Աստված, օրհնե՛ ինձ Հայաստանը ազատել»[11]: Աստված մեր, փրկե՛ մեր Ոստանը:

Օր-գիշեր թող հայք մեկ աղոթք կարդան. «Ո՛վ Հայր, ո՛վ դու Հայր, որ երկնքումն ես, խնայի՛ր թշվառ մեր անտեր ազգին, մի՛ տուր զոհ գնալ թշնամիներին»[12]. նա այլ չի լսում անաստվածներին[13]:

Աստվա՞ծ մեր, փրկե՛ մեր Սուրբ Հայաստանը:

Հղումներ

[1] Ս. Խաթլամաջյանն այս խոսքի մեջ հաճախ է անդրադառնում իր մեծ ուսուցիչների՝ Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի ազգային գաղափարախոսության դրույթներին, իսկ վերջում՝ ուղղակի մեջբերումներ է անում առաջինի՝ «Մանկության օրեր» բանաստեղծությունից և երկրորդի՝ «Վարդապետարան Հայաստանի ազատագրության» ծրագրային աշխատությունից, որը հետագայում մեծ ազդեցություն ունեցավ «ՍԴ Հնչակյան» և հատկապես «ՀՅ Դաշնակցություն» կուսակցությունների ծրագրերի ձևավորման վրա:

[2] Որևէ առնչություն չունի ժամանակակից ազատական (լիբերալ) գաղափարախոսության հետ:

[3] Նկատի ունի ԽՍՀՄ ապազգային գաղափարախոսության պետական կենտրոնները և նրանց հայ գործակիցներին:

[4] Այս ձևակերպումն, ըստ էության, Հայ դատի էության ամփոփումն է:

[5] Ժապավենի վրա այս հատվածը հստակ չի լսվում:

[6] Նկատի ունի եկեղեցու շուրջ համախմբված, եկեղեցուն հավատարիմ:

[7] Նկատի ունի հոգևոր առաջնորդ:

[8] Ժապավենի վրա այս հատվածը հստակ չի լսվում:

[9] Մեծն Խաչատուր Աբովյանը իր «Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի» անմահ վեպում լեզվի և հավատի կարևորությունը որևէ ազգի ինքնության պահպանման գործում ձևակերպում է հետևյալ կերպ. «Մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզուն ա ու հավատը: Լեզուդ փոխիր, հավատդ ուրացիր, էլ ընչո՞վ կարես ասիլ, թե ո՞ր ազգիցն ես»:

[10] Ռաֆայել Պատկանյան, «Վարդապետարան Հայաստանի ազատության», հարց 28-րդ:

[11] Նույնը, հարց 16-րդ:

[12] Միքայել Նալբանդյան, «Մանկության օրեր»

[13] Մ. Նալբանդյանի բանաստեղծության վերջին տողն է՝ «Նա այլ չէ լսում դելֆյան հարցուկին», Ս. Խաթլամաջյանը, հավանաբար նկատի առնելով, որ շատերի համար այն անհասկանալի կմնա, դարձրել է «Անաստվածներին»:

Սէյրան Խաթլամաճեան. Իրաւ մարդն ու իրաւ արուեստագէտը

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանութեան դոկտոր

Երեւան, 1995, Սեպտ. 14

Այդ օրերուն ԱԺՄ կուսակցութեան ակումբը, Աբովեան փողոցի վրայ «Կինո Մոսկուայեն»էն քիչ մը վար կը գտնուէր: Հանդիպման էի Վազգէն Մանուկեանի եւ Լութվիկ Խաչատրեանի հետ: Ծանր եւ տագնապալից օրեր էին: Երկար տարիներ բացակայելէ ետք առաջին անգամն էր որ կու գայի հայրենիք: Թէ ի՞նչ կը քննարկէինք այդ մասին այլ առիթով...: Ես աւելի լսողի դերի մէջ էի քան խօսողի, յանկարծ հեռաձայնը հնչեց: Վազգէնը բաւականին երկար խօսելէ ետք ըսաւ.

- Տղաք, ստիպուած դուրս եմ գալու...: Երեկոյեան ինձ մօտ եկէք՝ տանը, թէ մի գաւաթ օղի կ'առնենք եւ թէ գրոյցը կը շարունակենք:

Լութվիկը «Այժմ» թերթի (որուն խմբագիրն էր) գրասենեակը հրաւիրեց... խօսելիք ու պատմելիք շատ կար, սակայն ես նախընտրեցի դուրս գալ, քիչ մը առանձին զբօսնել...: Խիստ կարօտցած էի Երեւանին...: Թէեւ փողոցները նոյնն էին, սակայն շատ բան փոխուած էր եւ շատ բան նոր էր ինծի համար: Երբ Երեւան հիւրանոցի անկիւնը հասայ յանկարծ մէկը առջեւս կտրեց ու ըսաւ.

- Էս ո՞ր ես գնում, չե՞ս էլ նայում թէ դիմացինդ ո՞վ է, ո՞վ չի... Ե՞րբ ես եկել... ի՞նչ ես անում ... մինչեւ հիմի ո՞ր էիր, գալիս ես ձէն տուր, մենք էլ մարդ ենք...

Գեղանկարիչ՝ Արկադի Պաղտասարեանն էր, որուն արտակեդրոն բնաւորութեանն ու «խենթութիւններուն» նոյնպէս կարօտցած էի: Նախ՝ չգիտցայ թէ ո՞ր մէկ հարցին պատասխանեմ, ապա շուարած ըսի.

- Ուզում էի նկարիչներու փունը այցելել, իմանալու համար թէ ինչ միջոցառումներ են անում:

- Ոչ մի բան էլ չեն անում...Պողոսը (Հայթայեան, այն ատենուայ նկարիչներու միութեան նախագահը) փորձում է ինչ որ բան անել, բայց չի ստացուում... ներսում ցուցահանդէս կայ, բայց ոչ հեւրաքրքրուող կայ... ոչ էլ շարժում:

- Իսկ դու ուր՞ ես գնում... արի միասին մտնենք, յետոյ մի բաժակ սուրճ, մի բան...

Խօսքս չաւարտած ըսաւ.

- Գնում եմ Սէյրանի մօտ...

Այս անգամ ես իր խօսքը կտրելով ըսի.

- Ես էլ կը գամ, հազար տարի է չեմ տեսել նրան, շատ եմ կարօտել...

Արկոն նախ լռեց... շեշտակի նայեցաւ աչքերուս ու ըսաւ.

- Ինձ թւում է որ դու «խապար» չես...

- Մի՞ թոպէ, մեր Սէյրանի, Խաթլամաճեանի մասին չի՞...

- Այո, բայց... ես չեմ գնում նրա հետ օղի խմելու, այլ նրան վերջին հրաժեշտը տալու...

Իմ ընկերասէր ընկեր՝

չափազանց դժուար պիտի ըլլայ վերապրիլ այդ մտալլկիչ պահը: Աւելի ճիշդը ոչ կրնամ եւ ոչ ալ կ'ուզեմ նկարագրել այդ ծանր վայրկեանները, որովհետեւ եթէ երբեք Սէյրանի նման վստահելի, ընկերասէր, գաղափարակից, յախուռն ու արտակեդրոն բնաւորութեան տէր եւ միաժամանակ տաղանդաւոր արուեստագէտ ընկեր մը ունեցած ըլլայիր... այդ պարագային միայն կրնայիր հասկնալ ու ճիշդ ըմբռնել կացութիւնս:

(Արկոյի հետ այս հանդիպումի մասին առիթով մը գրած եմ, սակայն ոչ այս մանրամասնութեամբ):

Գացինք: Հոն էին գրող, արուեստագէտ, դերասան ու առհասարակ մտաւորական գրեթէ բոլոր մեր ընկերները, որոնք հերթով կը մտնէին արուեստանոց, վերջին յարգանքի տուրքը մատուցելու համար Սէյրանին: Նկատի առած իմ յուզուող ըլլալու բնաւորութիւնս ներս չմտայ այլ տեղաւորուեցայ բակը դրուած նստարանին, ուր արդէն իսկ նստած էին Գրող-գրականագէտ Ալպերթ Կոստանեանն ու վերացապաշտ գեղանկարիչ՝ Վիգէն Թադեւոսեանը, որ միաժամանակ հարեւան էր Սէյրանին: Քիչ ետք Արկոն ալ եկաւ... դժգոհ էր ... ըսաւ.

- Սէյրանի նման հանճարեղ մարդուն պետական թաղում չեն կազմակերպում: Նրա տեղը «պանթէոնում» պէտք է որ լինի...:

Ալպերթը որ սակաւախօս մարդ էր, աւելցուց.

- Այս երկրում խորհրդային բարքերը դեռեւս շարունակւում են: Տաղանդաւոր լինելը յանցանք է...իսկ հայրենասէր ու յանդուգն լինելը առաւել եւս...:

Ի դէպ, Արկոն ու Վիգէնը, Սէյրանի գլխաւորութեամբ՝ Հայաստանի վերացապաշտ դպրոցի գլխաւոր հիմնադիրները կը համարուէին: Թէեւ կային ուրիշներ եւս, սակայն այս երեքը իրենց ոճով ու արտայայտչաձեւերով իրարմէ բոլորովին տարբեր ըլլալով հանդերձ, մօտիկ ընկերներ էին, ու միասնաբար կը պայքարէին վերացապաշտական տեսակէտները պաշտպանելու եւ տարածելու...: Իսկ Ալպերթի պարագային, թէեւ սերտ յարաբերութեան մէջ էի իր հետ, սակայն միայն մէկ անգամ գացած էի իր մօտ (Յատուկ խորհրդակցութեան մը համար), եւ անգամ մըն ալ չէի ուզած մտնել իր բնակարանը, որովհետեւ ոչ միայն գրեթէ կահոյք չունէր, այլ հակառակ բազմաթիւ գեղանկարիչ ընկերներ ունենալուն, պատերը բոլորովին պարապ էին, միայն մէկուն վրայ շեղակի կերպով կախուած էր Պարոյր Սեւակի լուսանկարը: Երբ դիտել տուի թէ ծուռ է եւ ուզեցի շտկել, յանկարծ ըսաւ.

- Ձեռք մի՛ տուր: Մովսէս ջան՝ Սեւակը ինքը Ծուռ էր, Սասնայ Ծուռ: Ինքը այդպէս էր եւ այդպէս էլ թող մնայ... դա իր ցանկութիւնն է...:

Երեւան, «Կազիրոք» սրճարան, 1978. ուշ գարուն

Մեր ուսանողական տարիներուն «Կազիրոք»ը գրողներու, արուեստագէտներու եւ առհասարակ մտաւորականներու նախընտրած սրճարաններէն մէկն էր: Հոն կրնայիր հանդիպիլ նոյնիսկ Եր. Քոչարի, Յովհ. Չէքիճեանի, Օհան Տուրեանի, Սօս Սարգսեանի, Վիլէն Գալստեանի, եւ կամ Յովհ. Շիրազի նման յայտնի դէմքերու: Այդ օր ընկերներով (Ալ. Թոփճեան, Հ. Էդոյեան, Յակոբ Մովսէս եւ Վարուժան Վարդանեան) նստած էինք եւ զրոյցը կը դառնար Լիբանանահայ գաղութի մոայլ ապագայի շուրջ: Յանկարծ Սէյրանն (Խաթլամաճեան) ու Վիգէնը միասին եկան: Սէյրանը նստելէ առաջ մէկ կողմ հրաւիրեց զիս ու ոտքի վրայ ըսաւ.

- Անցեալում բողոքում էիր թէ հանրակացարանում խիստ հսկողութեան տակ ես, եւ այնքան շատ այցելուներ ես ունենում, որ չես կարողանում աշխատել:

- Բայց ո՞ւր է, եթէ կեդրոնում մի յարմարաւէտ սենեակ լինէր կը վարձէի: Տարիներ առաջ ունեցել եմ, Շարա Տալեանի բնակարանն էի ապրում, սակայն տիկինը՝ Ժասմինան յետոյ հրաժարուեց վարձու տալուց:

- Խօսքս հենց դրա մասին է... Արմենակ Եկաւեան անունը մի բան ասո՞ւմ է քեզ:

- Վանի գլխաւոր հերոսներից...

- Այո, Արամ Մանուկեանի հետ միասին նրանք ղեկավարել են Վանի հերոսամարտը...

- Բայց ի՞նչ կապ ունի դա...

- Ասեմ, նրա Աղջիկը՝ Տիկին Արմէնիկը իմ համաթաղեցին է, նա ապրում է Սարեանի տուն-թանգարանի հանդիպակաց շէնքում: Իր մի փոքր սենեակը ուզում է վարձով տալ, նա ոեւէ մէկին չի կարող ընդունել իր մօտ... վստահելի ու կարգին մարդ է փնտռում: Ազնուական կին է, նա քեզ կը պահի իր երեխու նման... գնանք քեզ ծանօթացնեմ...:

Գացինք եւ այդպէս ալ եղաւ: Տիկին Արմէնիկը յարգուած անձնաւորութիւն էր մտաւորականներու որոշ

Արկատի Պաղտասարեան (Արկո), Վիգէն Թադեւոսեան, Մովսէս Հերկելեան և Ալպերթ Կուսրանեան. լուսանկարուած՝ Սէյրանի յուղարկաւորութեան օրը իր արուեստանոցին դիմաց

շրջանակէ մը ներս, որոնք իբրեւ հերոսի արժանաւոր դուստր «*Տիկին*»ով կը դիմէին իրեն եւ ոչ «*ընկեր*» կամ «*ընկերուհի*», ինչպէս ընդունուած էր Խորհրդային ժամանակներուն: Թէեւ քաջ գիտէր թէ ինչու զինք կը մեծարէին դիմելով «*Տիկին*»ով, սակայն ինք բնաւ չէր արտայայտուեր իր հօրը մասին: Առաւօտները, երբ կը պատահէր որ միասին սուրճ խմէինք, կը փորձէի խօսեցնել զինք... ի զուր: Շնորհիւ Սէյրանի վկայութեան, ան ոչ միայն իր զաւակին պէս ընդունեց զիս, այլեւ ընկերներս (Յայտնի արուեստագէտներ՝ Սօս Սարգսեան, Ռուբէն Հախվերտեան, Վիգէն Թադեւոսեան, Վարուժան Վարդանեան, Վարուժան Խտշեան, Արկատի Պաղտասարեան...). եւ այդ օրերու հայրենի ամենայայտնի ու տաղանդաւոր դերասանուհիներէն՝ Յասմիկ Տէր-Կարապետեանն ու Թամար Յովհաննիսեանը, երբ կու գային, թէկուզ՝ գիշերուայ ուշ ժամերուն, ջերմութեամբ կ'ընդունէր զանոնք: Իսկ Յասմիկին հոգ կը տանէր ու տէր կ'ըլլար... իր ապագայ հարսին պէս: Սէյրանը, Վիգէնն ու Ռուբիկը (իր կիթառով միասին) պարբերաբար կ'այցելէին զիս կէս գիշեր անց, երբ սրճարաններն ու ճաշարանները գոց կ'ըլլային արդէն...: Թէեւ Ռուբիկը կը փորձէր ցած ձայնով երգել ու նուագել, սակայն շէնքի բնակիչները կը խանգարուէին յատկապէս նոյն յարկի մեր դիմացի հարեւանները:

Թաղին մէջ լուր տարածուած էր, որ կէս գիշերէն ետք խենթ ու խելառ արուեստագէտներ կը հաւաքուին Տիկին Արմէնիկի մօտ ու «քէֆ» կ'ընեն: Ան ոչ միայն նեղութիւն չէր զգար մեր հանդիպումներէն (կամ առնուազն ցոյց չէր տար), այլ նոյնիսկ հաճելի կը թուէր ըլլալ իրեն համար յատկապէս՝ Ռուբիկի յանպատրաստից (Improvise) երգերը, որոնցմէ շատեր անգամ մը եւս չէր կրնար յիշել ու երգել...:

Նոյն յարկի հարեւանները ունէին շուրջ տասը տա-

րեկան աղջնակ մը, որ ջութակի դասերու կը հետեւէր: Դպրոցէն վերադարձին, երբեմն կը տեսնէի գինք ջութակը ձեռքին եւ գիրքերու ծանր պայուսակը ուսին, երրորդ յարկ կը բարձրանար, քաղաքավարութեամբ թեթեւ ժպիտով մը կը բարեւէր ու անմիջապէս ներս կը մտնէր, առիթ չտալով որ հետը խօսիմ: Իսկ ես, թէեւ հարազատութիւն մը կը զգայի իր հանդէպ, սակայն մէկ կողմէ յանցաւոր կը զգայի իր եւ իր ծնողներու հանդէպ, եւ միւս կողմէ ալ անհուն ցանկութիւն մը ունէի իր նուագը լսելու: Օր մը ալ, նոյն յարկի վրայ պատահաբար դէմ դիմաց յայտնուեցանք: Առջեւը կեցայ ու ըսի.

- Անունդ ի՞նչ է...

- Լուսիկ...

- Լուսիկ ջան՝ ամիսներէ ի վեր այստեղ եմ, ձեր տնից ջութակի ձայն չեմ լսում, իսկ իմ մօտ ընկերներս գալիս են եւ ուշ ատեն խանգարում ենք ձեր հանգիստը, ուզում էի ներողութիւն խնդրել քո ծնողներից...

- Ես շուտ եմ քնում միւս կողմի սենեակում, իսկ հայրիկն ու մայրիկը սիրում են ձեր երգերը...

Եւ առանց պատասխանի սպասելու, դարձեալ թեթեւ մը ժպտաց ու ներս մտաւ: Քանի մը օր ետք երբ այս մասին պատմեցի Սէյրանին ըսաւ,

- Ներողութիւն խնդրելով հարցը չի աւարտում: Ճիշդ չենք անում... հարկաւոր է մի բան մտածել:

Օրեր ետք, երբ երեկոյեան տուն վերադարձայ Տիկին Արմէնիկն ու Յասմիկը եռուզեռի մէջ... սեղան կը պատրաստէին: Երբ զարմացած հարց տուի.

- Ի՞նչ է կատարում այստեղ... չեմ հասկանում...:

Յասմիկը իր ջերմ ու կենսալից ժպիտով պատասխանեց.

- Քիչ յետոյ կ'իմանաս...

Քանի որ այդ օր իմ ծննդեան օրը չէր, մտածեցի որ մէկն ու մէկուն տարեդարձը պէտք է որ ըլլայ...

Հազիւ լուացուած ու հագուստս փոխած էի, երբ ներս մտան Սէյրանն ու Վիգէնը... աւելի զարմացայ...: Մինչեւ որ բացատրութիւն պահանջեմ եղածի մասին, ժամանեց նաեւ՝ Ռուբիկը իր անբաժանելի կիթառով միասին:

Ես շուարած էի, ու քիչ մըն ալ զայրացած... ըսի.

- Սէյրան ջան՝ չեմ հասկանում, այս ի՞նչ է կատարում այստեղ:

- Մովսէս ջան՝ հասկանալ պէտք չի... կարեւորը մի քիչ անց հարեւաններդ կգան եւ դու նրանցից ներողութիւն խնդրելու առիթ կ'ունենաս...

Ես յուզուած էի արդէն... անճրկած ոչ ըսելիքս գիտցայ եւ ոչ ալ ընելիքս, լռեցի...Սէյրանը ոտքի ելաւ եւ քանի մը րոպէ ետք ներս մտան Լուսիկն (իր անբաժանելի ջութակով) ու իր ծնողները, որոնք ոչ միայն կիրթ ու զարգացած մարդիկ կը թուէին ըլլալ, այլ նաեւ իրենց հերթին մեծ յարգանք կը տածէին Տիկին Արմէնիկի հանդէպ, որուն բնակարանը թէեւ շատ մեծ չէր, սակայն կրցանք տեղաւորուիլ սեղանի շուրջ:

Իմ ասպնջական ընթերցող՝

Փառաւոր երեկոյ անցուցինք այդ գիշեր, Ռուբիկը իր կիթառով, Լուսիկը իր ջութակով, մինչեւ գիշերուայ փոքր ժամերուն արթուն պահեցինք շէնքի բնակիչները... Արտակեդրոն ու արուեստագէտի յախուռն խառնուածքով օժտուած ըլլալով հանդերձ... այսպէս էր Սէյրանը, որուն բացառիկ տաղանդի մասին շատ բան խօսուած ու գրուած է: Ան թէեւ Հայրենիքի մէջ ըստ արժանւոյն գնահատուած ու լաւագոյն կերպարուեստագէտներէն մէկը կը համարուի, սակայն Սփիւռքի մէջ դեռեւս գրեթէ անծանօթ մը կը մնայ...:

Շատեր գիտեն, թէ ան ոչ միայն Արցախեան շարժումի ուղղակի մասնակիցներէն էր, այլ նաեւ լաւագոյն վերամշակողն ու ձեւաւորողը եղաւ Հայաստանի առաջին հանրապետութեան զինանշանի, զոր ընդունուեցաւ բոլորին կողմէ:

Սակայն,

Քիչեր միայն գիտեն, թէ Սէյրանը ոչ միայն դեռեւս Խորհրդային տարիներէն, «Թարգմանչաց Տօներ» շարժման կողքին կը գործէր ու կը պայքարէր յանուն Հայաստանի անկախութեան ու Արցախի ազատագրման, այլ նաեւ «Թարգմանչաց Տօներ»ու գործօն անդամներէն՝ Լութուիկ Խաչատրեանի, եւ գեղանկարիչ Կարեն Սմբատեանի հետ միասին, դրամահաւաքի մասնակցեցին ու խաչքար զետեղեցին Արամ Մանուկեանի լքուած ու անճանաչելի դարձած շիրիմին վրայ...:

Սէյրանը յանդուգն էր, ըմբոստ, յախուռն, անմիջական ու անկեղծ... ընկերասէր էր, ազգասէր ու խիստ մարդկային: Որովհետեւ (ըլլայ իր արուեստին թէ առհասարակ կեանքին մէջ) միշտ կը ձգտէր լաւագոյնին, մնաց յաւիտենական ընդդիմադիր մը, եւ ըմբոստացաւ բոլոր զարտուղի ապազգային ու հակամարդկային երեւոյթներու դէմ ու բազում թշնամիներ շահելով հանդերձ, մնաց «կատարելապաշտ» ու հաւատարիմ իր ազգային ու մարդկային սկզբունքներուն:

Իմ հետաքրքրասէր ընթերցող՝

հոս չեն վերջանար յուշերս Սէյրանի մասին, շարունակութիւնը այլ առիթով: Յատկապէս հակաւոր է խօսիլ իր եւ Սարեան մարդու եւ անոր արուեստի փոխյարաբերութիւններու մասին...:

Ուժեղ մարդու, ուժեղ հայի ֆենոմենը

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս



Գերմանացի մեծ փիլիսոփա Էմանուիլ Կանտն առանձնացրել է ազգերի մի խումբ, որոնց անվանել է՝ բարձրակարգ ազգեր: Նրա կարծիքով, դրանք այն ազգերն են, որոնք լավ առևտուր են անում, քանզի, ըստ փիլիսոփայի՝ առևտուրը համաշխարհային առաջընթացը ապահովող և իրենով պայմանավորող ամենալուրջ գործերից է: Եթե տվյալ ազգը կարողանում է գլուխ հանել առևտրից, ապա նա արդեն բնատուր օժտվածությամբ հանրություն է: Կանտն ասում էր, որ այդ ազգերն են. անգլիացիները, ֆրանսիացիները, գերմանացիները, հրեաները, և հայերը: Նրա ապրած ժամանակաշրջանում Արևմուտքում, ըստ երևույթին, աղոտ պատկերացում ունեին Չինաստանի, արաբական ազգերի, պարսիկների մասին: Համենայնդեպս, փիլիսոփայի միտքը կանգ է առել այս հինգ ազգերի վրա: Մենք հեռու ենք ազգային մնափառությունից և սեփական տեսակի ինքնավեհացումից, սակայն փաստ է նաև, որ երբեմն օտարներն ավելին են տեսնում, քան մենք՝ ինքներս: Կանտի դիտարկումն ուղղակի չէր կարող պատահական լինել և հենված չլիներ կյանքի և ազգերի որոշակի ճանաչողության վրա: Դարասկզբին անգլիական բանակի մի գնդապետ, Կովկասում ծառայությունն ավարտելուց հետո, վերադառնում է հայրենիք և իր կալվածքներում աշխատանքի է ընդունում մի հայ մարդու, ով խիստ բարեխղճությամբ է իր գործն անում, ծառայում է գնդապետին: Նա նաև առանձնանում է իր պարկեշտությամբ, համբերությամբ, գթասրտությամբ, խելքով և մարդկային բարձրակարգ այլ որակներով: Ինչ որ պահի այս հայ մարդն ու բրիտանացին միմյանցից գոհ ու շնորհակալ հրաժեշտ են տալիս իրար: Հայը մեկ այլ վայրում հիմնում է իր բիզնեսը և մեծ հաջողությունների է հասնում, իսկ գնդապետը հետագայում իր օրագրում գրում է՝ «**Եթե կասեն, թե հայերը ձեզ ծառայում են, չհավատաք: Հայերը ոչ ձեզ, ոչ էլ որևէ մեկին չեն ծառայում: Ծառայության անվան տակ նրանք տվյալ գործն են սովորում, որը հետագայում ձեզնից ավելի լավ են անելու...**»:

Սա շատ հետաքրքիր դիտարկում է, նույնիսկ իր ստվերոտ կողմերով, ուստի արժե այն ավելի ուշադիր դիտարկել: Բայց այս պահին մեր նպատակը չէ հայկական որակների գովաբանումը, մեզ հուզող հարցն այն է, թե հատկապես ե՞րբ է և ի՞նչով է հայն ուժեղ: Առաջին որակը, որ միանգամից տեսանելի է, **հայի աշխատասիրությունն է, պրպտելու, ելք գտնելու կարողությունը:** Օրինակ, գերմանացին ու չինացին աշխատասեր մարդու վառ օրինակներ են, բայց այդ որակն ամբողջ ուժով արտահայտվում է ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ մեջ, եթե չկան դրանք, վերջիններս, ի տարբերություն մեզ, անօգնական են: Ասվածի փայլուն հաստատումն է Հայաստանը խորհրդային շրջանում, ինչպես և Սփյուռքը: Հայ մարդը գիտե քրտնաջան աշխատել, ստեղծել, արարել և գոյատևել անգամ ամենաանբարենպաստ պայմաններում: Պատահական չէ, որ այդ շրջանում մեր երկիր այցելած օտարազգիները զարմացած էին հեռանում այստեղից: Վերջին տասնամյակներին մենք, ինչպես և մյուս ժողովուրդները, ենթարկվեցինք լիբերալ մտածողության և վարքագծի ավերիչ արշավանքներին: Ցավալիորեն, աշխատանքի մեջ իրեն դրսևորող ժողովրդի հատվածն օրեցօր նվազում կամ գուցե փոխակերպվում է. սա դեռ պետք է հասկանալ: Պետք է նաև նկատել, որ նյութապաշտության ցեցն արդեն ուտում է ինչպես շատերի, այնպես էլ մեր ազգային օրգանիզմը: **Հայն ուժեղ է իր քաջությամբ, ռազմիկի ըմբոստ ոգով**, թշնամիներին ջախջախելու իր խիզախությամբ ու տոկունությամբ:

Ի՞նչ եք կարծում, որտեղից հայտնվեցին մեր մարշալները, գեներալները և հարյուրից ավելի հայրենականի հերոս-հայորդիները: Չե՞ք մտածում չէ՞, որ այդ կոչումները տրվել են մեր սիրուն աչքերի համար: Ռուսական շովինիզմի ինչ-ինչ դրսևորումներ նաև այդ շրջանում կային, և եթե իրական արդյունքներ չլինեին, հայ ժողովուրդը չէր առանձնանա իր նվաճումներով:

ՔՊ-ական տկարամիտները Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ խորհրդային ճակատում ձեռք բերված հաղթանակները նսեմացնելով չեն էլ հասկանում, որ նսեմացնում են մեր ազգի ռազմական հսկաներին, քաջարի հայորդիներին, նրանց

սխրանքները: Սրանք ուզում են իրենք իրենց համոզել, թե Ֆաշիստական Գերմանիան Արևմտահայաստանը գրավելու և հայերին տալու խնդիր էր դրել: Եթե նիկոլական տգետները մի քիչ կարդացած մարդիկ լինեին, կիմանային, որ 1939 թվականից արդեն հայերը իբրև թե որպես սեմիթական ժողովուրդ ներառված էին բնաջնջման ենթակա ազգերի ցանկում: Ու եթե չլինեին Արտաշես Աբեղյանի նման մտավորականներ, ապա, առնվազն եվրոպահայությունը, կարող էր հայտնվել լուրջ հարվածի տակ: Այդ նրանց շնորհիվ էր, որ հնարավոր եղավ գերմանացի ազնիվ պատմաբաններ՝ Կարլ Ռոթի և այլոց միջոցով բազմաթիվ հոդվածներ հրապարակելով ֆաշիստական ռեյխի գաղափարախոսներին համոզել, որ հայերն արիական ծագում ունեն, նրանք բոլորովին էլ սեմիթներ չեն:

Արապապյաններն ու արծրունհովհաննիսյանները կարող են գնալ Ազգային ակադեմիայի գրադարան և ծանոթանալ «**Հայերն արեացիներ են**» գերմաներեն և հայերեն արժեքավոր աշխատության հետ, որտեղ զետեղված են 12-ից ավելի գիտական հոդվածներ՝ հայերի արիական ծագման վերաբերյալ: Եվ գուցե հասկանան, թե որքան ողորմելի են իրենց մեծամտությամբ ու տգիտությամբ: Իսկ արցախյան պայքարի, նրա հերոսների ու նվիրյալների մասին չխոսենք, դրանք բոլորը հայության քաջության նոր օրյա ակնառու մասնակիցներն ու վկաներն են: **Հայն ուժեղ է, երբ արդարամիտ է ու գթասիրտ,** և դժվար է գտնել լուրջ փաստեր, որոնցով հակառակը հաստատվի: Հայաստանում ապրող ազգային փոքրամասնության ներկայացուցիչները՝ լինեն դրանք եզդիներ, քրդեր, ասորիներ ու ռուսներ, հիմա էլ արդեն հնդիկներ, երբեք խտրական վերաբերմունքի չեն արժանացել: Գթասրտությունը և բարությունը մեզ համար ալընտրանք չունեցող որակներ են, և ոչ ոք չի կարող սա հերքել:

Բացե՛ք մեր հանճարեղ Վիլյամ Սարոյանի գրքերը և լուռ ըմբոշխնեք հայկական գթասրտությունը: **Հայերն ուժեղ են, երբ բարի են, կարեկցող ու մարդասեր** նաև այն երկրներում, ուր հանգրվանել են: Ինքս եմ ականատեսը եղել. Մոսկվայում, մի շենքում երեք հայ ընտանիք էր ապրում, ռուսները գիտեին, որ երբեք որևէ հարցում չեն մերժվի, եթե բախեն հայերի դուռը: Եվ ինչքան էլ դժվարանում են կյանքի պայմանները, և մարդիկ դառնում են ներփակված ու անտարբեր, միևնույն է, հայը չի օտարվում իր կարեկից մարդասիրությունից: Դա նրա էության գլխավոր հենասյուներից է, դա, ասես, հայի էության միջուկն է, նրա արյան բաղադրությունը:

Չին իմաստունի՝ Լաո Ցզիի խոսքը, որ «**եթե դու ատում ես, ուրեմն քեզ հաղթել են**» ասես նաև մեր օրինակով է ստուգված: Ուշագրավ է, որ հայ մարդը քաղաքական համակարգերում իրեն հարմարավետ չի զգում, դա, ասես, իր միջավայրը չէ: Զարմանալի բան է, եթե այլ երկրների պառլամենտներում և կառավարություններում կգտնենք հատուկենտ հայազգի ներկայացուցիչների, ապա ՌԴ պետդումայում ռուսաստանյան շուրջ երեք միլիոնի հասնող հայությունից ներկայացուցիչներ չկան: Ի տարբերություն հրեաների՝ հայությունը չի տենչում տեղ զբաղեցնել իշխանության օթյակներում. սա, իհարկե, մեր օգտին չէ: Մեր ազգի դրական որակների կողքին կան այնպիսիները, որոնց դրսևորումները տխուր հետևանքների են հանգեցնում: Նկատի ունեմ ինքնակազմակերպվելու, միասնաբար խնդիրներ լուծելու մեր թույլ կարողությունը: Ստեղծել խնդիրներ և ապա ստեղծածի ձեռքը կրակն ընկնել: Սրա ականատեսն ենք մեր օրերում, մեր հավաքական ընտրության օրինակով: Մեր ուժեղ որակները և թուլությունները լավ գիտեն թշնամիները և թշնամաբար տրամադրված ուժերը: Նրանք հասկացել են, որ հայությանը կազմալուծելու համար ճիշտը ներազգային կյանքը պառակտելն է: Ասել է թե՝ «**հայության դեմ բաց կռվում հաջողությունը երաշխավորված չէ, այստեղ նրանք ուժեղ են»:** Այս գիտակցությամբ ստեղծվեցին ՔՊ կոչվող ուժը և նրա առաջնորդը: Օտար ծառայությունների կողմից արվել էին ճիշտ հաշվարկներ՝ իշխանության բերել հայության մեջ եղած թուլամորթ ու թերարժեք մարդկանց, և հենց նրանք էլ կանեին անառիկ բերդը ներսից հանձնելու սև գործը: Ստրուկն էլ շուրջը հավաքեց ստրկամետների իր բանակը: Երեկ մարդը կատարելապես ոչինչ էր բոլոր առումներով, այսօր՝ երկրի բարձրագույն իշխանությունը ներկայացնող «գործիչ», հետևաբար, փոքրիկ, բայց կարևոր պտուտակի դերի մեջ նա իրեն լավ է զգում և պատրաստ է ամեն ինչի: Այստեղ մի փոքր կանգ առնենք և հասկանանք իշխանություն ֆենոմենը: Որպես կանոն, նորմալ, լիարժեք մարդիկ իշխանության չեն ձգտում: Շինարարները տներ են կառուցում, ֆերմերներն ու հողագործներն ամբողջ

հոգով, սրտով այգիների, արտերի, թռչնանոցներին տիրություն անելու հոգսերի մեջ են, ուսուցիչներն էլ կրթական գործընթացներից շունչ քաշելու ժամանակ չունեն: Արվեստագետներն ապրում են իրենց կտավներով ու բանաստեղծական տողերով, գիտնականի ու ճարտարապետի ի՞նչին է պետք չինովնիկի փողկապը: Իսկ իշխանության ճանապարհն ընտրում են քաղաքական, վարչական կարողությունների տեր և կառավարելու որակներով օժտված անհատները: Հակառակ պարագայում իշխանությունը միշտ թերարժեք, հրեշավոր հակումներով մարդկանց է բաժին հասնում: Բացասական հույզերը թափանցում են իշխանական տենդախտով վարակված մարդկանց էության մեջ և լիակատար գերիշխանություն հաստատում նրանց վրա: Միապետների և բռնակալների պատմությունները վկայում են, որ «դևերը» ագահության, հպարտության, գոռոզամտության, դաժանության և մյուս արատների տեսքով, ասես, դառնում են այդ մարդկանց էության անբաժան մասը և ոչնչացնում են հոգևոր հիմքը, կրծում մարդկայինի արմատները:

Այդպիսիները կուրացած են սեփական կերպարի գերկարևորությամբ: Նրանց դեպքում բանականությունը հիմնահատակ կորցնում է իր ռացիոնալ էությունը և վերածվում է խաղալիքի: Իշխանության անզուսպ ծարավը հոգեբանական կախման ծանր ձև է, սա շատ նման է թմրադեղերի ազդեցությանը, որի դեպքում մարդը հիմնովին կորցնում է աշխարհընկալման ճշգրիտ և բանական պատկերը: Անհնար է, որ քպ-ական հակազգային հոտը չհասկանա, թե իրենք ինչ են անում. գիտե, բայց գլխավոր ստահակից կես քայլ չի հեռանում: Հետևանքը լինում է այն, որ մարդը, ապրելով այս պատրանքների մեջ, կորցնում է հսկողությունն իր արարքների և խոսքերի հանդեպ, ինչպես նաև՝ բարոյական կողմնորոշիչները: Նրա բոլոր գործողությունները վերածվում են խաղի, որում ամեն բան բխում է իշխանության հանդեպ տենդագին հակվածությունից, ինչն էլ հանգեցնում է բռնությունների և այլ այլանդակ արարքների: Պատմում են, որ երբ մի անգամ Ստալինի սեղանին դրեցին մի «**հակախորհրդային վնասարարի**» գործ, և թվում է պետք է հետևեր «**գնդակահարել**» մակագրությունը, ի զարմանս բոլորի՝ հետևեց «**ներել**» որոշումը: Հարցին, թե ինչպե՞ս հասկանալ, Ստալինն ասում է՝ «**Մեկ մարդ ոչնչացնելու մեջ առանձնապես հաճույք չկա, ա՛յ, եթե լիներ մի քանի հազար, արդեն ուրիշ....**»:

Խնդիրն այստեղ նույնիսկ արատավոր գենետիկան չէ, խնդիրն այն է, որ մարդիկ արտոնել են այս խելագարներին, պսիխոպատներին և հրեշներին իշխելու իրենց վրա: Համոզված եմ՝ մտովի գնացիք Ազգային Ժողովի նիստերի դահլիճ և տեսաք ամբիոնի մոտ կանգնած, վերջերս հաճախ շիզոֆրենիայի նոպաներ ունեցող մի արարածի: Այս խելագարի մասին ավելացնելու բան այլևս չկա, ոչ էլ զայրանալու նոր առիթ է անհրաժեշտ: Պարզապես պարզ չէ, թե ինչու է կաթվածահարվել իրավիճակի մեջ բեկում մտցնելու մարդկանց կամքը: Թեև այս կամազրկության բացատրությունը ևս ինչ որ չափով հայտնի է: Աշխարհի

մի քանի լուրջ գիտական կենտրոնների իրականացված հետազոտությունները հաստատում են, որ մեր կողմից հնչեցված ցանկացած խոսք ուղիղ հրաման է իրականության համար: Այն ո՛չ մետաֆոր է, ո՛չ էլ բանաստեղծական կերպար: Խոսքերն ուժեղ վիբրացիաներ առաջացնող ալիքներ են, էներգետիկ կառույցներ, որոնք, համագործակցելով նյութի հետ, կարող են մի դեպքում առողջացնել մեր մարմինը, մեկ այլ դեպքում՝ քայքայել: Այս ալիքները թափանցում են մեր օրգանիզմ, որի 70%-ը ջուր է, իսկ ջուրը, ըստ հետազոտությունների, լավ հիշողություն ունի: Երբ մենք ասում ենք՝ «**ես կարող եմ**», ներքին ռեսուրսները միանում են, և սկսվում է մոբիլիզացիան, մեր օրգանիզմը ստանում է ցանկալի հրամանը, իսկ երբ ասում ենք՝ «**Ես ի վիճակի չեմ**», սկսում է հակառակ գործընթացը: Սա նշանակում է գործ ունենք կոնկրետ ծրագրերի հետ, այսինքն՝ ինչ էլ ասենք, դա մեզ ծրագրում է դեպի ուժը կամ թուլությունը, դեպի ակտիվություն կամ հոգեբանական կազմալուծում: Հավանաբար նույն բանն է տեղի ունենում ողջ հանրության հետ: Մեր հասարակությունը կարծես թե դեմ է առել այս՝ «**Ես ի վիճակի չեմ...**» հոգեբանական պատնեշին, և դա արգելակում է հանրային ինքնաապաքինումը: Որ պահին հայ մարդը և ապա հայ հանրությունը կասի՝ «**Ես ուժեղ եմ, ես այն ուժեղ հայն եմ և կարող եմ..**», հենց այդ պահից սկսած՝ ինքնաբերաբար կաշխատի նոր ծրագիրը, ի հայտ կգան նոր ռեսուրսներ:

Հավատում ենք, որ շատ մոտ ենք այս շրջադարձին, որովհետև **հայն ուժեղ է, երբ գիտակից է իր էությամբ ու նպատակներով: Վերջապես, հայն ուժեղ է, երբ շատ է հայ:** ■

Մեղադրուած ենք անցեալապաշտութեամբ

Պարգև Աւագեան
Աւարտած է Հալէպի պետ. համալսարանի Երկրաչաբական բաժնի Էլեքդրոն ճիւղը:
Վարած է ուսուցիչի և դաստիարակի պաշտօններ: Հրապարակած է յօդուածներ «Գանձասար» շաբաթաթերթին մէջ:

Անցեալը կը բնութագրէ ներկան, իսկ ներկան կը պայմանաւորէ ապագան: Ահա թէ ո՛ւր պէտք է փնտռել պատճառն ու պատճառականութիւնը այս ոչ նախանձելի մեր իրավիճակին:

Կը գրեմ ժամանակի մը մասին, ուր առկայ է մեր արիւնոտ անցեալը եւ տաժանակիր ներկան:

Այո՛, կան մնայունն ու անցաւորը, բայց պարտաւոր ենք մատնանշել յանցաւորը:

Հայրենի հայութեան ազգային յիշողութեան դէմ շղթայազերծուած նորովի արշաւը իր բուն դիտաւորութիւնները սկսաւ դրսեւորել այն օրէն, երբ ժամանակավրէպ հռչակեցինք փանթուրքիզմի վտանգը. Կը փորձեն մեր անցեալը մոռցնել, որպէսզի դիւրին ըլլայ մեր գալիքը տնօրինել: Իսկ այս բոլորին դէմ ծառացողները որակեցին ժողովուրդի թշնամիներ:

Պատմութիւնը իր ծալքերուն մէջ ունի երեւոյթներ, որոնք տակաւին անբացատրելի են եւ կամ նուազագոյնը ոչ ամբողջական բանաձեւում ստացած՝ գոյութիւն, ազատութիւն, անկախութիւն, ազգ եւ ազգութիւն, ժողովուրդ եւ պետութիւն:

Հայ ժողովուրդի պատմութեան մէջ ալ արձանագրուած են դէպքեր, թուականներ, տեղանուններ եւ անձնանուններ, որոնք իրենց արձանագրումէն ետք վերածուած են խորհրդանիշներու, իրենց մէջ խտացուած են պատմութեան յոյզեր, կեանք ու մահ, բայց մնաւանդ պատգամ եւ յանձնառութեան թելադրանք:

«Ժողովուրդից է ամէն յաղթանակ անկարող ղեկավարից ամէն պարտութիւն»:

28 Մայիս 1918-ը ծնունդ չառաւ պատահաբար, այլ վեհ նպատակի համար:

«Ձայն հայրենական»՝ իր բովանդակ խորքով կ'արտացոլացնէ մեր ժողովուրդի հերոսական պատմութիւնը, մաքառումներով լեցուն անոր անցած ճանապարհը, ազատ կեանքի հասնելու բուռն տենչանքը, գալիքի հանդէպ վառ երազանքն ու անխախտ հաւատքը: Ճակատագրական այդ ժամանակաշրջանին հայ ժողովուրդը թշնամի հակահարուած հասցնելու անսասան վճռականութիւն, երկաթեայ կամք ու եռանդ ցուցաբերեց: Հայութեան ոչնչացումին ձգտող ցեղասպան թուրքերուն դէմ. ու այդ բոլորը արդիւնքն էին հետեւողական աշխատանքի, խելամիտ ղեկավարման, անձնուիրութեան, արդարամտութեան ու համախմբուածութեան: Այս բոլորին ոգի եւ շունչ տուող խորհուրդը եւ պատգամը միշտ մնացած են անփոփոխ եւ խտացուած Ազատ, Անկախ, Միացեալ եւ Ժողովրդավար Հայաստան՝ քաղաքական-գաղափարական կարգախօսին մէջ, որուն խորհրդանիշը հայ զանգուածներուն համար հանդիսացած է եռագոյն դրօշը:

Ճիշդ է, որ անկախութեան խորհուրդն ու պատգամը իբրեւ սկզբունք մնացած են անաղարտ, բայց

թարմացած են քաղաքական մտածողութեան հոլովոյթին հետ:

Նախահիմքեր եւ զուգահեռներ. ահա թէ ինչո՛ւ անդրադառնալ 28-ը Մայիսին կը նշանակէ ուրուագծել հայ քաղաքական մտածողութեան երթը եւ ազգային իրականութեան կրած փոփոխութիւնը այդ գծով:

Լուրջ փոփոխութիւններ տեղի ունեցան. երէկի անխօս ու անտրտունջ ռայան վերածել արժանապատուութեան տէր մարդկային եւ ազգային իրաւունքներուն համար պայքարելու, կռուելու եւ զոհաբերուելու պատրաստ հայ գիտակից քաղաքացիի, երբեմնի ստրուկներէն կերտել ազատութիւնը ընտրած ասպետներու խումբեր եւ ազգային ազատագրական բանակ: Այսպէս միայն կրնանք տէր կանգնիլ մեր անցեալին ու գալիք ապագային: Այս տողերը չեն ենթադրեր բնական լուծումի մը կարօտ տագնապին տալ զգացական ցասումի մը տարողութիւնը, ոչ ալ բարոյական արդարացում մը գտնել ծնունդով իսկ բարոյական պայքարին: Ընդհակառակն ան կը ստանայ ընդհանրական բնոյթ եւ կ'ընդգծե Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գաղափարական-քաղաքական ուղեգիծին անշեղ ընթացքը: Դաշնակցութիւնը յաջողեցաւ բնական ու անբռնազբօս կապ ստեղծել նորահաս սերունդներու ու պատմութեան միջեւ, դաստիարակեց անմնացորդ Հայաստանին ծառայելու եւ այդ նպատակին համար նոյնիսկ գերագոյն զոհողութիւն յանձն առնելու ուխտով: Հոգեկան վերակառուցման այս ընդհանուր ոգին իր բարերար ազդեցութիւնը

ունեցաւ նաեւ մեր ազգային արժէքներու ընկալման ողջ համակարգին:

28-ը Մայիսը միշտ եղած է սրբազան ու բազմախորհուրդ թուական մը, որ կ'անջատուի հայոց պատմութեան յիշատակելի դէպքերու եւ դրուագներու շարքէն, իր խորհրդանշական բովանդակութեամբ եւ իր արժէքով ու կարեւորութեամբ կ'իմաստաւորէ այդ պատմութիւնը ամբողջ: Հիմնական անկիւնադարձ կը կազմէ ան հայ ազգի պատմաքաղաքական եւ ընկերային հոլովոյթին մէջ, իբրեւ հայ ազգային հաւաքական հոգեբանութեան վերափոխիչ, ու նո՛ր իրականութեան, նո՛ր իրականացումներու, նո՛ր թռիչքներու, նո՛ր հորիզոններու կերտիչ: Սակայն այսօր մեծագոյն սխալը այն է երբ կը մերժուի հայ ազգային-ազատագրական գաղափարական աւանդը իր ամբողջ տրամաբանութեամբ: Կը զարմացնէ այն իրողութիւնը՝ ոչ թէ աշխարհը, այլեւ նոյնիսկ հայերէն շատեր պատկերացում չունին իրենց իսկ իրական պատմութեան մասին:

Պատմութիւնը չի խնայեր ու իր ըսելիքը չի թաքցներ, իւրաքանչիւրը կ'արժեւորէ իր ծաւալած աշխատանքով ու արձանագրած արդիւնքով, որու լոյսին տակ կը բնորոշէ իր վճիռը:

Տնտեսական պայքարի վերնագրի տակ թաւալգլոր աւազախրումի մէջ են մարդկութեան հետ առնչուող բոլոր մարդու եզակի զգացումներն ու ապրումները:

Սպառնալիքներ, պատերազմներ ու միմիանց գոյութեան սպառնացող ահազանգներ: Պաղ ու տաք օրեր, վիճելի եւ անընդունելի տրամաբանութիւններ, ահ ու սարսափ, ցաւ ու մահ աւազախրուած տնտեսական իրավիճակ, անկայուն հորիզոններ ու կորսուած երազներ: Դժբախտաբար, քաղաքակրթական այս ճգնաժամը մենք ազգովին կը դիմագրաւենք մեր երկրի քաղաքական բեմի կոտորակուած պայմաններուն մէջ: Այստեղ կը հասնինք հանգուցային կէտի մը սկսելու համար ակնկալութիւններէն՝ տեսնելու համար թէ ինչ ստացանք: Հայաստանի եւ հայ ժողովուրդի վերաբերող առանձնաշնորհները եւ վերելքները պայմանաւորող զարմանահրաշ դէպքերը:

Մայիս 28-ը այս իմաստով, ոչ թէ միայն մեր պատմութեան որոշ մէկ ժամանակահատուածին իրադարձութիւնները կը խտացնէ, այլ նաեւ կը նշանակէ ազգային գոյութեան գիտակցութիւն, անոր համար անսահանջ պայքար: Իսկ մենք ազգովի՝ մեծ թէ փոքր, աշակերտ թէ ուսուցիչ, հոգեւորական թէ մտաւորական, բանուոր թէ զինուոր, գիտնական թէ շինական, պէտք է գիտակցինք թէ դիմագիծ կերտել, նկարագիր դարբնել, ազգայնանալն է խորհուրդը 28-ը Մայիսին. Հայրենակերտութեան հիմնական յատկանիշը, ոգին ու արժէքը: Հետեւաբար այս հաւաքականութիւնը իրաւունք չունի իր իսկ ժառանգը մսխելու:

Հայրենիք-սփիւռք օղակումի հարցը չի սահմանափակուիր միայն գաղափարական միասնութեան եւ կարելիութեանց համակարգեալ արդիւնաւորում առաջացնելու եզրերով:

Հանգրուանը կը պարտադրէ այդ միասնութեան տալ թէ քաղաքական-ռազմավարական եւ թէ պետական-կազմակերպական համապարփակ զօրաշարժի տարողութիւն:

Վերջապէս պէտք է զարգացնել այն մէկ ու միակ ճշմարտութիւնը թէ հայրենիք եւ թէ սփիւռք անբաժանելի մէկ ամբողջութիւն են եւ ըստ ամենայնի կոչուած են միասնաբար պայքարելու ու ազգի ապագան կերտելու: Բարոք, արդար եւ հաւասար կեանքը մեկնակէտ ունենալով: Ահա այս հաւատքի առիթով հայ քաղաքական միտքը խորապէս յուզող, փաստօրէն միայն վերջերս օրակարգի վրայ բերուած հիմնահարց է ժողովուրդ-իշխանութիւն յարաբերութեան կնճիռը: Ցաւ ի սիրտ կը հաստատենք սակայն, որ այս իշխանութեան գործի տարերոյթը երկիրը տարաւ բոլորովին այլ եւ յաճախ մեր երկրի գերագոյն շահերուն անյարիր ուղղութիւններով:

Յատկապէս այս օրերուն, երբ քաղաքական կեանքը ինք ամէն քայլափոխի զուգահեռներ կը գծէ: Ինչպէս օգտուինք, թէ ինչպէ՛ս պաշտպանուինք:

Եզրափակելով՝ համազգային շահերու պաշտպանութեան ի խնդիր միեւնոյն խրամատերուն մէջ միասնաբար պայքարելու եւ զոհուելու հարկը պէտք է ստեղծուի հայ քաղաքական մտքի բոլոր թեւերուն համար: Մենք պարտաւոր ենք կասեցնել ազգակործան այս ընթացքը, դասեր քաղելով անցեալէն, Հայաստանը ազատել օտարածին օրակարգով շարժող եւ թշնամիին շահերը սպասարկող խումբէն, ճիգ չխնայել պետութեան եւ հասարակութեան կայուն, առողջ զարգացման համար, ու այդպէս կառուցել մեր երկրի ապագան: ■

Ես, թէ՞ չես... դաշնակցական

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Հարցը կը խոռվէ զիս, ամեն անգամ, որ ինքնութեանս մասին կամայ-ակամայ կը խոկամ: Եւ հարցումը անընդհատ կը վերադառնայ՝ իրապէս դաշնակցակա՞ն եմ, թէ՞ ոչ: Կը վերադառնայ, մանաւանդ երբ իբր այդ կ՚ամբաստանուիմ, կը զրպարտուիմ կամ կը մեղադրուիմ, ուղղակի կամ անուղղակի, անհատաբար կամ հաւաքաբար՝ իբր կուսակցութիւն:

Բայց եկէք պահ մը կանգ առնենք, մոռնանք այդ յարձակումները, նոյնիսկ ցեխարձակումներն ու հարց տանք, թէ ի՞նչ կը նշանակէ «դաշնակցական»: Կասկած չկայ, թէ ան մէկէ աւելի իմաստներ ունի, նոյնիսկ անհամար իմաստներ կրնայ ստանալ, նայած ենթակային ու նայած դիտողին:

Ե՞մ դաշնակցական, որովհետեւ պարզապէս անդամ եմ ՀՅԴ կուսակցութեան: Սա ամենէն հիմնական ճամբան է դաշնակցական կոչուելու իրաւունք ունենալու եւ անշուշտ այդ իրաւունքն ալ պահելու համար՝ յարգելով այն պարտաւորութիւնները, որոնք սահմանուած են կանոնագրով:

Բայց անմիջապէս կարեւոր հարցում մը կը ցցուի առջեւդ. իրապէս դաշնակցակա՞ն է մեզմէ ամեն մէկը, որ, ինծի պէս, անդամ է կուսակցութեան, կը վճարէ իր անդամատուրքը կամ փոխառուած բառով՝ ցենզը, կը մասնակցի ժողովներու եւ կը ստանձնէ որոշ պարտականութիւններ: Չկա՞յ աւելի բան մը, առանց որուն այդ կարգապահութիւնը իմաստ ունենալէ կը դադրի, կը վերածուի զուտ մեքենականութեան մը կամ վարժանքի մը, թերեւս օգտակար բան մը ըրած ըլլալու կամ ալ ազգին ծառայած ըլլալու գոհունակութեան մը եւ այդքան: Նոյնիսկ հպարտութեան մը, եթէ ոչ սնապարծութեան մը: Չէ՞ որ ազգին կարելի է ծառայել առանց Դաշնակցութեան կամ որեւէ այլ կուսակցութեան անդամ ըլլալու:

Կրնանք ըսել, որ այդ կարգապահութենէն անդին ըլլալու է այլ մակարդակ մը, որ քեզ զանազանելու է ոչ-դաշնակցականէն: Ըստ ինծի՝ համոզումն է այդ: Ճիշտ է, անդամակցութեան նախապայմաններէն մէկն ալ, առաջինը, ընդունիլն է ՀՅԴ ծրագիրը: Բայց ընդունիլ կայ, ընդունի՛լ ալ կայ: Դաշնակցութիւնը կը դաւանի համամարդկային արդար համակեցութեան համակարգի մը, ուր կը յարգուին թէ՛ անհատներու եւ թէ՛ հաւաքականութիւններու մարդկային իրաւունքները, ներառեալ ազգային իրաւունքները՝ սեփական հողի, սեփական մշակոյթի, սեփական լեզուի եւ սեփական հաւատքի մարզերուն մէջ: Որքա՞ն կը գիտակցիմ իբր դաշնակցական այդ բոլորին: Որքա՞ն կեանքս կ՚ապրիմ այդ գիտակցութեան համապատասխան: Կը տեսնէք, թէ ինչպէ՞ս կ՚երկարի՛ հարցումներու շարանը:

Եւ արդեօք իրողութիւն մը եւս նկատի առնելու չե՞մ: Դաշնակցական ըլլալը մի՞թէ չ՚ընդգրկեր նաեւ ներքին, նկարագրային կամ բնաւորութենական գիծ մը, առանց որուն գուցէ անկարելի է կուսակցական ըլլալ, բայց մանաւանդ դաշնակցական ըլլալ: Խառնուածքի՞ հարց է թերեւս: Չեմ գիտեր, բայց եթէ Դաշնակցութեան ճամբով իր ժողովուրդին ծառայելը ապրումի չվերածուի, ամենօրեայ կեցութեան չվերածուի, ի՞նչ իմաստ կ՚ունենան համոզումն ու կարգապահութիւնը: Միւս կողմէ, ըլլա՛յ ապրումը, ըլլայ համոզումը բաւարա՛ր են Դաշնակցական ըլլալու համար՝ առանց կարգապահութեան: Այսինքն առանց անդամակցութեան:

Բայց այդ կախարդական բառը, մոգակա՛ն բառը ունի ուրիշ իմաստ մը եւս, որ չ՚առնչուիր կուսակցական ըլլալուն: Այդ որակական ածականը՝ «դաշնակցական», կարծէք ցուցիչն է «ազգայնութեան» (չեմ գործածեր «ազգայնականութիւն» բառը, զոր դժբախտաբար ներկայիս ոմանք կը նոյնացնեն «նացիոնալիզմին» հետ, որ մենք թարգմանելու ենք «ազգապաշտութիւն»): Շատերու համար երբ կը յայտարարեն կամ կ՚ընդունին, թէ դաշնակցական են, ըսել կ՚ուզեն, թէ կը բաժնեն Դաշնակցութեան գաղափարաբանութիւնը, գլխաւորաբար անոր ազգայի՛ն դաւանանքը: Այդ պատճառաւ ալ, նոյնիսկ ինչ-ինչ պատճառներով Դաշնակցութենէն հրաժարած կամ անկէ հեռացուած նախկին ընկերներ դաշնակցական կը համարուին կամ կը համարեն իրենք զիրենք եթէ յականէ անուանէ հակադաշնակցական կեցուածք չեն ցուցաբերած:

Վերջապէս երրորդ իմաստ մըն ալ կարելի է վերագրել այդ խորհրդաւոր բառին. երբ մէկը կը յանդիմանենք, ըսելով, թէ «դաշնակցական չե՞ս, ինչէ՞ն կը վախնաս, կամ ինչո՞ւ կը վարանիս», – ըսել կ՚ուզենք, թէ քաջ, խրոխտ կամ համարձակ չե՞ս:

Այս վերջին երկու իմաստները որոշ չափով կը համընկնին կուսակցականի համոզումով կամ խառնուածքով դաշնակցական ըլլալու գաղափարին հետ:

Նաեւ կը պատահի յաճախ, երբ մէկը կը հերքէ, թէ դաշնակցական է, այդ հերքումը կը մեկնաբանուի որպէս համոզումի պակաս, աւելի քան պարզապէս կուսակցութեան անդամակցութեան բացակայութիւն: Ոմանք նոյնիսկ կրնան հպարտանալ իրենց այդ չէզոքութեամբ:

Գալով ինծի, ես, եթէ իրենց տեղը ըլլայի... ամօթ պիտի չզգայի՞: ■

Նիկոլ Աղբալյան

Հ.Յ.Դ. ՕՐ

Հիմա արդէն կը բարձրանայ Հ.Յ. Դաշնակցութեան ալիքը. շփոթի ու շուարումի օրերը անցած են, ամէն տեղ, ինչպէս հոս. վերջ գտած է տեղատուութիւնը եւ սկսած արդէն մակընթացութիւնը:

Շուարումը անցած է, պէտք է համարել նոյնպէս եւ շլացումը՝ ներկայ Հայաստանի հանդէպ: Անոր այսօրուան ինքնակոչ վարիչները հայուն հարազատ զաւակները չեն. ասիկա կը զգան արդէն մինչեւ իսկ այս անպիտան արտասահմանի մէջ:

Մեր ժողովուրդի առաջնորդը Հ.Յ. Դաշնակցութիւնը եղած է եւ պիտի լինի՛ նորէն:

Նկատի առէք, որ երբ Հ. Հանրապետութիւնը քայքայուեցաւ, եւ հեռացան անհաջողութեան մատնուած դաշնակցական գործիչները, ոչ ոք ըսաւ՝ անկցի՛ Դաշնակցութիւնը: Եւ եկած է արդէն ժամանակը, երբ բոլորը պիտի ըսեն կեցցէ՛ Հ.Յ. Դաշնակցութիւնը: Պիտի ըսեն՝ որովհետեւ ան կերտած է Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի իտէալը: Որովհետեւ մեր ժողովուրդին բոլոր լաւագոյն ու առողջ տարրերը համոզուած են թէ ազատութեան մէջ միայն կրնան թօթափել ստրկութեան վերջին հետքերը եւ նո՛ր ազգ դառնալ: Որովհետեւ Դաշնակցութիւնը այս իտէալի զօրեղացման հարցը կը հետապնդէ եւ պիտի գայ վայրկեանը, երբ հայ ժողովուրդի փորձուած Առաջնորդը հրապարակ պիտի գայ իրագործելու համար հայ ազգային իտէալը՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանը:

Եկան մեր անկախութեան օրերը: Չկարծէք թէ այս ժողովուրդը սուիններով հնազանդեցաւ. չունէինք ոստիկանական ուժ ժողովուրդին պարտադրելու համար պետական իշխանութիւնը: Ժողովուրդը կը հնազանդէր Հ.Յ. Դաշնակցութեան բարոյական ուժովը:

Եւ երբ Հանրապետութիւնը խորտակուեցաւ, հայ ժողովուրդը ոչ մէկը դատապարտեց իր վարիչներէն: Ուշադրութիւն մի դարձնէք արտասահմանի զուռնա փչողներուն, որոնք իրենց գործէ՛ն ծանօթ են արդէն:

Հայաստանի ժողովուրդը Հանրապետութեան քայքայման օրերուն, դատապարտութեան ոչ մէկ խօսք ըսաւ: Անիկա գիտէր թէ Հ.Յ. Դաշնակցութիւնը իր հետ եղած, իր բախտը բաժնած է տագնապի ու անձկութեն օրերուն: Ժողովուրդը կ'երթար անոր ետեւէն: Գիտէր ան թէ, օրուան իր վարիչները ըրին ինչ որ հնարաւոր էր մարդկօրէն:

Երբ մենք դէպի Պարսկաստան կը քաշուէինք, այս ժողովուրդը, որ կրնար իր վարիչները ոչնչացնել ձորերուն մէջ, ինքնաբեր կերպով, թիերով ճամբայ բացաւ ձիւներուն մէջէն, որպէսզի վայրկեան մը առաջ ազատին անոնք: Եւ ամենէն աւելի իր անկումի օրերուն էր, որ երեւան եկաւ Դաշնակցութիւնը իր բարոյական ազդեցութեամբ:

«Յուսաբեր», 13, 15, և 17 Հոկտեմբեր 1925, ԺԱ. տարի թիւ 82, 83,84

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ,
ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՐԿԵՐ 3-րդ,
ՄՏԱԾՈՒՄՆԵՐ, էջ 371-372, ՊԷՅՐՈՒԹ 1967 թ.

«Անմահ գնդի» երթը. Երևան, 9-ը մայիսի, 2025 թ.

ԴՐՕՇԱԿ